



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հրատարակչությունը, չհետապնդելով որևէ եկամուտ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի համացանցային կայքերում ներկայացնում է իր հայագիտական հրատարակությունները: Գիրքը այլ համացանցային կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ հրատարակչության համապատասխան թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:



И. Г. ГАРИБЯН

ГЛАДЗОР

(Локализация. Раскопки. Эпиграфика)

Ի. Գ. ՂԱՐԻԲՅԱՆ

ԳԼԱԶՈՐ

(Տեղադրությունը, պեղումները,
վիճագիր արձանագրությունները)

Խմբագիր՝ քանաս. գիտ. թեկն., դոց. **Ս. Ա. Ավագյան**
Գրախոս՝ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս **Ա. Ն. Առաքելյան**

Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Ղարիբյան, Ի. Գ.

Ղ 471 Գլածոր. տեղադրությունը, պեղումները, վիմագիր արձանագրությունները.—Եր.: Երևանի համալս. հրատ., 1983. 244 էջ

Վերնախորագր. Երևանի պետ. համալս. Աշխատանքում ուսումնասիրվում են Գլածորի՝ Հայաստանի մշակութային խոշորագույն կենտրոններից մեկի պեղումների արդյունքները, ինչպես նաև՝ այնտեղ հայտնաբերված վիմագիր արձանագրությունները: Միջնադարյան հեղինակների աշխատություններում պահպանված տվյալների, հնագիտական և վիմագիր նյութերի համեմատական ուսումնասիրությամբ քննարկվում են Գլածորի համալսարանի հիմնադրման և գործունեության, միջնադարյան Հայաստանի մշակութային կյանքի որոշ առանձնահատկությունների հետ կապված հարցեր:

Նախատեսված է պատմաբանների, հնագետների, մանկավարժների համար: Կարող է օգտակար լինել ընթերցող լայն շրջաններին:

Ղ 0508000000—31
704(02)—83 ՄԻ № 19.5, 82

ԳՄԴ 68.3 (22)
9(C43)1

5

12-րդ դարի վերջին քառորդում սելջուկների տիրապետությունը Հայաստանում բավականին թուլացել էր: Դրանից օգտվեցին Սարգիս Մեծի որդիներ Զաքարե և Իվանե Զաքարյանները ու համեմատաբար կարճ ժամանակամիջոցում հայ-վրացական միացյալ բանակներով ազատագրեցին Հայաստանի մեծ մասը, որը ավելի ընդարձակ տարածք էր կազմում, քան 11-րդ դարի սկզբում Բագրատունիների և Սյունյաց թագավորությունները միասին վերցրած: Պատահական չէր, որ ժամանակակիցներն այդ իշխանությունը բնութագրել են «թագաորութիւն», «աշխարհակալութիւն», «աշխարհակալ տերութիւն», «պետական իշխանութիւն» արտահայտություններով: Զաքարե և Իվանե եղբայրները լինելով Վրաց պետության պաշտոնյաներ, իրենց համեմատաբար անկախ էին զգում ազատագրված հայկական հողերում: Երկու եղբայրներն իրար միջև բաժանեցին ազատագրված Հայաստանի գավառները: Իվանեին բաժին ընկավ Լոռու մի մասը, Այրարատյան նահանգի արևելյան շրջանները, Սյունիքի մի մասը, Վայոց ձորը, Սողքը և Գեղարքունիքը (վերջինիս կենտրոնը սկզբում ԴՎինն էր, իսկ 13-րդ դարի երկրորդ կեսից՝ Բջնին)¹: Ժամանակաշրջանի քաղաքական իրադրության մասին բազմամաստակ բանասեր Գ. Հովսեփյանը գրում է. «... երկու եղբայրներով (Զաքարե և Իվանե— Ի. Ղ.) երկու նյուրի բաժանված ավագ կամ ազդեցիկ ներկայացուցչի գերիշխանության տակ՝ առաջ բերին հայ իշ-

¹ Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», ՀՍՍՀ ԳԱ հրատ., Բ. 3, Երևան, 1971, էջ 541:

խանութունների մի ամբողջական ցանց նորանված երկրում»²:

Իվանե աթաբեկի իշխանության սահմաններում բավականին ազդեցիկ դիրք գրավեց 18-րդ դարի սկզբում Վայոց ձորում և հարևան շրջաններում հաստատված Խաղբակյան ավատական տունը, որը ծագում էր Խաչենից: Մխիթար Այրիվանեցին այդ մասին հաղորդում է. «Վասակ որդի Հաղբակայ եւ երեք որդիքն իր՝ Պապաքն, Մկրդէմն եւ քաջն Պոռո, եկեալ ի Խաչենոյ, բազում արիութիւնս ցուցին այլասեռս եւ բազում բարիութիւնս առ ազգս քրիստոնէից»³: Վասակ Խաղբակյանը նշանավոր գործարար էր և, բնականաբար, մասնակցել է Վայոց ձորի ու հարևան շրջանների, մասնավորապես՝ Գլինի և Բջնիի ազատագրմանը, որի համար ըստ Ստեփանոս Օրբելյանի վկայության, վրաց Գեորգի Լաշա թագավորի և Իվանե Զաքարյանի կողմից նշանակվել է «կողմնակալ ի Վայոց ձոր գաւառիս», իսկ ավելի ուշ՝ նաև սպարապետ: Խաղբակյանների իշխանության կենտրոնը Սրկղունիք ավանն էր (այժմ՝ Վերնաշեն)՝ Բոլորաբերդ ամրոցով հանդերձ⁴: Պատահական չէ, որ Վասակ Խաղբակյանի անունով մեզ է հասել Վայոց ձորում թողնված շինարարական երեք արձանագրություն, որոնցից մեկի մեջ ասված է. «վերստին նորոգեցաւ սուրբ եկեղեցիս յառաջնորդութեամբ հար Սարկաւագին, հրամանաւ Աստուածաւեր իշխանին Վասակա, որդւոյ Խաղբակա...»⁵: Խոսքը Թանահատի կամ Թանատի հնագույն եկեղեցու վերանորոգմանն է վերաբերում: Իսկ, ինչպես գիտենք, Թանատի վանական համալիրը գտնվում է Սրկղունիք—Վերնաշեն գյուղի տարածքում, 5 կմ նրանից հյուսիս-արևելք:

² Գ. Հովսեփյան, Խաղբակեանք կամ Պոռոշեանք հայոց պատմութեան մեջ, Բ հրատ., Անթիլիաս-Լիբանան, 1989, էջ 7:

³ Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն Հայոց, ի լույս ընծայեաց Մ. Էմին, Մոսկվա, 1860, էջ 65:

⁴ Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, 1910, էջ 397:

⁵ Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 19:

⁶ Տե՛ս աստ, արձ. № 1:

Վասակ Խաղբակյանը մահանում է 1228 թվին, և Իվանե Զաքարյանի, ապա Ավագի մոտ սպարապետության պաշտոնում նրան փոխարինում է Խաղբակյան իշխանական տան կրտսեր որդին՝ Պոռոշը, որը գործում է մինչև 1284 թվականը: Պոռոշ Խաղբակյանը հըմտս պետական ու ռազմական գործիչ էր ու քաջ զորավար: Եվ պատահական չէ, որ Վասակ Խաղբակյանի հաջորդների իշխանական տունը հետագայում կոչվեց Պոռոշի անունով:

Ինչպես հայտնի է, 1286—42 թվականներին մոնղոլները գրավեցին ողջ Հայաստանը: Զաքարյան Ավագը, ըստ պատմիչների վկայության, հնազանդություն հայտնեց մոնղոլներին, որի համար և էտ ստացավ իր բոլոր կալվածքները: Իսկ Պոռոշ իշխանը, լինելով Ավագ Զաքարյանի սպարապետը, մոնղոլների առաջնորդությամբ հաճախ կռվում էր նրանց թշնամիների դեմ: Չընայած ողջ Հայաստանը հեծում էր մոնղոլների անասելի հարկային լծի և քաղաքական ճնշման տակ, այնուամենայնիվ, Պոռոշի կառավարման տարիներին (1228—84 թթ.), համեմատաբար բարվոք վիճակ էր տիրում Վայոց ձորում և այն վայրերում, որոնք մտնում էին նրա ֆեոդալական տիրույթի մեջ: Այդ են վկայում ինչպես Պոռոշի և նրա հարազատների թողած վավերագրերը, այնպես էլ ժամանակի պատմիչների ու հիշատակարանների վկայությունները: Ահա թե ինչու 18-րդ դարի 80-ական թվականներին հայ հոգևոր մշակույթի ականավոր գործիչներն իրենց համար հովանավորություն են գտնում Պոռոշ մեծ իշխանի տիրույթներում: Նըման կարգի երևույթների թվին պետք է դասել Գլաձորի հոշակավոր համալսարանի կամ բարձրագույն տիպի դպրոցի հիմնադրումը հենց Պոռոշ իշխանի տիրույթում, նրա նստոցից՝ «դարբասից» ոչ շատ հեռու Թանահատի վանքում, որը, ի դեպ, 1215 թվականին վերանորոգվել էր Վասակ Խաղբակյանի (Պոռոշի հոր) ջանքերով և հովանավորությամբ:

Ժամանակակիցները, որոնք Վայոց ձոր էին գալիս Հայաստանի տարբեր նահանգներից, մինչև անգամ հեռավոր Կիլիկիայից՝ իրենց ուսումը կատարելագործելու,

մեծ գովեստով են խոսում Գլաձորի համալսարանի մասին: Օրինակ՝ Մկրտիչ գրիչը 1298 թվին Գլաձորի դրարոցը անվանում է «Երկրորդ Աթենք պանծալի», Տիրատուր Կիլիկեցին 1309 թ.՝ «Մեծ դպրատուն», Մխիթար Երզնկացին 1314 թ.՝ «Մայրն իմաստից Գլաձոր», Հակոբ Թագորցին 1318 թ. գրում է. «Համարձակիմ զսակոչել երկրորդ Աթենք և մայրաքաղաք ամենայն իմաստից», Կյուրեղ գրիչը 1321 թ. Գլաձորն անվանում է «հռչակատր, սուրբ մենաստան համալսարան»:

Գովեստի բազմաթիվ խոսքեր են հղված նաև համալսարանի ուսուցչապետների հասցեին: Այսպես, Ներսես Մշեցին, համալսարանի հիմնադիրը, բնութագրվում է որպես «Մեծ հռետոր», «Սուրբ այր», «Ամենագով վարդապետ», «Արդիւնակատար վարդապետ» և այլն: Եսայի Նչեցուն, որը հաջորդեց Ներսեսին վերջինիս մահից հետո, Մկրտիչ Թեղենեաց րաբունին անվանում է. «հոգեհանձար, գերիմաստ րաբունապետ և հայր հոգևոր», կամ՝ «քաղցրահանձար փիլիսոփա և րաբունի... տիեզերալոյս րաբունապետ», իսկ Հակոբ Թագորցին՝ «Ներհուն հռետոր, հանուր Հայկազեանց և լուսատու ջահ մանկանց եկեղեցույ» և այլն:

Չնայած Գլաձորի բարձր դպրոցի կամ համալսարանի մեծ համբավին, բանասիրության մեջ երկար ժամանակ չլուծված էին մնում համալսարանի տեղադրության, հիմնադրման ու գործունեության հանգամանքները: Հայագիտության համար անորոշ էր, թե Պոռչյանների տիրույթներում պահպանված բազմաթիվ հուշարձաններից որի ավերակներում պետք է որոնել «Երկրորդ Աթենք պանծալի դպրատունը» և նրա ականավոր գործիչների նշխարները:

Մշակութային այդ նշանավոր օջախի տեղադրության հետ կապված հարցերը լուծելու համար Եղեզնաձորի շրջանաչին կազմակերպությունները 1969 թվականին դիմեցին Երևանի պետական համալսարանի ղեկավարությանը՝ պեղումներ սկսելու այն հնավայրում, որտեղ հնարավոր էր, որ տեղադրված լիներ Գլաձորի համալսարանը:

Այդ նպատակով համալսարանի հնագիտության,

ազգագրության և աղբյուրագիտության ամբիոնը առանձնացրեց մի արշավախումբ, որի առջև խնդիր դրվեց ուսումնասիրելու մատենագրական աղբյուրներում, պատմագիտական ու բանասիրական ուսումնասիրություններում և վիմական արձանագրություններում եռած բոլոր այն տեղեկությունները, որոնք վերաբերվում են Գլաձորի համալսարանին և կարող էին նպաստել որոշելու, թե որտեղ է գործել համալսարանը, ինչպես նաև այդ նպատակով հնագիտական պեղումներ սկսելու առավել հավանական համարվող հնավայրերում:

Արշավախումբը գրավոր աղբյուրներին և ուսումնասիրություններին ծանոթանալուց հետո, 1970 թվականի մայիս-հունիս ամիսներին մի քանի անգամ այցելեց Եղեզնաձորի շրջան, տեղազննությամբ և հետախուզական պեղումների օգնությամբ ծանոթացավ Գլաձորի համալսարանի տեղադրության հնարավոր հնավայրերի հետ:

Ի վերջո որոշվեց պեղումներ սկսել Եղեզնաձորի շրջանի Վերնաշեն գյուղից 5—6 կմ հյուսիս-արևելք գտնվող Թանահատի վանական համալիրի տարածքում, առավել հավանական համարելով Գլաձորի համալսարանի տեղադրությունը հենց այդ հնավայրում:

Պեղումների ընթացքում բացվեցին ավերված բազիլիկ եկեղեցու (5—7-րդ դդ.) և 13-րդ դ. կառուցված աշխատասենյակ-խցերի հիմնապատեր, գավիթներ, սեղանատուն, տնտեսական նշանակություն ունեցող շենքեր, թոնիքներ, խմոր շաղախելու քարե մեծ տաշտեր, սանդղեր և նյութական մշակույթի այլևայլ մնացորդներ:

Այդ ընթացքում ի հայտ եկան 50-ից ավելի նախկինում անհայտ տապանաքարեր ու խաչարձաններ, որոնց մի մասի վրա կան թվագրված արձանագրություններ: Դրանց թվում են, մեր համոզմամբ, Գլաձորի համալսարանի աչքի ընկնող գործիչ-ուսուցչապետներից մի քանիսի՝ Դավիթ Սասնեցու, Գրիգորի, Ստեփանոսի, Սարգսի և ուրիշների տապանաքարերը՝ համապատասխան արձանագրություններով:

Պեղումների ընթացքում գտնվեցին շուրջ 50 վիմական արձանագրություններ (ամբողջական կամ թերի),

որոնցից մոտ մեկ տասնյակը լրացնում ու ամբողջացնում է նախորդ ուսումնասիրողների կողմից մինչ այդ հրատարակած Քանախատի վանքի արձանագրությունների բովանդակությունը կամ ճշգրտում դրանք: Մյուսները նոր վիճագրեր են, որոնք լույս են սփռում Քանախատ—Գլաձորի վանական համալիրի տնտեսական և մշակութային գործունեության ուսումնասիրության վրա:

Ներկա աշխատության մեջ չենք անդրադառնալու Գլաձորի համալսարանի հիմնադրման, նրա գործունեության, դասավանդվող առարկաների, դասագրքերի, այնտեղ արտագրված ձեռագիր աշխատությունների ու մանրանկարչական դպրոցի, հայ գիտական մտքի ապարեզում այդ համալսարանի ունեցած դերի և նշանակության հարցերին, հաշվի առնելով, որ հրատարակվել և հրատարակվում են մի շարք աշխատություններ՝ նվիրված այդ խնդիրներին:

Սույն աշխատությունը հիմնականում կրում է հնագիտական-վիճագրագիտական հետազոտության բնույթ: Այն բաժանված է երկու մասի: Առաջին մասում քննարկվում են Գլաձորի համալսարանի տեղադրության հարցի վերաբերյալ ուսումնասիրողների կողմից արտահայտված բոլոր տեսակետները, տեղում կատարված հնագիտական պեղումների արդյունքները և հայտնաբերված հնագիտական առարկաները, ինչպես նաև պատմական, վիճագրական, ճարտարապետական և այլ տեղեկությունների ու նորահայտ նյութերի վերլուծությանը փորձ է արվում հիմնավորելու, որ համալսարանը տեղադրված է եղել Քանախատի վանքում: Աշխատության երկրորդ մասը նվիրված է Քանախատ—Գլաձորում ինչպես նախորդ ուսումնասիրողների, այնպես և մեր կողմից հայտնաբերված վիճական արձանագրությունների վերծանություններին համապատասխան մեկնաբանություններով: Բնագրերի վերծանություններն ավելի հավաստի և ստուգելի դարձնելու նպատակով ներկայացված են դրանց գրչանկարները և լուսանկարները:

Գ Լ Ա Ջ Ո Ր Ի Հ Ա Մ Ա Լ Ս Ա Ր Ա Ն Ի
Տ Ե Ղ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը Ե Վ Պ Ե Ղ Ո Ւ Մ Ն Ե Ր Ը

Միջնադարյան Հայաստանի հռչակավոր հոգևոր-կրթական օջախներից մեկի՝ Գլաձորի համալսարանի կամ բարձրագույն տիպի դպրոցի տեղադրության հարցով հարևանցիորեն զբաղվել են Ղ. Ալիշանը և Ե. Լալայանը: Ելնելով իրենց ձեռքի տակ եղած կցկտուր տեղեկություններից և նպատակ չունենալով խորամուխ լինելու հարցի քննության մեջ, նրանք հանգում են իրար հակասող եզրակացությունների: Մասնավորապես Ալիշանը այս հարցի առթիվ գրում է. «... ի հարատյ Պեշքէնտ բերդի և ի հիւսիսյ Պիւպիլօյան գեղջ մղոնաւ չափ հեռի յերկոցուն. եւս յանձնիկ միջոցի երկուց վտակաց գետակին՝ նշանակի ամայի գեղատեղի Քէօլլասար կամ Քուլիպինա անուն, որ թոյի նշանակել զԳայլեձոր կամ Գայլիձոր կամ Գայլաձոր մեծահոշակ մեծաստանի ԺԳ—Դ դարս, յաճախ եւս գրեալ Գլաձոր»¹: Ինչպես տեսնում ենք Ալիշանի կարծիքը նախնական, ենթադրական բնույթ է կրում:

Իսկ Երվանդ Լալայանը մի դեպքում գրում է. «Ս. խաչ վանքի արևմտյան կողմը, մոտ 2 վերստ հեռու, Մալիշկայի գետակի երկրորդ վտակի ձախ ափին գտնվում է Ղարավանք (Սև վանք) գյուղը, որ յուր անունն ստացել է մոտի տափարակ բլրակի վրա սև քարերով շինված վանքից: Այս, թուրքերից Ղարա-վանք կոչված մեծաստանը, ԺԳ դարում շինված Քանախատի վանքն է, որ ամփոփված է 735 թ. Մոզում նահատակված Ստեփանոս եպիսկոպոսի մարմինը»²: Մի քանի էջ հետո Լալայանը ավելի որոշակի գրում է. «Օրթաքեճտից դեպի հյուսիս-արևելք՝ ձորակի մեջ գտնվում է ԺԳ—ԺԴ դարերում մեծահոշակ Գլաձոր կամ Գայլաձոր մեծաստանը, որ այժմ Ղարա-վանք է կոչվում»³:

¹ Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 130:

² Ե. Լալայան, Ծարոյր-Դարալագեազ գավառ, Ա մասն, Վայոց-ձոր, տե՛ս «Ազգագրական հանդես», գիրք 12, 1904, Թիֆլիս, 1905, էջ 267:

³ Նույն տեղում, էջ 271:

Ինչպես նկատելի է, թե Ե. Լալայանը և թե Ղ. Ալիշանը աղբյուրների համընթացումը քննություն չեն կատարում:

Մեկ այլ հայագետ՝ Գարեգին Հովսեփյանը, հանգամանորեն քննարկելով Գլաձորի բարձրագույն դպրոցի հետ կապված բազմաթիվ հարցեր, ըստ էության չի անդրադառնում նրա տեղադրման հարցին, միայն մի առիթով գրում է. «Վայոց ձորում Պոռչյանց գլխավոր կենտրոնը Արկղունյաց լեռներից բխած վտակի հովիտն էր, Արկղունք ավանով և Բոլորաբերդով, որի արևելյան կողմը գտնվում էր նշանավոր Աղբերից վանքը կամ Գայլեձորը...»⁴: Այս բոլորը առանց հատուկ մատենագիտական քննության շարադրելուց հետո մեկ այլ դեպքում իբրև ընդհանուր եզրակացություն ավելացնում է. «Այս վանքի (Գլաձորի— Ի. Ղ.) պատմությունը տարօրինակ սկիզբ և վախճան ունի: Անհայտությունից հանկարծ երևան է գալիս ԺԳ դարի 80-ական թվականի սկզբում իբրև Արեվելյան Հայաստանի մտավոր կենտրոն, և հանկարծ չքանում անհայտության մեջ ԺԴ դարի կեսին: Անորոշ է նույնիսկ տեղը. այն ավերակները, որոնք Գլաձորի մնացորդները պիտի լինեին, չնչին են, նյութի հետ կապ չունեցող և ոչինչ չլուսաբանող երկու արձանագրության բեկորներով (ընդգծումը մերն է— Ի. Ղ.): Եկեղեցին շինված է հասարակ քարով, շրջապատում էլ չկան ընդարձակ ավերակներ, ինչպես ենթադրել կարելի էր վանքի մեծ հոշակից»⁵:

Գլաձորի համալսարանի տեղադրության հարցի քննությունը այս վիճակում մնաց մինչև 1956 թ., երբ «Էջմիածին» հանդեսում հոդվածով հանդես եկավ արվեստաբան Ա. Ավետիսյանը⁶: Հեղինակը առաջ անցնելով իր նախորդներից, ավելի խորամուխ եղավ հարցի քննության մեջ և առաջնորդվելով աղբյուրների ընձեռած կցկտուր տեղեկություններով, փորձեց հիմնավորել Ե. Լալայանի տեսակետը, թույլ տալով մաս որոշ անճշտություններ⁷:

⁴ Գ. Հովսեփյան, Խաղրակեանք կամ Պոռչյանք հայոց պատմութեան մեջ, Բ. Անթիլաս-Լիբանան, 1969, էջ 19:

⁵ Նույն տեղում, էջ 251:

⁶ Ա. Ավետիսյան, Գլաձորի համալսարանը, «Էջմիածին», 1956, №№ 4—5, էջ 82—92, նույն հեղինակի՝ Հայկական մանրանկարչության Գլաձորի դպրոցը, Երևան, 1971, էջ 9—19:

⁷ Ա. Ավետիսյան, Գլաձորի համալսարանի տեղադրության մասին, Պատմա-բանասիրական հանդես, 1967, № 1, էջ 157—160: Հեղինակը գրում է. «Այժմ նրա տեղում (7—8-րդ դդ. վանքի—Ի. Ղ.) միայն հետքեր ու մնացորդներ կան մի եկեղեցու, որն իբր կառուցվել է 1273 թ. Պոռչ իշխանի և նրա որդիների կողմից, որպես մենաստան սբ. Ստեփանոսի և իրենց սոմամալու Պոռչ

Ա. Ավետիսյանի այդ անճշտությունները նշանակետ դարձրեց մեկ այլ հետազոտող, որը սկսել էր զբաղվել Գլաձորի գոյության դպրոցի ուսումնասիրությամբ⁸. և ԳԱ Տեղեկագրի 1965 թ. № 10-ում հրատարակած իր «Պատմական աղբյուրներում Գլաձորի հիշատակության հարցի շուրջը» հոդվածում Ավետիսյանի տեսակետը համարեց «հակապատմական», «հակապատմական» և ցուցում տվեց՝ «քանասիրական հետախուզումներում քավական չէ միայն մտահայեցողությամբ առաջնորդվելը. դա շատ սայթաքուն ուղի է»⁹: Բայց Խաչերյանը որևէ նոր բան չավելացրեց եղած փաստերի վրա և շատ երկչուտ մի տեսակետ առաջ քաշեց Գլաձորի համալսարանի տեղադրության վերաբերյալ. «Ի դեպ այս ամառ (1965 թ.) մենք նույնպես եղանք Եղեգնաձորի Գլաձոր գյուղում, Թանահատի վանքում և Գլաձորի համալսարանի ենթադրված տեղանքում: Զրույց ունեցանք Գլաձոր գյուղի ամենահասակավոր ծերունիների

իշխանի հիշատակը հավերժացնելու համար, իսկ եկեղեցուն կցված մատուռը (հյուսիսային կողմից) թվագրված է 1279 թ. (այստեղ վկայակոչում է Գ. Հովսեփյանին, սակայն ասվածը իրականությանը չի համապատասխանում— Ի. Ղ.): Եղել է նաև մի ուրիշ կառուցվածք հարավային կողմից, որից մնացել են միայն աննշան հետքեր: Մեր կարծիքով, եկեղեցին կառուցված է եղել ավելի վաղ՝ 1256—1260»: Սույն նախադասության համապատասխան ծանոթագրության մեջ Ա. Ավետիսյանը շարունակում է. «Ի միջև այլոց եկեղեցու թվագրման հարցը կարող է մանրագին ստուգման, որովհետև եղած տեղեկությունները բացահայտ հակասական են: Եթե վանքը կառուցված լիներ 1278 թ., ինչով բացատրել ապա նրա պատերին գտնվող վաղ շրջանի արձանագրությունները, որոնք գալիս են 1251 թ. դեռևս: Այդ արձանագրություններն էլ, մեր կարծիքով, իրենց բնույթով հաստատում են, որ նրանք ոչ մի կերպ չեն կարող գրված լինել հետագա շրջանում: Այդ պատճառով էլ մենք ճիշտ չենք համարում մի շարք հեղինակների պնդումներն այն մասին, թե սբ. Ստեփանոսի եկեղեցին կառուցված է եղել 1273 թ.» (Նույն տեղում, էջ 160):

Հեղինակը իզուր է մեղադրում նախորդ ուսումնասիրողներին: Իրականում Ավետիսյանը ինքն է սխալվում, որովհետև սբ. Ստեփանոսի առունը կող եկեղեցին իրոք կառուցված է 1273 թ. (տե՛ս աստ, արձ. № 6), իսկ նրա պատերին էլ չկան 1251 թ. կամ ընդհանրապես 1273 թ. առաջ փորագրված թվակիր արձանագրություններ: Բոլորովին այլ հարց է, որ հուշարձանի տարածքում և հատկապես նրանից հարավ գտնվող բլրակի վրայի գերեզմանատանը իրոք կան 1215, 1218 և այլ թվականների արձանագրություններ, որոնք միայն վկայում են 1273 թվականից առաջ տվյալ տարածքում գոյություն ունեցած բնակավայրի վերաբերյալ: Այդ մասին է հիշատակում նաև Ստեփանոս Օրբելյանը: Հետևաբար այստեղ որևէ հակասություն գոյություն չունի:

⁸ Լ. Խաչերյան, Պատմական աղբյուրներում Գլաձորի հիշատակության հարցի շուրջը, տե՛ս ԳԱ Տեղեկագիր, 1965, № 10, էջ 87—98:

⁹ Նույն տեղում, էջ 98:

հետ, վերջիններս այն կարծիքն արտահայտեցին, որ Գլածորի համալսարանի տեղանքը պետք է լինի այն վայրում, որտեղ այժմ կառուցված է Գլածոր գյուղի դպրոցը, հենց Գլածոր գյուղի սկզբին՝ Եղեգնաձորի կողմից: Այսպես, 86 տարեկան Դավիթ Դավթյանը, որն ամենահասակավորն է Գլածոր գյուղում, ասում էր, որ ինքը ավանդաբար պատերից լսել է, թե Գլածորի համալսարանը գտնվել է հենց Օրթաքենդում, որտեղ այժմ կանգնեցված է Գլածորի դպրոցը և հետագա ժամանակներում թուրքերը քարուքանդ են արել այն: Նույնն էին հավաստում նաև մյուս ծերունիները¹⁰:

Նկատենք, որ Գլածոր գյուղի ժամանակակից բնակիչների նույնիսկ ամենահեռավոր նախնիները խոյեցի և սալմաստեցի են, որոնք այստեղ (Օրթաքենդ—Գլածոր— Ի. Ղ.) են եկել 1828 թ. Թուրքմենչայի պայմանագրի հետևանքով ու բնակություն հաստատել վաղուց արդեն լքված տեղում և, բնականաբար, նրանք չէին կարող հիշողություններ պահպանել Գլածորի համալսարանի տեղադրության վայրի մասին:

Այնուհետև, 1967 թ. բազմավաստակ վիճագրագետ-պատմաբան Սեդրակ Բարխուդարյանը¹¹ հրատարակեց իր «Դիվան հայ վիճագրության» արժեքավոր ժողովածուն, որտեղ պահանջի թելադրանքով այլ հարցերի թվում անդրադարձավ նաև Գլածորի տեղադրության խնդրին: Գլածոր—Թանահատ նույնացման վարկածի դեմ նա առաջ քաշեց հետևյալ նկատառումները.

1. Գլածորի վանքն ունեցել է մի երկրորդ անուն. դա Աղբերց վանքն է:

2. Գլածորում գրված բազմաթիվ ձեռագրերի հիշատակարանների մեջ այդ վանքը հիշվում է առավելապես Գլածոր կամ Գայլիձոր անուններով:

3. Թանահատի վանքի պատերին փորագրված արձանագրությունների և ձեռագիր հիշատակարանների մեջ այս վանքը միայն իր Թանահատ կամ Թանատ անունով է հիշատակված:

4. Թանահատի վանքի գերեզմանատան բազմաթիվ արձանագրությունների և տապանագրերի մեջ չի վկայված Գլածորի դպրոցի նշանավոր գործիչներից որևէ մեկի անունը:

14 15

Գլածորի համալսարանի տեղադրության հարցով զբաղվել է նաև պատմաբան, պրոֆ. Ա. Աբրահամյանը: Ելնելով ձեռքի տակ եղած գրավոր աղբյուրների ընձեռած հնարավորություններից, հատկապես հիմք ընդունելով Թանահատում սբ. Ստեփանոս և սբ. Նշան հուշարձանների գոյությունը, որոնք համընկնում էին նաև Գլածորի համալսարանի գրիչների հիշատակարաններում վկայված եկեղեցիների հետ, նա համերաշխ է Ե. Լալայանի, Ա. Ավետիսյանի կարծիքներին, այսինքն հիմնավորում է Թանահատ—Գլածոր նույնության վարկածը:

Հարցի ուսումնասիրման պատմությունը այս վիճակում էր, երբ Երևանի պետական համալսարանի հնագիտության և աղբյուրագիտության ամբիոնի հնագիտական արշավախումբը տողերիս հեղինակի գլխավորությամբ 1969 թվին ձեռնամուխ եղավ այդ գործին¹²:

Արշավախումբը պեղումներ սկսելուց առաջ մանրամասն ուսումնասիրեց պատմական սկզբնաղբյուրներում պահպանված կրկնապատկերները¹³, ծանոթացավ ուսումնասիրողների փաստարկներին, ապա նաև հնավայրերին:

Մատենագրական աղբյուրների ուսումնասիրությունից պարզվեց հետևյալը.

1. Գլածորի համալսարանը 1282—91 թվականների ընթացքում երկու անգամ հիշատակվում է Աղբերց վանք անունով,
2. 1291—1302 թթ. ընթացքում՝ Աղբերց վանք և «մականուն Գլածոր»,
3. 1302-ից հետո՝ միայն Գլածոր կամ Գայլաձոր:
4. Գլածորը հիշատակվում է սբ. Ստեփանոսի վանքին կից, ուր թաղվել է 735 թ. սպանված Սյունյաց Ստեփանոս եպիսկոպոսը:

¹² Հնագիտական արշավախմբին տարբեր ժամանակներ մասնակցել են ճարտարապետ Սարգիս Մաթևոսյանը, հնագիտության և ազգագրության ամբիոնի կարիների վարիչ Հրաչյա Ասմարյանը, պատմության ֆակուլտետի հնագիտության բաժնի նախկին ուսանողներ Վ. Վարդանյանը, Վ. Թաթևյանը, Գ. Սարգսյանը, Հ. Մարգարյանը, ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատակիցներ Ս. Խաչատրյանը, Հ. Պետրոսյանը, Հ. Մելքոնյանը, լուսանկարիչ Ռ. Հակոբյանը և ուրիշներ:

¹³ Հեղինակը խորապես շնորհակալ է Մատենադարանի նախկին տնօրեն, հանգուցյալ ակադ. Լ. Խաչիկյանից և աշխատակից Ա. Մաթևոսյանից, որոնք իրենց ձեռքի տակ եղած ձեռագիր հիշատակարանները տրամադրեցին մեզ՝ ծանոթանալու Գլածորի մասին եղած և դեռևս չհրատարակված նյութերին:

¹⁰ Նույն տեղում, էջ 95:

¹¹ Տե՛ս «Դիվան հայ վիճագրության», պրակ 3, կազմեց Ա. Բարխուդարյանը, Երևան, 1967, էջ 72: Այնուհետև՝ Դիվան 3:

5. Վանական կենտրոնի գլխավոր եկեղեցիները կոչվել են **սբ. Ստեփանոս** և **սբ. Նշան**:

6. Ըստ Գլաձորի սաների հիշատակարանների Գլաձորի դրպոցը և վանքը ոչ թե ձորի մեջ էր, այլ՝ «բարձրադիրտակ մեհաստան Գլաձոր, որ յանհմուտ եւ գնչու արանց Գալլաձոր ասի»:

7. Ստեփանոս Օրբելյան պատմիչը, որը սովորե է Գլաձորի դպրոցում, իր «Պատմութիւն անհանգիւն Սիսական» է 'լում չի հիշում ոչ նրա ստույգ անունը և ոչ էլ տեղը:

8. Գլաձորի վանքը և համալսարանը տեղավոր ված է եղել Պոռշյան ֆեոդալական տան տիրույթներում և նրա ծուխերի հիմնական մասը հոգացել են Պոռշյանները:

9. Եվ, վերջապես, ինչպես Գ. Հովսեփյանն է ասում, 1280-ական թվականներից վանքը հանկարծակի հառնում է ր մեծ համբավով, և նույնպիսի հանկարծակիությամբ էլ 1340-ական թվականներից անհիշելի դառնում:

Վայոց ձորում արշավախմբի կողմից նախ հետազոտման և նթարկվեց Ղ. Ալիշանի և Գ. Հովսեփյանի ենթադրած ւայրը: Պարզվեց, որ այնտեղ պահպանված ավերակները որևէ առնչություն չեն կարող ունենալ Գլաձորի համալսարանի հետ: Ճեղում պահպանված չնչին ավերակները հասարակ քարից են, անշաղախ շարված և ըստ ճարտարապետ Ս. Մաթևոսյանի, իրենցից ներկայացնում են քրիստոնեական վաղ շրջանի (3—4-րդ դդ.) կառույցներ: Օրջապատում չկա ոչ մի ուրիշ հուշարձանի հետք, նույնիսկ դրա համար տեղ չկա: Բացակայում են անգամ 13—14-րդ դարերին այնքան բնորոշ խաչքարերը: Մինչդեռ հնարավոր չէր, որ այնպիսի մի հուշարձանից, ինչպիսին Գլաձորի համալսարանն էր, շատ թե քիչ աչքի ընկնող որևէ խաչարձան կամ ձևավոր բեկոր չպահպանվեր: Իսկ արձանագրությունները ընդհանրապես բացակայում են, թեև Գարեգին Հովսեփյանը ժամանակին տեսել է երկու արձանագրված քարի բեկորներ, որոնք մենք տեղում չգտանք: Ամբողջ հնավայրում նույնիսկ մեկ հատ մշակված քարի չհանդիպեցինք: Չբավարարվելով վերգետնյա ուսումնասիրությամբ, արշավախումբը սկսեց հետախուզական պեղումներ կատարել հնավայրում: Այդ փորձը ևս ավարտվեց անարդյունք: Ս. Բարխուդարյանի և Լ. Խաչերյանի մատնանշած վայրերից նույնպես որևէ օտակար նյութ չհայտնաբերվեց: Վերնաշենում, որը տվյալ ժամանակաշրջանում Պոռշյանների իշխանական նստոցն էր, եղել է

սբ. Հակոբ և սբ. Գևորգ անուններով եկեղեցիներ¹⁴, մինչդեռ Գլաձորի վանք-համալսարանի եկեղեցիները սբ. Ստեփանոս և սբ. Նշան անուններն են ունեցել: Համալսարանը այժմյան Գլաձոր (Օրթաքենդ) գյուղի տարածքում նույնպես չէր կարող լինել, որովհետև այստեղ պահպանված 1311 թ. մի վիմագիր արձանագրության համաձայն, այդ տեղանքը պատկանել է ոչ թե Պոռշյաններին, այլ Օրբելյանների տոհմի Լիպարիտյան գյուղի Չեսար իշխանի շտաբիղներին: Այդ մասին մենք իմանում ենք ժամանակակից Գլաձոր գյուղի տարածքում 1311 թ. կանգնեցված խաչքարի հիշատակագրից, որտեղ ասված է.

«24: (=1311) ԻԾԽԱՆՈՒԹԻԻՆ ՊԱՐՈՆ ՉԵՍԱՐԻՆ, ԿԱՄԱԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԱՄԵՆԱԿԱԼԻՆ ԵՍ՝ ՎԱՐԴԱԾԱԿ ԿԱՆԳՆԵՑԻ ԶԽԱԶՍ ՅԻԾԱՏԱԿ ԻՆՁ ԵՒ ԾՆՈՂԱՑ ԻՄՈՑ: ՈՎ ԿԱՐԴԷՔ, ԱՍՏՈՒԱԾ ՈՂՈՐՄԻ ԱՍԷՔ»¹⁵:

Հանրահայտ է, որ Գլաձորի համալսարանը գտնվում էր ոչ թե Օրբելյանների կամ նրանց վասալների, այլ Պոռշյանների տիրույթում: Սրան ավելացնենք նաև, որ նման տիպի միջնադարյան մշակութային օջախները հիմնականում հիմնադրվում էին վանքերին կից, իսկ վանքերը, որպես կանոն, հիմնվում էին գյուղերից և քաղաքներից կտրված, բնակությունից հեռու վայրերում:

Հաշվի առնելով վերը շարադրված նկատառումները, արշավախումբը իր որոնումները սկսեց հենց **Թանահատի կամ Թանատի վանական համալիրի** մերձակայքում, հիմք ընդունելով նաև հետևյալը.

1. Տեղում այժմ կիսականգուն վիճակում պահպանվել են սբ. Ստեփանոս և սբ. Նշան եկեղեցիները:

2. Թանահատում է թաղված Ստեփանոս Սյունեցի եպիսկոպոսը, իսկ ըստ աղբյուրների Գլաձորի եկեղեցին նույնպես նվիրված էր սբ. Ստեփանոսի հիշատակին:

3. Վանքը կառուցված է մի ընդարձակ լեռնալանջի բարձունքի վրա և ինչպես աղբյուրներն են վկայում՝ «բարձրադիրտակ» է:

4. Վանքի շրջակայքում բացի եկեղեցիներից նկատելի էին բազմաթիվ խաչքարեր, գերեզմանաքարեր, մահարձաններ, ճար-

¹⁴ Այդ մասին տե՛ս Գ. Հովսեփյանի և Ղ. Ալիշանի մեր կողմից արդեն հիշատակված համապատասխան աշխատությունները:


¹⁵ Դիվան 3, էջ 102 (մեր ուղղումներով):

տարապետական հուշարձանների սրբատաշ մանրամասներ, հին շինությունների ինչպես ամբողջական, այնպես և ավերված ու կիսավեր մնացորդներ:

5. Թանաթի վանքի շինվածքներից Ս. Բարխուդարյանը հավաքել և հրատարակել է 62 փմական արձանագրություն, որոնք փորագրված են եկեղեցիների պատերին, գերեզմանաքարերի վերա, խաչքարերի ճակատին, շինարարական մանրամասների վրա և այլուր: Մեր պեղումներով հայտնաբերեցինք ևս շուրջ 50 արձանագրություններ:

Ձեռնարկելով Թանաթատի վանքի մերձակայքի պեղումները, մենք նկատի ունեցանք մի հանգամանք ևս. Գլաձորի համալսարանին վերաբերող նյութեր չգտնելու դեպքում էլ պեղումները կնրպաստեն հարցի լուծմանը, քանի որ կասկածի ենթակա վայրերի քանակը կպակասի մեկով:

Թանաթատի վանքի մասին ամենահին տեղեկությունը հաղորդում է Մովսես Կաղանկատվացու «Պատմություն Աղվանից աշխար-



Թանաթատի վանքի մասին կտրվածք

Նկ. 1. Թանաթատ-Գլաձորի հուշարձանախմբի ճատակածերը ըստ ճարտարագետ Ս. Մաքեոյանի:

հի» երկի շարունակողը՝ Մովսես Դասխուրանցին: Նկարագրելով 8-րդ դարում Ստեփանոս Այունեցու վերադարձը Հոռոմից ու ձեռնադրվելը որպես Այունիքի եպիսկոպոս, պատմիչը գրում է. «Եւ զմի ամ կալեալ զեպիսկոպոսութիւնն՝ սպանեալ լինի ի Մոզն գաւառի:

Ասեմ, թէ ի պիղծ կանաց եղև մահ նորա. զորոյ մարմինն առեալ բերին յԱրկազեան սենեակն և անտի փոխեցին ի Թանաթատաց վանս ի հանգիստ»¹⁶: Սակայն այս դեպքերի կապակցությամբ պատմիչը որոշակի թվական չի նշում:

Նույն դեպքի առավել մանրամասն նկարագրությանը հանդիպում ենք Ստեփանոս Օրբելյանի՝ «Պատմություն Ամասիան» աշխատության մեջ: Պատմիչը, նկարագրելով Ստեփանոս Այունեցու սպանությունը Մոզ ավանում, առավել մանրամասն, քան այդ արել էր Մովսես Դասխուրանցին, ավելացնում է, որ եպիսկոպոսի դիակը նախ տեղափոխեցին Արկազի սբ. Խաչի վանքը, իսկ այնուհետև՝ «... և բազում ատուրս ցայգապաշտօն կատարեալ՝ փոխեն զճխարս սրբոյն ի միաբանակեաց վանսն Թանաթատի վանից, որք էին մշտապաշտօնք, հեռացեալք յամենայն փափուկ կերակրոց. վասն որոյ և Թանաթատք կոչեցան: Եւ շինեալ ի վերայ փոքրիկ մատուռ մի. զոր յետոյ յ728 (728 + 551 = 1279) թուականին շինեցին բնակիչք տեղոյն եկեղեցի գմբեթայարկ գեղեցիկ յօրինուածովք. և եղին զտապան սրբոյն ի հիմն նորա:

Եւ էր կատարումն սրբոյն Ստեփանոսի ի թուկանութեանն Հայոց 184, ի հրոտից ի 15 և յուլիսի 21, ...»¹⁷:

Այսքան մանրամասնություններ հաղորդելու համար Օրբելյանը պետք է որ հավաստի աղբյուր ունենար իր ձեռքի տակ:

Բացի այդ, ինչպես երևում է մեջբերված հատվածից, Թանաթատի վանքը գոյություն ուներ մինչև 735 թվականը և այնտեղ միաբանություն կար: Նրա անդամները ապրում էին յստակյաց կյանքով, որի համար վանքը ստացել էր **Թանաթատից վանք** (թա-

¹⁶ Մովսես Կաղանկատուացի, Պատմություն Աղուանից աշխարհի, քննական բնագիր, Գիրք Գ, գլ. ԺԸ: (Արկազի սբ. Խաչ վանքը գտնվում է Մոզի և Թանաթատի վանքի միջև, ավելի մոտիկ վերջինին):

¹⁷ Պատմություն Ամասիան, արարեալ Ստեփանոսի Օրբելյան արքեպիսկոպոսի Այունեաց, Թիֆլիս, 1910, էջ 143: Համարյա նույն դեպքի նկարագրությունը մենք գտնում ենք Մխիթար Այրիվանեցու աշխատության մեջ, որը առաջին անգամ հրատարակել է Գ. Հովսեփյանը, տե՛ս, Մխիթար Այրիվանեցի, Նորագիտ արձանագրութիւն և երկեր, Երուսաղեմ, 1931, էջ 17—23:

ճից կտրված, անգամ թանկից զուրկ) անունը: Պարզ է դառնում նաև, որ 735 թվին Թանահատի միաբանները Ստեփանոս Սյունեցու գերեզմանի վրա կառուցում են սկզբում փոքր մատուռ, իսկ 1279 թվականին՝ գմբեթահարկ, գեղեցիկ հորինվածքով եկեղեցի:

Բայց տեղում պահպանված շինարարական արձանագրության համաձայն կանգուն շինությունը՝ սբ. Ստեփանոս եկեղեցին, կառուցված է 1273 թվականին (տե՛ս աստ, արձ. № 6): Ուսումնասիրողները միանգամայն ճիշտ նկատել են, որ այստեղ հակասություն չկա, քանի որ 1273-ը վանքի կառուցման, իսկ 1279-ը նրա ավարտից հետո, եկեղեցին օծելու տարեթիվն է, որին ներկա են եղել շինության հովանավորող իշխան Պոռոն ու իր զավակները:

Եկեղեցին արտաբուստ քառանկյունի, ներքուստ խաչաձև կառույց է, որն ունի երկարավուն երկուական փոքրիկ ավանդատներ արևելքից և արևմուտքից: Բացի այդ, արևելյան կողմում, երկրորդ հարկում, այն ունի երկու լրացուցիչ ավանդատուն, որոնց մուտքերը բացվում են բեմի վրա հարավային և հյուսիսային կողմերից: Ինչպես կարելի է նկատել արձանագրություններից, եկեղե-



Նկ. 2. Սբ. Ստեփանոս եկեղեցուն հյուսիս-արևմուտքից հարող տարածությունը մինչև պեղումները:

ցին կոչվում է «չարկ սրբոյն Ստեփանոսի», «սուրբ Ստեփանոսի գերեզման», «սուրբ Ստեփանոս», «Թանատի վանք» և այլն:

Սբ. Ստեփանոս եկեղեցու հյուսիսային կողմում կառուցված է մեկ այլ կամարակապ ծածկով շինություն, որը ծառայել է իբրև մատուռ-դամբարան: Պահպանվել են մուտքը և արևմտյան ու հյուսիսային պատերը: Արձանագրություններում այն կոչվում է սբ. Նշան: Ենթադրում ենք, որ պետք է կառուցված լինի սբ. Ստեփանոս եկեղեցուց հետո: Այն հանգամանքը, որ սբ. Նշան մատուռ-դամբարանը կառուցված է եղել սուրբ Ստեփանոս կենտրոնական եկեղեցուց որոշ ժամանակ անց, պարզ երևում է տեղագնությունից: Սբ. Նշանի հարավային պատը կցակառուցել են սբ. Ստեփանոսի հյուսիսային պատին այնպես, որ ծածկվել են ինչպես սբ. Ստեփանոս եկեղեցու հյուսիսային պատի զարդաքանդակները, այնպես և լուսամուտը: Նույնիսկ ճարտարապետը նորակառույց մատուռի հարավային պատի քարերը տեղ-տեղ հատուկ մշակման է ենթարկել, որպեսզի չխաթարի կամ ավելի ճիշտ՝ չավերի սբ. Ստեփանոսի հյուսիսային պատի նախօրոք կառուցված ձևավոր մասերը: Հետաքրքիր է նաև այն հանգամանքը, որ սբ. Ստեփանոսի հյուսիսային պատի այս հատվածում որևէ արձանագրության հետք անգամ չկա: Իսկ նույն պատի հյուսիս-արևելյան անկյունում փորագրված է մի արձանագրություն ճիշտ այնտեղ, որը չի խանգարել սբ. Ստեփանոսի հետ սբ. Նշան մատուռի կցակառուցմանը: Արդ, ո՞ր ժամանակին պետք է վերագրել սբ. Նշանի կառուցումը: Մեր կարծիքով՝ 1280—1302 թթ. միջև¹⁸, որովհետև 1302 թրվին արդեն գրիչները հիշատակում են սբ. Նշանի գոյությունը Թանահատ—Թանատ հուշարձանախմբում:

Հիշյալ կառուցումներից բացի տեղում որևէ սրբատաշ շենքի հետքեր չէին երևում: Գերեզմանատան թվակիր ամենահին արձանագրությունները վերաբերվում են 1215, 1218, 1246, 1252 թվականներին¹⁹:


Առաջին հերթին սկսեցինք պեղել սբ. Ստեփանոս եկեղեցու հարավային կողմում տարածված ընդարձակ հարթությունը, որ-

¹⁸ Այս կառույցի մասին Ա. Ավետիսյանը գրում է. «...իսկ եկեղեցուն (սբ. Ստեփանոս—Ի. Ղ.) կցված զանգակատունը (հյուսիսային կողմից) թվագրված է 1279 թ.» («Էջմիածին», 1956, № № 4—5, էջ 87): Մեզ անհայտ է հեղինակի այս տեղեկությունների աղբյուրը, սակայն դրանք իրականությանը չեն համապատասխանում:

¹⁹ Դիվան 3, էջ 88—92:



Նկ. 3. Թանահատի վանքի հարավի կողմի միջև պեղումները



Նկ. 4. Բազիլիկ եկեղեցու կտրվածքներ և առանձին մանրամասեր, բոս հարտաբալետ Ս. Մաթևոսյանի:

տեղ հողի մեջ կիսով չափ թաղված խաչքար էր երևում: Պեղումները տևեցին շուրջ երկու ամիս և տվեցին գոհացուցիչ արդյունքներ: Թանահատի գլխավոր եկեղեցու հարավային կողմում բացվեց տարբեր ժամանակներում կառուցված բազմաբնույթ շենքերի մի ամբողջական համալիր, ընդ որում՝ բազիլիկ ոճի ճարտարապետական մի եկեղեցի, նրան կից՝ հինգ առանձին աշխատատեղակայքեր:

Արշավախմբին հաջողվեց պարզել շինությունների կառուցման և վերանորոգման ժամանակները, որոնք տեղում շատ որոշակի հետամտվում են, որոշ չափով նաև՝ նրանց ունեցած նախնական և հետագա նշանակությունները:

Բազիլիկ եկեղեցին հնագույն կառույցն է այստեղ, որը նախնական ձևով բաղկացած է եղել քառանկյունի երկարուկ դահլի-

ճից՝ կառուցված հիմնաստիճանի վրա: Եկեղեցին հարավային ու հյուսիսային կողմերում ի սկզբանե ունեցել է մեկական ավանդատուն: Թե՛ դահլիճը և թե՛ ավանդատները ունեն իրենց բեմերը և վեմքարերը, որոնք տեղում պահպանվել են: Տաճարն ունեցել է միայն մեկ մուտք՝ արևմտյան կողմից, իսկ ավանդատների հետ հաղորդակցվել է եկեղեցու ներսից՝ հարավային և հյուսիսային պատերի մեջ բացված դռներով: Պեղումների ժամանակ գտնվեցին եկեղեցու ծածկի ինչպես հարթ, այնպես էլ ուռուցիկ ու ճակտոնավոր կղմիկորների բեկորներ, ատամնավոր քիվեր ու այլ ճարտարապետական մանրամասներ, որոնք հնարավորություն են տալիս մեզ վերը նկարագրված նորահայտ բազիլիկ կառույցը թվագրել 5—7-րդ դարերով, քանի որ հայկական վաղ միջնադարյան եկեղեցական ճարտարապետության պատմությամբ զբաղվող մասնագետները գտնում են, որ նման տիպի քիվեր ունեցող, հիմնաստիճանի վրա կառուցված և կղմիկորածածկ բազիլիկ կառույցները պատկանում են 5—7-րդ դարերին:

Ուսումնասիրվող կառույցի հատակագծային ու շինարարական առանձնահատկությունները թույլ են տալիս պնդելու, որ բացված շենքը Ստեփանոս Օրբելյանի հիշատակած Թանահատի վանքի հրճագույն եկեղեցին է: Պեղումներից պարզվեց նաև, որ սույն հնագույն եկեղեցին ավերվել է հավանաբար 11—12-րդ դարերի ընթացքում, իսկ 13-րդ դարի սկզբներին վերակառուցվել է: Վերակառուցման հետքերը տեղում շատ որոշակի երևում են, ըստ որում հնագույն եկեղեցին շարված է եղել փոքր-ինչ դեղնավուն ֆելզիտե քարով, մինչդեռ վերակառուցման ժամանակ օգտագործել են հիմնականում սև բազալտ: Բացի այդ, հարավային պատի մեջ, վերականգնման ընթացքում բացել են մի դուռ, որով կենտրոնական դահլիճը հաղորդակցվել է նորակառույց բաժանմունքի հետ:

Վերակառուցման ստույգ թվականը պարզ դարձավ, երբ ուսումնասիրվող եկեղեցիներից մոտ 40—50 մետր հեռու պեղվեց տնտեսական նշանակություն ունեցող մի հոր, որի մեջ գտնվեց արձանագրված երկու քար: Դրանցից մեկը եկեղեցու թաղակապ ծածկի կամարի պահուսակ է, որի վրա փորագրված է. «ԹՎ: ՈԿԴ: ՆՈՐՈԳԵՑԱԻ» (ՈԿԴ=1215 թ.): Եթե այս նորոգման արձանագրությունը համեմատաբար անորոշ է, քանի որ հնարավոր չէր ստույգ հավաստել, որ բնագրում խոսքը վերաբերում է մեր կողմից պեղումներով հայտնաբերված հնագույն եկեղեցու նորոգմանը, սպա Թանահատի վանքի վերանորոգման աշխատանքների

ընթացքում 1975 թվականին գտնվեց սույն բազիլիկ եկեղեցու նորոգման մասին նույն թվականի մեկ այլ ընդարձակ արձանագրություն, որն ավելի հավաստի է դարձնում նախորդ բեկորի տեղեկությունը: Ահա այդ արձանագրության վերծանությունը.

1. «Ի ԹՎԻՍ:ՈԿԴ: (=1215) ՎԵՐՍՏԻՆ ՆՈՐՈԳԵՑԱԻ ՍՈՒՐԲ
2. ԵԿԵՂԵՑԻՍ, ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ ՀԱԻՐ ՍԱՐԿԱԻԱԳԻՆ,
3. ՀՐԱՄԱՆԱԻ ԱՍՏՈՒՍԱՍԵՐ ԻԾԵԱՆԻՆ ՎԱՍԱԿԱ՝ ՈՐԴԻՈՅ
4. ԽԱՂԲԱԿԱ, ՋԻ ԷՐ ՏԱՊԱԼԵԱԼ ՅԱՆԱԻՐԻՆԱՑ: ԵՒ ՍԱ ԾԱՏ
5. ՉԱՐՉԱՐԵԱԼ ԱՐԵԱՄԲ ՉԱՓ, ԱԶԱՏԵԱՑ ԶԵԿԵՂԵՑԻՔՍ՝ ԻՒՐ
6. ԿՈՊԱՐՈՎՆ: ԵՒ ՄԻԱԲԱՆՔ ՍՈՒՐԲ ՈՒՍՏԻՍ ԿԱՐԳԵՑԻՆ
7. ԶՓՈՒՄԱՆ ԱՍՏՈՒՍԱՍՄԻՆ :Գ: (3) ԱԻ ՉԱՄԵՆ ԵԿԵ-
8. ՂԵՑԻՔՍ...»²⁰:

²⁰ Ս. Սաղումյան, Նորահայտ վիմագրեր Խաղբակյան տոհմի մասին, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1977, № 9, էջ 92—93: Ի դեպ, պետք է նկատել, որ վասակ Խաղբակյանը 13-րդ դարի առաջին երկու տասնամյակներում գործել է Իվանե Զաքարյանի իշխանության ներքո, թողել է ևս երկու արձանագրություն համանման բովանդակությամբ Կեչառիսի կաթողիկե եկեղեցու որմերին: Երկու արձանագրությունն էլ, ըստ Գ. Հովսեփյանի, փորագրված են 1214 թվականին, այսինքն՝ մեկ տարի ավելի վաղ, քան Թանահատի վանքի վերակառուցման մասին սույն արձանագրությունն է: Մի արձանագրություն էլ վասակ Խաղբակյանը թողել է Վայոց ձորի Արատեսի վանքում, որը մեր ուսումնասիրության առնչությամբ հարկ ենք համարում մեջ բերել ամբողջությամբ՝ Ս. Բարխուդարյանի վերծանությամբ.

Ի:ՈԿԹ: (=1220)


1. Ի ԹԱԳԱԻՈՐՈՒԹԵԱՆՆ ՎՐԱՑ ԱՇՇԱԻՆ ԵՒ ՅԱՇԽԱՐՀԱԿԱԼ—
2. ՈՒԹԵԱՆ ԻՒԱՆԷԻ ԱԹԱԲԱԿԻ, ԵՍ՝ ՎԱՍԱԿ, ՈՐԴԻ ԽԱՂԲԱԿԱ, ԿՈ—
3. ԼՄՆԱՊԱՀ Ի ԳԱՌՆՈՅ ՄԻՆՉԵԻ Ի ԲԱՐԳՈՒԾԱՏ, ԵՒ
4. ԱՌԻ ԶԱՄՐՈՑԱՆԻՍ ԵՂԵԳԵԱՑ ԶՈՐՈՅՍ ԱԻԳՆՈՒԹԵԱՄԲ—
5. Ն. ԱՍՏՈՒԾՈՅ Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏԵՐ ՍԱՐԳՍԻ ԵՒ ԱՌԱՋՆ—
6. ՈՐԴ ՎԱՆԱՑՍ ԵՒ ՆՈՐԱՎԱՆԱՑՆ ՀԱՍՏԱՏԵՑԱ—
7. Բ :Գ: ԺԱՄ ԶՀԱՄԲԱՐՉՄԱՆՆ ԶԵՐԵՔ ԱԻՐՆ ԶԱՄԵՆ—
8. ԱՅՆ ԵԿԵՂԵՑԻՔՍ ԶՈՐՈՅՍ,
9. ՈՐ ՎԱՍԱԿԱ ԿԱՏԱՐԵ—
10. Ն: ԵՒ ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱԻՐ—
11. ՀՆԻՆ ՅԱՍՏՈՒԾՈՅ: ԱՄԷՆ:

Այսպիսով, վասակ Խաղբակյանը 1214—1220 թթ. թողել է (կամ՝ նրա անուցով մնացել են) 4 արձանագրություններ, որոնց բովանդակությունից իմանում ենք վասակի ոչ միայն ռազմական հաղթանակների, այլև նրան պատիվ բերող շինարարական գործերի մասին (տե՛ս Դիվան 3, № 357, Գ. Հովսեփյան, Աշխ., էջ 299 (մեր ուղղումներով):

Նկ. 5. Բազիլիկ եկեղեցու ծածկի կիսակլոր կղմինդը:



Նկ. 6. Բազիլիկ եկեղեցու ատամնավոր իրվ:



24 25

Բացի այս բոլորից, բազիլիկ եկեղեցու հյուսիսային պատի ամբողջ երկարությամբ, մինչև վաղ շրջանում կառուցված խորանը, ավելացվել է մեկ այլ բաժանմունք, որի մուտքը նույնպես արևմտյան կողմից է: Սրա հյուսիսային պատը շարված է կոպտատաշ քարերով և խիստ տարբերվում է ամբողջ շինության կառուցողական որակից: Պարզ երևում է, որ վերակառուցվել է ոչ թե 1215 թվին, այլ ավելի ուշ, մեր կարծիքով՝ 1270-ական թվական-

ներին (այդ հարցին կանոնադառնա՞նք հետագա շարադրանքի ընթացքում):

Բազիլիկայի հարավային կողմում կառուցված բաժանմունքներին կից հայտնաբերվեցին ինչ-որ կառույցի, հավանաբար փոքրիկ մատուռի մնացորդներ: Այն շարված է եղել կարմրավուն հրաբխային հսկա քարերով, որոնցից տեղում պահպանվել են միայն երկու-երեք քար: Ենթադրում ենք, որ սույն կառույցը պետք է որ պատմիչ Ստեփանոս Օրբելյանի հիշատակած փոքրիկ մատուռը լինի՝ կառուցված 735 թվին՝ Սյունյաց Ստեփանոս եպիսկոպոսի աճյունը ամփոփելու համար. «... Եւ շինեալ ի վերայ փոքրիկ մատուռ մի»²¹:

Ամբողջ համալիրի, այսինքն բազիլիկ եկեղեցու և նրա հարավային ու հյուսիսային կողմերում կառուցված բաժանմունքների ծածկերը իրականացված են թաղերի օգնությամբ, առանց պլուների: Բազիլիկայի մեծ թաղածածկն իրականացնելու համար շինարարները հյուսիսից-հարավ երեք տեղերում կառուցել են կամարներ, որոնք հենվել են պատերի մեջ դրված պահուճակների վրա: Այս բոլորը հնարավոր եղավ պարզել տեղում գտնված համապատասխան ճարտարապետական մանրամասների օգնությամբ:

Նորաբաց բազիլիկ եկեղեցու և նրան կցակառուցված բաժանմունքների պահպանված պատերի բարձրությունը տարբեր է՝ 30-ից մինչև 150 սմ.: Եկեղեցին ներսի կողմից ծեփված է եղել կիրավազի համապատասխան շաղախով, հատակները՝ նույնպես:

Նորահայտ կառույցի նկարագրությունը կամբողջանա, եթե հիշենք, որ հյուսիս-արևելյան խորանի մեջ, հարավային պատի տակ, բեմի առաջ հայտնաբերվեց ինչ-որ անձնավորության անարձանագիր տապանաքար, որը իր կառուցողական արվեստով և ոճավորմամբ նման է 14-րդ դարի առաջին կեսին պատկանող թվակիր տապանաքարերին:

Բազիլիկ և սուրբ Ստեփանոս եկեղեցիների միջև ընկած տարածությունը պեղելիս պարզվեց, որ բազիլիկային հետագայում կցակառուցել են երեք բաժանմունք ունեցող կոպտատաշ քարերով շարված մի կառույց, որի մեջ հայտնաբերվեցին մեծ չափերի թոնիրներ, բազալտ քարից պատրաստված խմորի երկու տաշտեր, սանդ և նյութական մշակույթի այլևայլ մնացորդներ (կարասների, կճուճների, քրեղանների, ապակե առարկաների, ջնարակած թա-



Նկ. 7. Բազիլիկի վերին մասի քարային կամարներ:



Նկ. 8. Նորահայտ բազիլիկ եկեղեցու կամարի բարեբը:

սերի, ճրագների, կժերի, ինչպես նաև պղնձե և բրոնզե առարկաների բեկորներ), մասնավորապես պղնձե փոքրիկ զանգ և քերիչներ: Այստեղ գտնվեց նաև սբ. Ստեփանոս եկեղեցու քարակերտ մակետը, որի գմբեթի մասը չի պահպանվել:

Ելնելով սույն կառույցի մեջ գտնված իրերից և նրանց կառուցողական տեխնիկայից, համոզված ենք, որ այն վանական միաբանության համար ծառայել է իբրև տնտեսական նշանակություն ունեցող կառույց: Նկարագրված տնտեսական շինությունը մի եր-

²¹ Ստ. Օրբելյան, նշվ. աշխ., էջ 143:

կայնական պատով բաժանվում է սբ. Ստեփանոս եկեղեցուց՝ Ար-
րանից հեռու մնալով երկու-երեք մետր, իսկ հարավային կողմի
համար՝ բազիլիկ եկեղեցու և հետագայում կցակառուցված բա-
ժանմունքի հյուսիսային պատերը նույնանում են:

Բազիլիկ եկեղեցու արևմտյան կողմը մաքրելիս բացվեցին
հետագայում կառուցված, համեմատաբար կոպտատաշ քարերով
շարված գավթի հիմնապատերը: Գավթից, իր ժամանակի բոլոր
նույնատիպ կառույցների նման ընդգրկել է ընդարձակ տարածու-
թյուն, որի ծածկը իրականացվել է շինության կենտրոնում կանգ-
նեցված չորս սյուների վրա հենված կամարների և գմբեթի օգնու-
թյամբ: Տեղում պահպանվել են սյան խարխալներից երկուսը: Մը-
նացած մանրամասները շատ քեկորային են:

Բազիլիկայի արևմտյան պատի երկայնքով, հիմնաստիճան-
ների վրա 13—14-րդ դարերում կանգնեցվել են տաս խաչքարեր,
որոնցից տեղում պահպանվել են յոթը և մեկ խաչքարի պատվան-
դան՝ համապատասխան արձանագրությամբ:


Արշավախումբը ուսումնասիրեց նաև սբ. Ստեփանոս և սբ.
Նշան եկեղեցիների շրջապատը և ներսը: Սբ. Ստեփանոս եկեղե-
ցու արևելյան պատի տակ, կողք-կողքի տեղադրված են տաս տա-
պանաքարեր տարբեր ճարտարապետական հորինվածքով, որոն-
ցից հինգը արձանագրություններ ունեն: Սբ. Նշան մատուռ-դամ-
բարանի մեջ եղել է վեց տապանաքար. չորսը ժամանակին ունե-
ցել են արձանագրություններ, բայց քարի վատ որակի պատճառով
(բաց վարդագույն ֆելզիտ) բոլորն էլ եղծվել են և դարձել ան-
ընթեռնելի: Դրանց ժամանակի մասին կարելի է գաղափար կազ-
մել տապանաքարերի ճարտարապետական հորինվածքի առանձ-
նահատկություններով: Այստեղի տապանաքարերը հար և նման
են գավիթներում հայտնաբերվածներին, որոնք վերաբերում են
1285-ից 1310 թվականներին²²:

Մատուռ-դամբարանից փոքր-ինչ հյուսիս-արևելք բացվեց
տնտեսական նշանակություն ունեցող մի հոր, որը շարված էր մա-
նրը կոպտատաշ քարերով ու ներսից սխաղված բարձրորակ կիր-
ավազի շաղախով:

²² Վերնաշեն գյուղի բնակիչ Սերգո Առաքելյանը պատմում է, որ 1923թ.
մի հոգևորական եկել է Թանահատ և երկու բանվոր վարձելով, գիշերվա ըն-
թացքում քանդել է տվել սբ. Նշան մատուռի տապաններից մեկը: Իրոք, մա-
տուռը մաքրելիս պարզվեց, որ գերեզմաններից մեկը քանդված է և տապանա-
քարն էլ՝ չարդված: Տապանաքարի արձանագրությունից մնացել են առանձին
տառեր:



Նկ. 9. Բազիլիկ եկեղեցու պեղումներով բացված քանդ և ավազ խորանը:



Նկ. 10. Եսայի Նչեցուն վերագրվող տապանաքար, որ գտնվում է բազիլիկ եկեղեցու
հյուսիսային խորանում:

Սբ. Ստեփանոս եկեղեցու և սբ. Նշան մատուռի արևմտյան
կողմում, մեկ մետր խորության վրա բացվեցին գավթի հիմնապա-
տերի մնացորդները: Գավթի հատակը պատված էր տապանաքա-

րերով (թվով 24), որոնցից միայն չորսի վրա է պահպանվել համապատասխան հիշատակագրություն:

Բացված տապանաքարերից հատկապես նշանակալից է գավթի հյուսիսային պատի տակ պահպանված, երիտասարդ աղջկա պատկերաքանդակով գերեզմանաքարը: Գավթի կենտրոնում երեվացին շատ ավելի ուշ շրջանի կավե թոնրի մնացորդներ. հավանաբար թոնիրը դրվել է տապանաքարերից մեկի վրա: Դրանից էլ նեղով թոնիրը հորելու ժամանակը պետք է համարել 17—18-րդ դարերը, երբ արդեն ավերվել էր եկեղեցու գավիթը և ցրվել վանքի միաբանությունը:

Գավթի հյուսիսային կողմում, սբ. Ստեփանոս եկեղեցու արևմտյան պատին կից գտնվեցին մի քանի խաչքարեր, համապատասխան արձանագրություններով:

Այսպիսի մի ճարտարապետական համալիր բնական է, որ պետք է իր շրջապատում ունենար տնտեսական նշանակություն ունեցող այլևայլ շինություններ: Դրանք հայտնաբերելու նպատակով մենք սկսեցինք ուսումնասիրել բազիլիկայի հարավ-արևմտյան կողմի ընդարձակ տարածությունը: Պեղումներից հետո պատկերը պարզվեց մասնակիորեն, որովհետև 17—18-րդ դարերում այս մասը վերաբնակիչները քանդել են և հարմարեցրել իրենց կարիքների համար: Այնտեղ պեղվեց մի ընդարձակ բնակարան, որի հյուսիս-արևմտյան պատի մեջ գտնվեց բուխարի, իսկ արեվելյան պատի տակ՝ փոքրիկ բարձրություն, ըստ երևույթի նրա տեղում համար: Դրսի կողմից այն ունի պատշգամբի նմանվող կառույց:

Սույն բնակելի շենքից դեպի արևելք ձգվում են երկու-երեք սանդղավանդով կառուցված պատերի մնացորդներ, որոնց նախնական ձևը և նշանակությունը առայժմ հնարավոր չէ պարզել:

Արշավախումբը ուսումնասիրեց հուշարձանախմբից 40—50 մետր հյուսիս-արևմուտք գտնվող մի կառույցի ավերակներ, որտեղ բավական շատ սրբատաշ քարեր կային:

Այն տեղադրված է արևելք-արևմուտք ուղղությամբ, ունի միայն մեկ մուտք արևմտյան կողմում: Պատերի պահպանված մասերի բարձրությունը 80—110 սմ է: Կառույցը ընդգրկում է շուրջ 100 քառ. մետր տարածություն: Հավանաբար ծածկը իրականացվել է շինության կենտրոնում կանգնեցված չորս սյուների վրա բարձրացող հազարաշեն եղանակով: Մեր կարծիքով բազալտում է տանիքի փայտածածկ լինելու հանգամանքը, քանի որ տեղում

չէր հանդիպում փայտի որևէ մնացորդ, դրա փոխարեն հաճախ էին հանդիպում տանիքի ծածկասալերի բեկորներ և առանձին մանրամասներ: Պեղումների շնորհիվ պարզվեց, որ սույն կառույցը պատկանում է 13—14-րդ դարերին, քանի որ պահպանված նյութական մշակույթի մնացորդները և շենքի շինարարական ու ճարտարապետական առանձնահատկությունները բնորոշ են այդ դարերին:

Ծեները ընդհանրապես կառուցված է ճեղքված տեղական կիսամշակ բազալտ քարով: Միայն առանձին դեպքերում, հատկապես անկյունային մասերում հանդիպում են մշակված մեծ քարեր: Հատակը ծեփածածկ է եղել, որից միայն տեղ-տեղ է պահպանվել:

Դատելով կառույցի ընդհանուր հատակագծային ու կառուցողական առանձնահատկություններից և նրա չափերից կարելի է ենթադրել, որ այն իր ժամանակին ծառայել է միաբանության համար իբրև ժողովարան, սեղանատուն և նման այլ նպատակների համար: Հետագա՝ 14—16-րդ դարերում, երբ Թանահատի վանքի միաբանությունը կրճատվում է և այլևս նման խոշոր կառույցի կարիքը չունեին, տեղացիներն այն վեր են ածում տնտեսական շինության: Այդ են վկայում ինչպես կառույցի ներսում, այնպես և նրա հյուսիս-արևելյան արտաքին պատի տակ փորված մի քանի տնտեսական հորերի առկայությունը: Հենց այդ հորերից մեկի մեջ հայտնաբերվեց բազիլիկ եկեղեցու՝ 1215 թվի վերանորոգման արձանագրությամբ սրբատաշ քարը:

Թանահատի հուշարձանախմբի մերձակայքում պահպանվել են սրբատաշ քարեր, բնակելի տներ, տնտեսական շինությունների բազմապիսի մնացորդներ: Մեր արշավախմբի կողմից հետազոտվեցին նաև դրանք: Պարզվեց, որ այդ տնտեսական շենքերն ու բնակարանները կառուցված են եղել Թանահատի (Գլաձորի) գործունեության ծաղկուն շրջանում՝ 13—14-րդ դարերում: Հետագայում, 17—18-րդ դարերի ընթացքում, երբ այս հնավայրի տարածքը բնակեցվում է մահմեդականներով, Թանահատի հոգևոր-կրթական կենտրոնի շինություններից շատերը վերափոխվում և օգտագործվում են: Նորաբնակները վանքի շրջապատում եղած ավերակները հարմարեցրել են իրենց կարիքներին՝ որոշ դեպքերում նույնիսկ չխաթարելով բնակելի կառույցների նախնական հատակաձևը և կառուցվածքի կոմպոզիցիան: Միաժամանակ, իրենց տները վերաշինելիս նրանք լայնորեն օգտագործել են ինչպես հասարակ ու չմշակված շինքարը, այնպես էլ ավերված հու-



Նկ. 11. Բազիլիկ եկեղեցին
և հարակից տնտեսական
շինությունները պեղումներից
հետո:



Նկ. 12. Բազիլիկ եկեղեցու
գավթի սյան խարխուլ:

շարձանների մշակված քարերը, նույնիսկ արձանագրվածները: Դրա շնորհիվ մեզ հաջողվեց բավականին հարստացնել արձանագրությունների քանակը, ինչպես նաև ճշգրտել նախորդ ուսումնասիրողների կողմից հրատարակվածների բովանդակությունը: Այժմ ստեղծվել է այնպիսի մի փնակ, երբ հաճախ դժվար է որոշակիորեն առանձնացնել 13—14-րդ և 17—18-րդ դարերի բնակելի տները իրարից, մի իրողություն, որը զգալիորեն դժվարացնում է ուսումնասիրողի աշխատանքը:

Ավարտելով պեղման հիմնական աշխատանքները, արշավախումբը ձեռնամուխ եղավ հուշարձանի տարածքից գյուղացիների կողմից տարած և տարբեր նպատակների համար օգտագործված

մշակված քարերը, հավաքելու գործին: Այնուհետև, ուսումնասիրվեց հուշարձանի շրջապատը՝ Յ կմ շառավղով: Այդ ընթացքում հայտնաբերվեցին մի շարք տապանաքարեր, խաչարձաններ, որոնց մի մասն է միայն հիշատակվում նախորդ ուսումնասիրողների կողմից: Դրանց վրա կան արձանագրություններ, մի քանիսը՝ թվակիր, որոնք կամ լրացնում են թերի արձանագրությունները, կամ նոր տվյալներ են տալիս Թանահատի վանական կենտրոնի պատմական կյանքի ուսումնասիրության համար:

Այժմ հարկ է պարզել, թե այս բոլորը մատենագրական, հնագիտական, ճարտարապետական և փնագրական ինչ կովաններ են տալիս որոշելու Թանահատի վանական համալիրի մեջ մտնող նորաբաց բազիլիկ եկեղեցու առնչությունը Գլաձորի համալսարանի հետ:

Ստեփանոս Օրբելյանի վկայությամբ 735 թ. սպանված Սյունյաց Ստեփանոս եպիսկոպոսը թաղվել է Թանահատի վանքում, սկզբում այդ նպատակով կառուցված փոքրիկ մատուռի մեջ, որի հետքերը ի հայտ են եկել պեղումների օգնությամբ, իսկ հետո նրա մասունքները դրել են սբ. Ստեփանոս կոչվող եկեղեցու հիմքում²³:

Գլաձորի համալսարանը ըստ ժամանակի գրավոր հիշատակարանների և Գլաձորում կրթություն ստացած սաների վկայության, շատ մոտ է գտնվել Սյունեցու գերեզմանին, այսինքն՝ սբ. Ստեփանոս կոչվող եկեղեցուն: Այդ մասին 1284 թ. գրված ձեռագիր հիշատակարանում Մատթեոս Կիլիկեցին ասում է.

**«...Եկեալ յայս գաւառի,
Որում անուն Վայ ձոր կոչի,
Հուպ է շիրիմն Սիւնեցի,
Ի յԱղբերց վանս մենաստանի.
Յերկրորդ Աթենս պանծալի.
Առ ոտըս հօր մեր Ներսիսի
Եւ րաբունեաց վարժապետի,
Հասեալ ի ծայրս իմաստ բանի»²⁴:**

Ինչպես երևում է, Սյունեցու շիրիմը մոտ է գտնվել Աղբերց վանքին, որը իրավացիորեն ուսումնասիրողները նույնացնում են Գլաձորի համալսարանի հետ:

²³ Ստ. Օրբելյան, ԱԶՎ. աշխ., էջ 143:

²⁴ Գ. Հովսեփյան, ԱԶՎ. աշխ., էջ 259: Ղ. Ալիշան, ԱԶՎ. աշխ., էջ 131:

Այս մասին կարևոր տվյալներ է հաղորդում նաև Մկրտիչ գր-
քիչը 1298 թ. գրած իր հիշատակարանում.

**«Ընդ նմին եւ զեղկելիս
Զվերագծող այսմ տառիս
Ի մեհաստանս Գլածորիս,
Ընդ հովանեաւ սբ. Ստեփանոսիս,
Անուանակիր մարգարէիս
Ջեռամբ անարժանիս Մ կ չ ի ս.
Եւ դերանուն կրանատրիս,
Որ սպասատր եմ լեալ բանիս,
Միայն անամբ ու ոչ ըստ գործիս.
Ընդ խնամաբ վարժապետիս
Որ յորջորջի իսկ Եսափս»²⁵:**

Այսպիսով, մեջբերված հիշատակարանները հավաստում են,
որ Գլածորի համալսարանի եկեղեցին կրել է սբ. Ստեփանոս Այու-
նեցու անունը, որը միաժամանակ Թանահատում 1273—79 թթ.
կառուցված եկեղեցու անունն էր: Ինչպես տեսանք դա հաստա-
տում է նաև Ստեփանոս Օրբելյանը:

Մեկ այլ վկայություն ևս. Գլածորում աշխատող և ձեռագիր
արտագրող գրիչները բազմիցս կրկնում են, որ բացի սբ. Ստեփա-
նոս եկեղեցուց այստեղ կար նաև մեկ այլ հոգևոր կառույց: 1318 թ.
արտագրված Գրիգոր Նյուսացու աշխատության գրիչը, օրինակ,
գրում է. «... և մայրաքաղաք ամենայն իմաստից՝ (Գլածոր— Ի.
Ղ.) ընդ հովանեաւ սուրբ Ստեփանոսի և կենսակիր աստուածա-
բաղձ սուրբ Նշանիս, որ է ճշմարիտ ի կենաց փայտէն և դամբա-
րանի սուրբ վարդապետին Ներսէսի»²⁶: Իսկ 1321 թ. արտագրված
ձեռագրի գրիչը վկայում է. «Գրեցաւ մատենան թվին 22 (1321)
ի գաւառիս Վայոց ձոր, ի մեհաստանիս Գլածոր, ընդ հովանեաւ
սրբին Ստեփանոսի և այլ աստուածաբանկալ սուրբ Նշանին, առ
այս մեծ թաքունապետիս Եսայեայ»²⁷:

Այստեղից Ղ. Ալիշանը եզրակացնում է. «Ամենայն յիշողը



Նկ. 13. Բագրիվկ եկեղեցու գավիթը պեղումներից հետո:

Վանացու Գլածորոյ՝ վկայեն զի եկեղեցին նուիրեալ էր և կոչէր
լանուն սբ. Ստեփանոսի կամ սբ. Նախավկայի և զատ լայնմանէ
թոյի մատուռն մի լինել լանուն սբ. Նշանի գոր յիշատակագիրն
լամի 1314 կոչէ «կենսակիր և աստուածաբաղձ սուրբ Նշանիս, որ
է ճշմարիտ ի կենաց փայտէն»²⁸: Որեմն, Գլածորի համալսարա-
նում վերոհիշյալ անուններով գոյություն են ունեցել երկու կառույց-
ներ:

Այս նպատակով մենք մանրակրկիտ կերպով ուսումնասիրել
ենք Վայոց ձորի բոլոր հնավայրերը և պարզել, որ ընդամենը եր-
կու դեպքում է հիշատակվում սբ. Ստեփանոս եկեղեցի ստանց
սբ. Նշանի, այն էլ ավելի ուշ շրջանի՝ 14—15-րդ դարերի արձա-
նագրություններով հուշարձաններում: Եվ ամենակարևորն այն է,
որ այդ վայրերը չեն մտել Պողոսյան տոհմի՝ հայագիտությանը
հայտնի տիրույթների մեջ: Իսկ մենք աներկբա գիտենք, որ Պը-
նոջյանները համարվում էին: «Տեղ եւ իշխեցող սուրբ մեհաստա-
նիս եւ տանս դպրոցական ժողովելոց»²⁹: Հետևաբար, այդ երկու
հնավայրերը ոչ մի աղերս չեն կարող ունենալ մեզ հետաքրքրող
Գլածորի համալսարանի հետ:

Գլածորի համալսարանի տեղադրության մասին մատենագրա-
կան առկա տեղեկություններով հնարավոր է բացահայտել միայն
այսբանը: Այժմ տեսնենք, թե ինչ են տալիս Թանահատի վանքի

²⁵ Նույն տեղում, էջ 262:

²⁶ Տե՛ս Ղ. Ալիշան, Ազգ. աշխ., էջ 135-ում մեջբերված ձեռագիր հիշատա-
կարանը: Նույնը մի փոքր կրճատումներով տե՛ս նաև «ԺՊ դարի հայերեն ձե-
ռագրերի հիշատակարաններ», կազմեց Լ. Խաչիկյան, Երևան, 1950, էջ 146—
147:

²⁷ Գ. Հովսեփյան, Ազգ. աշխ., էջ 274: Օգտվել է Երուսաղեմի ՁԽ 1414
ձեռագրի 328բ էջից:

²⁸ Ղ. Ալիշան, Ազգ. աշխ., էջ 135:

²⁹ Ղ. Ալիշան, Ազգ. աշխ., էջ 133: Գ. Հովսեփյան, Ազգ. աշխ., հավելված,
Բ, № 24:



Նկ. 14. Նորանայտ խաչքար բազիլիկ եկեղեցու պեղումներից:

տարածքում մեր կատարած հնագիտական պեղումների արդյունքները: Պարզվում է, որ Թանահատի վանական համալիրի մեջ առկա էր երեք հուշարձան է մտել, և յուրաքանչյուրն ունեցել է իր ուրույն անունը: Դրանցից երկուսը արձանագրություններում հիշվում են՝ սբ. Ստեփանոս և սբ. Նշան, իսկ երրորդի անունը չի նշվում: Հետևաբար, 5—7-րդ դարերի նորահայտ բազիլիկ եկեղեցու անունը մինչև հիմա մեզ անհայտ էր: Բայց երբ վերծանեցինք Թանահատի հուշարձանախմբի տարածքում հայտնաբերված նորահայտ փմագրերը, պարզվեց, որ այնտեղ կա Օրբելյան Լիպարիտ իշխանի որդիների անունով թողած արձանագրություն, որը հնարավորություն է տալիս որոշելու բազիլիկ եկեղեցու անվանումը: Ահա այդ նորահայտ փմագիրը մեր վերծանությամբ.

ԿԱՄԱԻ ԱՍՏՈՒԾՈՅ ԱՍ ՄԵՐ ԳԻՐ Է ԼԻՊԱՐՏԻ :Դ: ՈՒՍ-
[ՏԵՐՑ]՝ ՍՄՊԱՏԱ, ՓԱԽՐԱԴԱԽԼԻ, ՏԱՐՍԱ[ՅԻ]ԺԻ ՈՐ ՈՂՈՐ-
ՄՈ[ԻԹԵԱՄԲ] ԱՍՏՈՒԾՈՅ ՏՎԱՔ ԶԻՒԱՆՈ ԶԱՂԱՑՍ, ՈՐ
ՄԾՌԱԿԱ[ԶՈՐ], :Ա: ՀՈՂՆ ԴՐԱՆ ԶԱՂԱՑԻՆ ԵՒ ԹԱՆԱՏ
ՎԱՆՔ ՍՈՒՐԲ Ս[ՏԵՓ]ԱՆՈՍ: ԳՐԵՑԻՆ :Ե: ԱԻՐ ՊԱՏԱՐԱԳ
ՍՈՒՐԲ ՍԱՐԳՍԻ ՏԱԻ[ՆԻՆ]³⁰:

Արձանագրության մեջ հիշատակված անունները Լիպարիտ Օրբելյանի չորս որդիներն են: Նա ունեցել է հինգերորդ որդին ևս՝ Էլիկում, որը մահացել էր 1253—55 թվականների միջև: Կնշանակի արձանագրությունը գրված է 1254-ից հետո: Արձանագրությունը փորագրելու հնարավոր վերջին ժամանակը պետք է որոշենք Իվանեի և Փախրադոլայի կենդանության տարիներով: Նրանք մահացել են, ինչպես գիտենք արքյուրներից³¹, մինչև 1261 թվականը: Հետևաբար արձանագրությունը փորագրվել է 1254—60 թվականների միջև³², դեռևս չորս եղբայրների կենդանության օրոք: Այդ եզրակացությանն ենք հանգում, որովհետև առաջին տողում խոսքը գնում է չորս եղբայրների մասին, իսկ վերջում հինգ պատարագ են պատվիրում, հավանաբար, մեկական՝ յուրաքանչյուր եղբոր համար: Նույն արձանագրության բովանդակությունից նաև

36

37

³⁰ Տե՛ս սատ, արձ. № 28:

³¹ Ստ. Օրբելյան, Աշխ., էջ 415—416: Ղ. Ապիշան, Սիսական, էջ 92—93, 193: Գ. Հովսեփյան, Աշխ., էջ 437:

³² Իվանեի և Փախրադոլայի մահը 1260—61 թթ. է դնում նաև Գր. Գրիգորյանը (Տե՛ս Սյունիքը Օրբելյանների օրոք, Երևան, 1961, էջ 77):



Նկ. 15. Խորանայտ խաչքար
բազիլիկ եկեղեցու
արևմտյան պատին:



Նկ. 16. Սբ. Եջան մատուռի
ժուռքի բարավորի
բարձրահանդակը:

հետևում է, որ 1273 թվին կառուցված սբ. Ստեփանոս եկեղեցուն Լիպարիտ Օրբելյանի չորս որդիները չէին կարող նվերներ տալ 1254—60 թվականների ընթացքում: Մնում է մտածել, որ այդ թրվերին Թանահատում կար սբ. Ստեփանոս անունով մեկ այլ ե-

կեղեցի ևս: Այստեղից հետևում է, որ բազիլիկ եկեղեցին նույնպես կոչվում էր սբ. Ստեփանոս: Նույնիսկ կարելի է հնարավոր համարել այն ենթադրությունը, որ 5—7-րդ դարերում կառուցված բազիլիկ եկեղեցին սկզբնապես նվիրված է եղել Ստեփանոս Նախավկային: Ուստի 735 թվին այդ նկատի ունեին հոգևոր իշխանությունները, երբ Արկազի սբ. Խաչից Ստեփանոս Սյունեցու անունը տեղափոխում էին Թանահատի վանք, այնտեղ հողին հանձնելու համար: Պատահական չէ, որ ձեռագիր արտագրող գրիչները հավասարապես հիշում են և Ստեփանոս Սյունեցու, և Ստեփանոս Նախավկայի հովանավորությունը: Թանահատի վանքի նույն եկեղեցու համար Ղ. Ալիշանը իրավացիորեն գրում է. «... զի եկեղեցին նուիրեալ էր և կոչեր յանուն սբ. Ստեփանոսի կամ սբ. Նախավկայի...»³³:

Այսպիսով, 5—7-րդ դարերի բազիլիկ եկեղեցին, որ կրում էր սբ. Ստեփանոս անունը, 11—12-րդ դարերում ավերվել էր օտար նվաճողների կողմից և 1215 թվին վերակառուցվում է Վասակ Խաղբակյանի հրամանով ու վանքի առաջնորդ Սարկավազի ղեկավարությամբ: Միաբանները պարտավորվում են բոլոր եկեղեցիներում, պատարագ մատուցել Վասակ Խաղբակյանի պատվին (տե՛ս աստ, արձ. № 1): Նոր վերանորոգված եկեղեցին իր հիմնական նպատակին ծառայեց հավանաբար մինչև 1279—80 թվականները: Հետագայում այն կորցրեց իր հիմնական կրոնական նշանակությունը, որովհետև նրա կողքին, ինչպես գիտենք Ստեփանոս Օրբելյանի վկայությունից և շենքի շինարարական արձանագրությունից, Պողո Մեծ իշխանը 1273 թ. կառուցել էր տվել մեկ այլ եկեղեցի, որի հիմքերի մեջ դրել էին Ստեփանոս Սյունեցու մասունքները: Հենց այդ նորակառույց եկեղեցին իր վրա վերցրեց հոգևոր կառույցի հիմնական դերը, իսկ մեր կողմից պեղումների օգնությամբ հայտնաբերված բազիլիկ եկեղեցին 1270-ական թվականների վերջին ենթարկվեց մի նոր վերանորոգման, արդեն բոլորովին այլ նպատակների համար: Այդ մասին մենք կողմնակի կարգով իմանում ենք պեղումների ընթացքում հայտնաբերված խաթարված արձանագրությունից, որտեղ ոմն Խելաշահ տեղեկացնում է ինչ-որ եկեղեցու նորոգման մասին: Ահա այդ բնագիրը.

ՅԱՆՈՒՆ ԱՍՏԾՈՅ ԵՄ՝ ԽԵԼԱՇԱՀՍ ՆՈՐՈԳԵՑԻ ԶԵԿԵՂԵՑԻՍ
ՅԻԾԱՏԱԿ ԻՆՁ ԵՒ ԾՆՈՂԱՑ ԻՄՈՑ: (Տե՛ս աստ, արձ. № 11):

³³ Ղ. Ալիշան, «Զվ. աշխ.», էջ 135:

Խելաշահի նորոգած եկեղեցին, անշուշտ, նորաբաց բազիլիկան է, քանի որ Թանահատի վանական համալիրի շրջապատում ուրիշ եկեղեցի գոյություն չունի, իսկ նորակառույցն էլ (իմա. 1273 թ.) վերանորոգման կարիք չուներ: Մեր ենթադրությունը հավանական է նաև նրանով, որ նշված արձանագրության հեղինակ, եկեղեցին նորոգող Խելաշահը հենց 13-րդ դարի երկրորդ կեսի գործիչ է:

Որ բազիլիկ եկեղեցին 1280-ից հետո կորցնում է հոգևոր կենտրոնի իր նախկին դերը, երևում է նաև այն բանից, որ նրան հետագայում կցակառուցում են տնտեսական նշանակություն ունեցող մի այլ շինություն, որի մասին արդեն խոսել ենք նախորդ էջերում: Այս հանգամանքը խիստ բացատրություն պիտի համարել ընդհանրապես հայկական միջնադարյան վանական կառույցների ճարտարապետության պատմության մեջ: Այդպիսի բացատրություն կարող էր արվել միայն այն դեպքում, եթե տվյալ կառույցը կորցրել էր եկեղեցի լինելու իր հիմնական նշանակությունը, մի բան, որը հաստատում է մեր կողմից առաջ քաշված ենթադրությունը:

Այս շրջանին են վերաբերում նաև բազիլիկ եկեղեցու հյուսիսային և հարավ-արևելյան կողմերում կցակառուցված ավանդատան նման ևս երեք յառույցներ՝ տարբեր մեծությամբ: Ավանդատների գոյությունը չէ, որ մեր ուշադրությունը գրավում է, այլ այն, որ հարավ-արևելյան և հարավ-արևմտյան ավանդատների միջև գտնվող ազատ տարածությունը նույնպես օգտագործված է, այնտեղի հետ հաղորդակցություն ունենալու համար բազիլիկայի հարավային պատի մեջ նոր մուտք բացելով: Որպես մուտքի շեմի քար օգտագործված է մի հսկա սև բազալտ, որն ըստ երևույթին մշակված է ոչ այդ նպատակի համար:

Հայկական եկեղեցական ճարտարապետության մեջ այս հանգամանքը նույնպես նոր երևույթ էր, որը նախորդ և հետագա հուշարձաններում չի հանդիպում: Ուրեմն սա էլ երկրորդ բացառությունը, որը մեզ լիիրավ հիմք է տալիս պնդելու, որ բազիլիկան 13-րդ դարի 80-ական թվականներին կորցրել էր իր կրոնական-հոգևոր նշանակությունը:

Մեր գտած արձանագրությունները, բացառությամբ վերակառուցման մասին հիշատակող արձանագրությունից, վերաբերում են սբ. Ստեփանոսին կամ սբ. Նշանին, և ոչ մի տող՝ վերակառուցված բազիլիկայի և նրա անվան մասին: Սա նույնպես ուշադրության արժանի փաստ է:

Այս բոլորի հետ միաժամանակ բազիլիկ եկեղեցին մինչև իր ավերվելը պահպանում էր կրոնական կառույցին բնորոշ առանձնահատկությունները, այսինքն՝ ավագ սեղան, յուրաքանչյուր խորանում՝ բեմ և վեմաքարեր, բազմաթիվ խաչքարերի գոյություն, եկեղեցու առաջ գավթի կառուցում և այլն:

Դա նույնպես բնորոշ է միջնադարում ուսումնական նպատակների համար հարմարեցված շինությանը, որովհետև դասավանդումը կատարվում էր հոգևորականների կողմից, և ավարտողներից շատերը դառնում էին հոգևոր գործիչներ:

Բազիլիկ եկեղեցու գավթում գտնվող տապանները հիմնականում վերաբերում են 13-րդ դարի վերջին և 14-րդ դարի առաջին կեսին: Այստեղ, չնչին բացառությամբ, թաղված են աշխարհիկ անձնավորություններ, ինչպիսիք են Վախթանգը, պարոն Միսարը և ուրիշներ:

Բազիլիկ եկեղեցու, նրա գավթի և տնտեսական կառույցների մեջ գտնված նյութական մշակույթի մնացորդները՝ ցույի գլուխկանթերով կնուններ, կաթնամաններ, կարասներ, քրեղաններ, պղնձե զանգ, քանդակազարդ կանթեղ, ջնարակած խեցեղեն, հախճապակի, ոսկրե իրեր և դանակի մնացորդներ, որոնք առանց բացառության վերաբերում են 13—14-րդ դարերին, հանդիպում են Գառնիի և Լոռու ժամանակամերձ հնագիտական հուշարձաններում:

Այս ամենը հնարավորություն է տալիս պնդելու, որ Թանահատի համալիրի մեջ մտնող բազիլիկ եկեղեցին 1215 թ. վերակառուցումից հետո, 1270-ական թվականների վերջին ենթարկվում է մասնակի մի-նոր վերակառուցման և այդ նույն ժամանակ էլ վերածվում է ուսումնական հաստատության, որը մեր մատենագրության մեջ հայտնի է, ընդամենը երկու-երեք դեպքում՝ **Աղբերց վանք**, իսկ հիմնականում՝ **Գլաձորի համալսարան** անունով: Դրա վկայությունն են նաև Գլաձորի համալսարանում ապրած և այնտեղ իրենց մահկանացուն կնքած որոշ բարոնապետերի և բարոնիների (ուսուցչապետերի և ուսուցիչների) տապանաքարերը:

Այժմ համառոտակիրեն ներկայացնենք Գլաձորի համալսարանի այն գործիչներին, որոնց թողած հետքերը այս կամ այն ձևով ի հայտ են գալիս Թանահատի վանական համալիրի պեղումներով:

1. **ՆԵՐՍԵՍ ՄՇԵՑԻՆՆԻ**՝ Գլաձորի համալսարանի հիմնադիրը և նրա առաջին բարոնապետը, եղել է միջնադարյան Հայաստա-



Նկ. 17. Երիտասարդ աղջկա Բանդակագարդ տապանաբար սք. Ստեփանոսի գավթում:

Նկ. 18. Թանահատի վանքի գավթի տապանաբարեր պեղումներից եկած:



նի կրթական-մշակութային խոշորագույն գործիչներից մեկը: Նա իր սկզբնական կրթությունը ստանում է Մշո Առաքելոց վանքում, որը, ի դեպ, կոչվել է նաև Գլաձոր: Հետագայում Ներսեսը աշակերտում է Վարդան Արևելցուն Խորվիրապի վանքում, իսկ վերջինիս մահից հետո՝ 1271 թ., ինչպես նրա վարքագիրն է գրում. «Եւ լետ փոխման նորա յաթող նորին (Ներսես) և յուստորեաց գիտութեամբ զազգս հայոց ուսմամբ գրոց»³⁴: Այնուհետև, իր պ-

շակերտների հետ միասին որոշ ժամանակ աստանդական կյանք վարելով, նորից հայտնվում է Մշո Առաքելոց կամ սք. Ղազարի վանքում: Իսկ 1281—82 թվականների³⁴, հավանաբար ականջայուր լինելով Պողո Խաղբակյանի ցանկությանը, տեղափոխվում է նրա տիրույթը և այնտեղ հիմնում Գլաձորի համալսարանը, որի անունը, ինչպես ուսումնասիրողները համակարծիք պնդում են՝ փոխառնված է Մշո Առաքելոց վանքի Գլաձոր անունից³⁵:

Ներսես Մշեցին Գլաձորում երկար չի ապրում ու մահանում է նույն վանքում խոր ծերության հասակում կամ ինչպես հիշատակարանն է շեշտում՝ «ի բարոք ծերությեան»: Անհայտ մի ժամանակագիր որոշակի նշում է Ներսես Մշեցու մահվան ոչ միայն տարին, այլև ամիսը և օրը. «Հանգեալ ի Քրիստոս Ներսես վարդապետն ի վանս Գլաձորոյ, թվ. հայոց ՉԼԳ (733+551=1284) ի փետրվարի :Զ: (6-ին)»³⁶:

1314 թվականի հիշատակագիրը Ներսես Մշեցու մասին վկայում է, որ նա մահացել և թաղվել է Գլաձորի վանքում: Արդ, եթե Գլաձորի համալսարանը տեղադրված է եղել Թանահատի վանական համալիրում, ապա պետք է, որ մենք այստեղ փնտրենք Ներսես Մշեցու գերեզմանը:


Մեր կարծիքով, համալսարանի առաջին բաբունապետը թաղված է Թանահատի սք. Նշան մատուռի մեջ: Մեր պեղումների ժամանակ պարզվել է, որ սք. Նշանի ներսում թաղված են եղել վեց անձնավորություններ: Ուրեմն, սք. Նշանը կառուցվել է ոչ թե իբրև եկեղեցի, այլ մատուռ-դամբարան, որը հաստատվում է նաև Ղ. Ալիշանի և Գ. Հովսեփյանի համապատասխան ուսումնասիրությունների եզրակացություններով: Այս ենթադրությունը հաստատվում է նաև սք. Նշան մատուռ-դամբարանի կառուցման ժամանակի խնդիրը պարզաբանելիս: Ինչպես արդեն նկատել ենք նախորդ էջերում, սք. Նշան մատուռը կառուցվել է 1280—1302 թվականների միջև, ավելի ստույգ՝ 1284 թվականից հետո, հենց Ներսես Մշեցու մահվան կապակցությամբ: Այդ համոզմանն ենք հանգում հետևյալ պարզ պատճառով. Մշեցու ժամանակակիցները վը-

³⁴ Ա. Մաթևոսյանը հիմնավորում է, որ համալսարանը հիմնադրվել է 1282 թ., տե՛ս «Գարուն», 1980, № 7, էջ 55—59:

³⁵ Գ. Հովսեփյան, Ազվ. աշխ., էջ 252, Ա. Ավետիսյան, Հայկական մանրագրչության Գլաձորի դպրոցը, էջ 15—16: Լ. Խաչերյան, Գլաձորի համալսարանը, 1973, էջ 45 և այլն:

³⁶ Տե՛ս Գ. Հովսեփյան, Ազվ. աշխ., էջ 280:

³⁴ «Յայնպուրք», Կ. Պոլիս, 1780, էջ 358:



Նկ. 19. Նորահայտ արձանագրված
խաչքար Թանահատ-Գլաձորից:



Նկ. 20. Բազիլիկ եկեղեցուց
ղեպի հարավ գտնվող Նորահայտ
բնակելի տուն բախարիկով:

կայում են, որ նա թաղված է եկեղեցում: Լ. Խաչերյանը այս առթիվ գրում է. «Հետագայում Ներսես Մշեցու շիրիմը, այլ «աշխարհալույս» վարդապետների և ուսումնականների շիրիմների հետ միասին, հիշատակվում է Հովհաննես վարդապետի ճառերից մեկում, որպես թե ամփոփված է եկեղեցում, իհարկե նպատակ չունենալով նշելու յուրաքանչյուրի կոնկրետ վայրը. «... և գաշխարհալույս վարդապետան՝ գԳոշ, գՎանակյան, գՎարդան, գՆերսես, գԵսայի, որ կան շիրիմք ևնցա առ դուրս սբ. եկեղեցոյ, որով այժմ արդիւնաւորի եկեղեցի ի բանից ևնցա»³⁷:

³⁷ Տե՛ս Լ. Խաչերյան, Գլաձորի համալսարանը, էջ 42:

Ներսես Մշեցու գերեզմանի տեղադրության մասին առավել ստույգ տեղեկություն է հաղորդում Հակոբ Թագորցի գրիչը, որը 1318 թվին արտագրած ձեռագրի հիշատակարանում գրում է. «... ընդ հովանեա սուրբ Ստեփանոսի և կենսակիր աստուածաբաղձ սուրբ Նշանիս որ է ճշմարիտ ի կենաց փայտէն, և դամբարանի սուրբ վարդապետին Ներսէսի»³⁸: Հետևաբար, կասկած չի կարող նրա թաղման տեղի մասին: Բայց համապատասխան ստույգ արձանագրություն չունենք, որի պատճառը հետևյալն է. սբ. Նշանի պեղումներով բացված վեց տապանաքարերից չորսը նախկինում ունեցել են համապատասխան արձանագրություններ, բայց բոլորն էլ, առանց բացառության, եղծվել են տապանաքարերի վատ որակի հետևանքով³⁹: Հայտնի է, որ միջին դարերում աչքի ընկնող գործիչներին թաղում էին եկեղեցիներին կից ու վրան կառուցում համապատասխան մատուռ-դամբարաններ: Որպես օրինակ կարող է ծառայել Մաշտոց կաթողիկոսի համար կառուցված մատուռ-դամբարանը Գառնիում⁴⁰:

Այսպիսով, հավանական պետք է համարել, որ Ներսես Մշեցու մահից անմիջապես հետո՝ 1284 թվին, նրա գերեզմանի վրա կառուցել են սբ. Նշան մատուռ-դամբարանը, ի պատիվ այն մեծ երախտիքի, որ վաստակել էր այդ աչքի ընկնող մշակութային գործիչը⁴¹:

2. ԵՍԱՅԻ ՆՇԵՑԻՆ Գլաձորի համալսարանի ոգին էր: Ներսես Մշեցու մահից հետո, մինչև իր կյանքի վերջը նա մնում է որպես անփոխարինելի րաբունապետ: Սկզբնական շրջանում աշակերտում է Ներսես Մշեցուն ու հետևելով նրան, տեղափոխվում մենաստանից-մենաստան, մինչև որ 1282 թվին հանգրվանում են Ադրբեյջանի վանք-Գլաձորում⁴²: Եսայի Նշեցու մասին ժամանակակիցները մեծ գովեստով են խոսում: Օրինակ, Մկրտիչ Թեղեկեաց րաբունին Եսայի Նշեցուն անվանում է. «հոգեհանճար, գերիմաստ

44 45

³⁸ Ղ. Ավիշան, Աշվ. աշխ., էջ 135 (տե՛ս ձեռագիր հիշատակարանի լուսանկարը):

³⁹ Այդ փաստի վրա մենք ուշադրություն ենք հրավիրել վերևում, մատուռ-դամբարանի պեղումները նկարագրելիս:

⁴⁰ Բ. Առաքելյան, Գ. Կարախանյան, Գառնի 3, Երևան, 1962, էջ 91—32:


⁴¹ Հաշվի առնենք նաև այն հանգամանքը, որ սբ. Նշան մատուռ-դամբարանը ոչ թե գմբեթաղ է, այլ թաղածածկ, որը առավել բնորոշ է մատուռ-դամբարաններին:

⁴² Գ. Հովսեփյան, Աշվ. աշխ., էջ 259—261:

րաբունապետ և հայր հոգևոր», կամ «քաղցրահանճար փիլիսոփա և րաբունի... տիեզերալոյս րաբունապետ», իսկ Հակոբ Թագորցին՝ «ներհուն հոեւոր հանուրց հալկազեանց և լուսատու ջահ մանկանց եկեղեցոյ»: Հովսեփ Գրչի 1291 թվին գրած հիշատակարանում Եսային կոչված է «բազմաբարի, աստուածագութ և սրբազան վարդապետ», կամ՝ «... գերափառ եւ հրաշագեղ ոգի մեծ րաբունապետին Յեսաեա»⁴³: Պողոս վարդապետը 1314 թվին գրում է, որ եկել է ուսանելու «... ի գաւառս Վայոց ձոր կոչեցեալ, ի վանս Գլածոր, առ ոտս երիցս երանեալ րաբունապետին Եսայեայ, որ իբրեւ զարեգակն լուսաորեալ պայծառացուցանէ զբոլոր ազգս եւ զեկեղեցիս Հայաստան աշխարհիս»⁴⁴: Այս առիթով բազմավաստակ բանասեր Գ. Հովսեփյանը գրում է. «Որքան և չափազանցություն լինին գովասանքների մեջ և մասամբ հետևողություն սովորական դարձած արտահայտությունների, անուրանալի է մարդու (Եսայի Նչեցու— Ի. Ղ.) մեծ հռչակն ու հեղինակությունը, որ կերևա և Գլածորի վաթսունամյա արդյունքի մեջ, որչափ հաջողվել է մեզ ի մի բերել»⁴⁵:

Եսայի Նչեցին իր շուրջ վաթսունամյա գործունեության ընթացքում խոշոր ծառայություն է մատուցել գիտության ու կրթության զարգացման գործին, միաժամանակ ակտիվորեն մասնակցել է երկրի հասարակական-քաղաքական կյանքին: Պատահական չէ, որ երբ 1295 թվին Արևելյան Հայաստանի աշխարհիկ և հոգևոր առաջնորդները Կիլիկիայի կաթողիկոս Գրիգոր Անավարզեցուն պաշտոնական համախոսական են գրում, դրա տակ առանց վարանման ստորագրում է նաև Եսայի Նչեցին իր, վարդապետների ու աշակերտների անունից: Ըստ Օրբելյանի, նա գրում է. «Ես Եսայի՝ կրսեր բանասիրաց, և յետին վարժապետ, իմով աշակերտօքս համախոհ եմ և միաբան եմ սպսմ գրոյ...»⁴⁶:

Եսայի Նչեցու մեծ հեղինակության մասին է վկայում նաև այն փաստը, որ Օրբելյան Լիպարիտ իշխանի որդի Չեսարը իր կառուցած Սելիմի կարավանատան 1332 թ. շինարարական արձանագրության մեջ մոնղոլական տիրակալ Բուսայիդ խանից անմիջապես հետո իրեն ժամանակի ակնառու գործիչ, այս խոսքերով է հիշատակում Եսայի Նչեցուն. «Ակիզբն տանս րաբունապետին



Նկ. 21. Թանահատ-Գլածոր պեղումներից հետո ճարավից

Եսառ, եւ կատարումն աղաթիւք նորա: Ի թվիս : 22Ա: (=1332): (ԴԻՎԱՆ 3, № 545):

Եսայի Նչեցին մահանում է խորին ծերության հասակում, 1338 թվականին, ինչպես վկայում է Սամուել Անեցին⁴⁷, և թաղվում Գլածորի համալսարանում: Հավանաբար մեզ նորից անհրաժեշտ է անդրադառնալ Հովհաննես վարդապետի ճառին, որը մեջբերեցինք Ներսես Մշեցու առիթով: Այստեղ, ինչպես տեսանք, հեղինակը պնդում է, որ նշված անձնավորությունները ամփոփված են եկեղեցիների ներսում: Նա գրում է. «... Եւ զաշխարհալոյս վարդապետսն՝ ... զՆերսես, զԵսայի, որ կան շիրիմք նոցա առ դուրս սբ. եկեղեցոյ...»: Հետևաբար մենք պետք է Եսայի Նչեցու շիրիմը ևս փնտրենք Թանահատ—Գլածորում մեզ հայտնի երեք շինությունների, այն է՝ սբ. Ստեփանոս եկեղեցու, սբ. Նշան մատուռ-դամբարանի և 5—7-րդ դարերի բազիլիկ եկեղեցու մեջ:

Դժբախտաբար, այս երեք կառույցներում մեզ չի հաջողվել գտնել արձանագիր տապանաքար Եսայի Նչեցու անունով: Բայց պետք է նկատենք, որ պեղումների ժամանակ, 5—7-րդ դարերի բազիլիկ եկեղեցու հյուսիս-արևելյան խորանի մեջ, բեմի առջև

⁴³ Նույն տեղում, էջ 261:

⁴⁴ «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», էջ 99:

⁴⁵ Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 257:

⁴⁶ Ստ. Օրբելյան, նշվ. աշխ., էջ 462:

⁴⁷ Ժամանակագրութիւն Սամուելի քահանայի Անեցոյ, Վաղարշապատ, 1893, էջ 168:

հայտնաբերվեց մի հարթ տապանաքար առանց արձանագրության: Նկատել ենք նաև, որ այդ տապանաքարը իր ճարտարապետական մշակումով հար և նման է 14-րդ դարի առաջին կեսի թվակիր տապանաքարերին: Հետևաբար, օգտվելով հնագիտության մեջ կիրառվող համեմատական մեթոդից, մենք կարող ենք այդ տապանաքարը թվագրել հենց 14-րդ դարի առաջին կեսով: Բայց միայն այդքանով հարցը չի լուծվում:

Հայկական եկեղեցու կանոնագրքերից մեզ հայտնի է նաև այն իրողությունը, որ չէր թույլատրվում թաղումներ կատարել եկեղեցու ներսում: Մասամբ այդ պատճառով առաջացան 12—13-րդ դարերի ընթացքում եկեղեցիներին կից գավիթները, որոնք նախատեսված էին նաև թաղումներ կատարելու համար: Չէ որ եկեղեցին իր եկամտի մի բաժինն էլ ստանում էր այս ճանապարհով: Գավիթների կառուցումից առաջ և նրա հետ միաժամանակ այդ նույն նպատակով լայն տարածում էր ստացել նաև մատուռ-դամբարանների կառուցումը: Սակայն այս գործող կարգից խիստ բացառություն էր արվում միայն այն անձնավորությունների համար, որոնք իրենց կենդանության ժամանակ ձեռք էին բերում համազգային մեծ համբավ և հեղինակություն՝ դասվելով սրբերի շարքը: Այդպիսիներին թաղում էին եկեղեցիների ներսում՝ խորաններում: Միջին դարերի մեր պատմությունից ու մատենագրու-



Նկ. 22. Սեղանատունը պեղումներից հետո:

թյունից գիտենք, որ նման մարդկանց թվին են դասվել Մխիթար Գոշը, Վանական վարդապետը, Վարդան Արևելյցին, Գրիգոր Տաթևացին և ուրիշներ:

Այժմ հարց է ծագում, ով կարող էր լինել այն անձնավորությունը, որը 14-րդ դարի առաջին կեսին իրավունք է նվաճել խախտելու եկեղեցական կանոնագրքում արձանագրված կանոնը և թաղվելու Թանահատի բազիլիկ եկեղեցու հյուսիս-արևելյան խորանի մեջ: Վերը շարադրվածից արդյոք չի՞ հետևում, որ մենք իրավացիորեն կարող ենք այդ առանց արձանագրության տապանաքարը վերագրել Գլաձորի համալսարանի անփոխարինելի բաբունապետ, իր ժամանակի գիտական, կրոնական և աշխարհիկ հարցերում խոշոր դեր խաղացած, անուրանալի ծառայությունների տեր, ժամանակակիցների կողմից բարձր գնահատված և սրբերի շարքը դասված Եսայի Նչեցուն: Իսկ ինչո՞ւ այդ տապանաքարի վրա չկա համապատասխան արձանագրություն: Այս հարցին ևս դժվար չէ պատասխանել. Մխիթար Գոշի, Վանական վարդապետի, Գրիգոր Տաթևացու և այլոց շիրիմների վրա դրված տապանաքարերը նույնպես արձանագրություն չունեն:

Այսպիսով, Եսայի Նչեցին պետք է որ թաղված լինի Թանահատ—Գլաձոր վանական համալիրի մեջ մտնող, 5—7-րդ դարերում կառուցված և հետագայում մի քանի անգամ վերանորոգված բազիլիկ եկեղեցու հյուսիս-արևելյան խորանի մեջ:

3. **ԴԱՎԻԹ ՍԱՍՆԵՑԻՆ** Ներսես Մշեցու ավագ աշակերտներից էր և դեռևս Մշո Առաքելոց վանքում արդեն վարդապետական աստիճան ուներ: 1275 թվին այդ վանքում գրված ձեռագրերից մեկի հիշատակարանում Գրիգոր գրիչը խնդրում է հիշել. «Եւ գմեր վարդապետն Դավիթ ընդ նմա արժանի արասցէ Քրիստոս յիւր արքայութեան»⁴⁸: Այս անձնավորությունը 1282 թվականին Եւտայի Նչեցու հետ միասին հետևում է Ներսես Մշեցուն և տեղափոխվում Գլաձոր: Իսկ 1284 թվականից, Ներսեսի մահից հետո դառնում է Գլաձորի համալսարանի երկրորդ դեմքը: Այդ է հաստատում Տիրատուր Կիլիկեցին 1309 թվին գրած հիշատակարանում. «... ի մեծ դպրատանս, որ կոչի Գլաձոր ի վարժապետութեան մեծիս Եսայեայ և եռամեծին Դավթայ...»⁴⁹: Նույնպիսի կա-

⁴⁸ Գ. Հովսեփյան, Աշվ. աշխ., էջ 265:

⁴⁹ «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», էջ 60: Հարկ է նշել, որ այս նույն հիշատակարանը օգտագործել է նաև Գ. Հովսեփյանը, բայց սխալմամբ այն թվագրվել է 1300 թ. (տե՛ս Գ. Հովսեփյան, Աշվ. աշխ., էջ 265):

րևոր վկայությունն է 1321 թվին Կյուրեղ գրչի գրած հիշատակարանը. «... և ի վարժապետութեան սուրբ և բազմերջանիկ քաջ հոետորաց Հայոց՝ երկուց ամուլաց ճշմարիտ հաւատոց մերոց՝ Դաւթի և Եսայեա: Ի հռչակսոր և սուրբ մենաստան համալսարանիս Գլաձորոյ ընդ հովանեաւ սուրբ Ստեփանոսի և աստուածընկալ վերասացեալ դպրապետաց»⁵⁰: Այս ավետարանը Դավիթ Սասնեցին նվիրում է Սպիտակավոր Աստվածածնի ճորակառոյց եկեղեցուն հետևյալ մակագրությամբ. «Նուասոս ի շարս ուսուցչապետաց Դաւթի, շնորհեցի գտորբ անտարանս սուրբ Աստուածածնին և առաջնորդի սուրբ անապատին՝ Մկրտչին՝ հոգևոր որդեկին իմոյ, ի յիշատակ հոգոց իմոց...»⁵¹:

Գլաձորի համալսարանում 1321 թվականից հետո գրված և ոչ մի ձեռագրում այլևս չենք հանդիպում Դավիթ անվանը: 1328 թվին հիշատակված Դավիթը՝ Դավիթ Գետկեցին է և, իհարկե, կապ չունի Դավիթ Սասնեցու հետ: Իսկ 1329 թ. Վերի Նորավանքում գրված մի հիշատակարանից տեղեկանում ենք, որ Դավիթ ըստնապետը վաղուց ի վեր մահացած էր: Այնտեղ Ստեփանոս Գրիչը մասնավորապես ասում է. «... ի վարժապետութեան տանս Արեւելեաց մեծաշնորհ հոետորի Յեսայեայ հօր և ուսուցչի վերասացեալ տանս աստծոյ սուրբ ըստնապետիս Կիրիոնի, սպասաւոր սբ. գերեզմանի ըստնապետին Դաւթի, ի թուականութեանըս հայոց ՉԸԸ (=1329)»⁵²: Հետևաբար, ակներև է, որ Դավիթ Սասնեցին մահացած պետք է լիներ 1321—1328 թվականների միջև: Նա մահացել ու թաղվել է Գլաձորի համալսարանում: Բնականաբար Դավիթ Սասնեցու անյունը նույնպես պետք է որոնել Թանահատի վանքում:

Եվ իրոք, սբ. Ստեփանոս եկեղեցու արևելյան պատի տակ մեր կողմից պեղված տասնամյակներից երկրորդը, որը խիստ տարբերվում է մյուսներից իր բարձրարվեստ գեղազարդմամբ, վրան ունի հետևյալ արձանագրությունը.

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍ
 ԴԱՎԻԹ ԲԱՀԱՆԱՅԻ, ՈՐ ՏԱՐԱԺԱՄ Ի ԲՐԻՍ-
 ՏՈՍ ՓՈՒՆԵՑԱԻ: ՅԱՎԱԻԹՍ ՅԻՇԵՅԷՔ ԹՎԻՆ : ԶԸԱ: (= 1322): 50.
 (Աւտո, արձ. № 79):

⁵⁰ Նույն տեղում, էջ 166:
⁵¹ Նույն տեղում, էջ 167:
⁵² «Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց», կազմեց Ն. Պողոսյան, Երուսաղեմ, 1967, հ-բ, էջ 316:



Նկ. 23. Պեղումներով հայտնաբերված հուշարձանների բաւեր և ճարտարապետական մանրամասներ:



Նկ. 24. Նորահայտ խաչքար արևմտյան գերեզմանատանը:

Կասկած չի կարող լինել, որ այս տասնամյաքարը պատկանում է Դավիթ Սասնեցուն և որ նա մահացել է 1322 թվին: Այդ թվականը միանգամայն համընկնում է մեր մատենագրության մեջ պահպանված այն տեղեկություններին, որոնք վերաբերում են Գլաձորի համալսարանի ըստնապետ Դավիթ Սասնեցու գործունեության ժամանակագրությանը⁵³:

⁵³ Լ. Խաչերյանը նկարագրելով Դավիթ Սասնեցու գործունեությունը Գլաձորի համալսարանում, առանց բավարար թիմքի նրա մահը դնում է 1328—1329 թթ. միջև: Հարց է առաջանում՝ այդ դեպքում ինչո՞ւ ոչ 1322, 23, 24... և այլն թվերին: Զե որ 1321 թ. հետո նրա անունով մեզ չի հասել ոչ մի ձեռագիր

Տապանագրի քահանա անվանումը չպետք է տարակուսանք հարուցի, քանի որ միջին դարերում այնպիսի հայտնի գիտնական-այրեր, որոնք մեր պատմությունը, տոմարը, փիլիսոփայությունը և լեզուն հարստացրել են անգնահատելի գանձերով, նույնպես ունեցել են եկեղեցական հասարակ կոչումներ (օրինակ՝ Հովհաննես Սարկավազը, որ իր անբավ գիտելիքների համար «իմաստաւեր» էր կոչվում կամ՝ նշանավոր ժամանակագիր քահանա Անեցին և ուրիշներ)⁵⁴:

4. ՏԻՐԱՏՈՒՐ: Գլաձորի համալսարանում խոշոր դեր է խաղացել և որոշ ժամանակ Եսայի Նչեցու հետ միասին ընթացակետ է եղել: Նրա մասին առաջին տեղեկությունն իմանում ենք 1309 թվին Գլաձորում իր իսկ գրած հիշատակարանից, որտեղ իր մասին հայտնում է հետևյալը. «... ձեռամբ անիմաստ գրչի Տիրատուր Կիլիկեցու: Արդ աղաչեմ զհանդիպալոս յիշել յարժանատր յաղաթս ձեր զանպիտան գրչակս...»⁵⁵: Դրանից 12 տարի անց՝ 1321 թվականին գրված մի ձեռագիր հիշատակարանում արդեն Տիրատուրն իրեն անվանում է **բաբունի**՝ «Ես՝ նուստ և յետինս ի բանասիրաց Տիրատուր **բաբունի**, սոսցս զսոսս զայս բազում աշխատութեամբ...»⁵⁶: Այնուհետև, Տիրատուր բաբունու մասին 1337 թվին գրված հիշատակարանում մեզ տեղեկություն է հայտնում Ավաք-տեր վարդապետը. «... որ բազում ժամանակս աշխատեցայ առ ոտս մեծ բաբունապետացն Յեսայի և Տիր(ատր)-

ոյ և գնեցի զայս ի հալալ ընչից իմոց՝ ի Ծ: (100) մթխալ արծաթ, ի Գայիձորին, ի թվ(ին) հայոց 292 (1337)»⁵⁷:

Այսպիսով, ակներև է, որ Տիրատուր Կիլիկեցին Գլաձորի համալսարանի վերջին տարիների գործունեության ընթացքում արդեն հասել էր ընթացակետի աստիճանի և հիշատակվում է Եսայի Նչեցու հետ միասին: Մեկ տարի անց՝ 1338 թվականին Գլաձորից քիչ հեռու գտնվող Հերմոնի վանքում գրված ձեռագրի հիշատակարանում Տիրատուրն արդեն հիշատակվում է իբրև տեղի դպրոցի ուսուցչապետ ու բնութագրվում առավել բարձր մակարդակներով: Ահա թե այդ առթիվ ինչ է վկայում Գրիգոր գրիչը. «... (Գծագրեցա) ի նահանգս Վայոց ձոր, ի վանս Հերմոնի, ... ի վարժապետութեան ընդհանուր հայկազեանս սեռի երջանկի, մեծի և երիցս երանեալ հոռտորի Տիրատուր առձայնելոյ, առ որ կամք դեգերեալ վարժս կրթութեան... որպէս զառակ առ ծնող...»⁵⁸: Ավելի ուշ՝ 1349 թվականին, Մովսէս Կրոնավորն իր հիշատակարանում Տիրատուրի մասին վկայում է. «Գրեցա ... ի նահանգս Սիւնեաց, ի Զորս Վայոց, ի վանս Հերմոնի ... առ ոտս մեծ վարժապետիս Տիրատուր կոչեցեալ, կամօք ձեռնոտութեամբ սորին, ձեռամբ Մովսէս կրանատրի, անարժան քահանայի, յետին և տըկար ի սպասաորս բանի, ի թուականութեան... 292 (1349)»⁵⁹:

Այսպիսով, Տիրատուր ընթացակետը դեռևս 1338 թվականին, հավանաբար Եսայի Նչեցու մահից անմիջապես հետո թողնում է Գլաձորի համալսարանը և տեղափոխվում նրանից քիչ հեռու գտնվող Հերմոնի վանքը: Ինչպես Գ. Հովսեփյանն է գրում. «Նորա մահվամբ (Եսայի Նչեցու— Ի. Ղ.) մեռնում է և դպրոցը Գլաձորում»: Եվ վերը հիշատակված վկայությունները հաստատում են այդ միտքը: Փաստորեն, Եսայի Նչեցու մահվանից անմիջապես հետո ստեղծված քաղաքական և տնտեսական անպաստ պայմանների հետևանքով քայքայվեց Գլաձորի համալսարանը, իսկ նրա սաների ու բաբունիների մեծ մասը տեղափոխվեց Մեծոփի, Հերմոնի, Երզնկայի և հատկապես Տաթևի վանական համալիրներ, ուր նրանք հիմնադրեցին նոր ուսումնագիտական օջախներ:

կամ որևէ հիշատակություն նրա կենդանի լինելու մասին: Մեր վկայակոչած արձանագրության մեջ որոշակի նշվում է, որ Դավիթը «տարածամ» մահացել է 1322 թվին: Եվ, իրոք, եթե Դավիթը Եսայի Նչեցու հետ միասին աշակերտել է Ներսես Մշեցուն, ուրեմն նրանք հասակակիցներ են եղել, և այդ պատճառով նրա մահը 1322 թ. համարվում է «տարածամ», նկատի ունենալով Եսայի Նչեցու և ուրիշների մահվան ժամանակը:

⁵⁴ Ինչպես ականավոր հոգևոր-գիտնական այրերին տրվող քահանա հասկացության, այնպես էլ Գլաձորի համալսարանին վերաբերող բազմաթիվ հարցերի է՝ անդրադարձել Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի գիտաշխատող Փ. Անթափյանը իր հոդվածում, որտեղ շատ որոշակի և արդարացիորեն քննադատվում են Լ. Խաչերյանի անհիմն տեսակետները և անուղղակիորեն արդարացվում է մեր եզրահանգումը (տե՛ս Փ. Անթափյան, Արդյո՞ք հայ առաջին համալսարանը Գլաձորն է, «Բանբեր Երևանի համալսարանի», 1974, № 2, էջ 192—205):


⁵⁵ Ժ. Դարի հիշատակարաններ, էջ 60:

⁵⁶ Նույն տեղում, էջ 174:




⁵⁷ Նույն տեղում, էջ 294: Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 276—277:

⁵⁸ «Ժ. Դարի հիշատակարաններ», էջ 303—304: Լ. Խաչերյանը այս հիշատակարանի ժամանակը դնում է 1349 թ., մի բան, որ իրականությանը չի համապատասխանում և հակասում է Տիրատուրի գործունեության ժամանակին Գլաձորի և Հերմոնի վանքերում:

⁵⁹ Նույն տեղում, էջ 378:



Քրիստոսի Ստեփանոսի կողմից կառուցված համալսարանի և արձանատուի հիմնաքարերի



Նկ. 25. Նորաճայտ տապանաձևերի և եռանկյ վրա եղած արձանագրությունների գրչագրերը ըստ Ս. Մաթևոսյանի:

Դրանցից առավել աչքի ընկնողը Տաթևի համալսարանն էր՝ Հովհանն Որոտնեցու և հետագայում՝ նրա աշակերտ Գրիգոր Տաթևացու գլխավորությամբ:

5. **ՍՏԵՓԱՆՈՍ:** Դեռևս 1279 թվին Մշո Առաքելոց վանքում գրված ձեռագիր հիշատակարանից գիտենք, որ Եսայի Նչեցին աշխատել է Ստեփանոս անունով մի գրչի հետ և 1282-ին, նրա և Դավիթ Սասնեցու հետ տեղափոխվել Գլաձորի վանքը: Գրիչ Ստեփանոսի մասին Ներսես Մշեցու մահից առաջ՝ 1282 թ. Եսայի Նչեցու գրած ձեռագիր հիշատակարանում կարդում ենք. «Ձհամշիրակ եղբայր իմ Ստեփանոս, որ գորինակս քարտի հանդերձ շնորհեց. յիշեսչիք ընդ նմին եւ զամենամեղ գրիչս Եսայի, աղաչեմ»⁶⁰: Երկու տարի անց՝ 1284 թ. մեկ այլ ձեռագրում Եսային խնդրում է հիշել «գսիրելի եղբայրս Ստեփանոս, սպասատր բանի...»: Նույն անձնավորության մասին 1318 թվականին գրված Եսայի Նչեցու Աստվածաշունչ մատյանի 113ա էջի լուսանցքում, որն, ի դեպ, նկարագարդել է տաղանդավոր մանրանկարիչ Թորոս Տարոնացին, կարդում ենք. «**Ստեփան աղաչեմ յիշել ի տ էր**»⁶¹:

Այս վերջին լուսանցագիրը պարզում է, որ Ստեփանոսը արդեն 1318 թ. առաջ մահացած էր, և այդ պատճառով խնդրում են «յիշել ի տեր»: Բայց թե երբ է նա մահացել և որտեղ է թաղվել, ցավոք, ձեռագրերի հիշատակարանները որոշակի ոչինչ չեն հայտնում: Թանահատի համալիրի պեղումների ժամանակ, սբ. Ստեփանոս եկեղեցու մուտքի աջ կողմում հայտնաբերել ենք ջարդված մի խաչքար, որի վրա պահպանվել է հետևյալ արձանագրությունը (այն, մեր կարծիքով, կարող է նպաստել Ստեփանոսի մահվան և թաղման հանգամանքների պարզաբանմանը).

ԵՄ՝ ՍՏԵՓԱՆՈՍ ԱԲԵՂԷՍ ԿԱՆԿ-
ՆԵՑԻ ԶԽԱԶՍ ՓՐԿՈՒԹԻՒՆ ՀՈԳՈ ԻՄ[Ո] ԵԻ
Ծ] ՆՈՂԱՑ ԻՄ[Ո]Ց: (Աստ, արձ. № 61):

Բացի այդ, նորաքաց բազիլիկ եկեղեցու գավթի պեղումների ժամանակ ի հայտ եկած բազմաթիվ տապանաքարերից մեկի վրա, որը կապույտ բազալտից է, փորագրված է հետևյալ արձանագրությունը.

⁶⁰ Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 260:
⁶¹ Նույն տեղում, էջ 268:

Սրանից կարելի է կոսմել, որ արձանագիր խաչքար կանգնեցնողը, Ներսես Մշեցու աշակերտն ու Եսայի Նշեցու ընկերը և սույն տապանաքարի տակ հանգչողը նույն անձնավորությունն է: Դա առավել համոզիչ է դառնում, եթե նկատի ունենանք տապանաքարի վրա քանդակված գեղազարդ գավազանը՝ ի նշան թաղվածի հոգևոր բարձր կոչման (տե՛ս № 78 բնագրի լուսանկարը և գրչագիրը):

6—7. ՍԱՐԳԻՍ Ա, ՍԱՐԳԻՍ Բ: Գլածորում գրված 1317 թ. ձեռագրում հիշատակվում է ոմն «Սարգիս արեղա սպասաւոր բանի»⁶²: Իսկ մեկ տարի անց՝ 1318 թվականի ձեռագիր հիշատակարանում նույն Սարգիսն իր մասին գրում է. «Ես, Սարգիս համբակ եւ սպասաւոր բանի տկար մարմնով եւ տառապեալ անձամբ բազում աշխատութեամբ ծրագրեցի գաայ...: Ի թվ. 24Է., ի գաւառիս Վայոց ձորոյ յանապատս Գլածոր, ընդ հովանեաւ սրբոյն Ստեփանոսի, եւ մեծ վարդապետի, եւ անյախթ հոնտորի՝ Եսաեա»⁶³: Նույն անձնավորության մասին Գրիգոր գրիչը իր արտագրած գրքի հիշատակարանի 331ա էջում գրում է. «... Ի թուակաւութեան հայկազեանս տոմարի 22Դ (1335), ... ի գաւառիս Վայոյձոր, բարձրադիտակ մեանաստանիս Գլածոր, որ յանհմուտ և գնչու արանց Գայլածոր ասի...: Արդ, որ ոք պատահի յարձանաւնշունչս, բայց բանօոր իբր կենդան ընթերցեալ, յիշեսչիք ի բարի գտացօղ սորայ և զվաեւօղ՝ զՍարգիս քահանայ, որ հանդերձեալ է գօազան առ(ն)ույ ըաբունի...»⁶⁴: Այս նույն ձեռագրի 44ա էջում Սարգիս քահանան իր մասին գրում է. «Ջստացաղ սուրբ մատենիս... ի Ներսիսէ եպիսկոպոսէ՝ զհամաւնունակի, ըզՍարգիս պատուական քահանայ և ընտիր կրանատրս, գտացաղ սուրբ տառիս...»⁶⁵: Մի այլ (305բ) էջում Սարգիս ըաբունին գրում է. «... Ես Սարգիս պիտակաբար քահանայ. զձեւ ունելով, բայց գործըն պակաս: Արդ աղաչեմ զամենեւեան զմեզ եւ զմիևսկեց եղ-



Նկ. 26. Նորահայտ խաչքար բազիլիկ եկեղեցու առեմտյան պատի մեջ:

բայրն իմ զնիս Սարգիս (ընդգծումը մերն է— Ի. Ղ.) սբ. արտի եւ աներկբայ բանի եւ Աստուած յիշողացտ եւ յիշելոցս առհասարակ ողորմեսցի...»⁶⁶:

Գ. Հովսեփյանն այս Սարգիս քահանային, որը պատրաստվում է ըստ բնագրի գավազան կրելու, նույնացնում է 1317 և 1318

⁶² Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 276:
⁶³ Նույն տեղում, էջ 271:
⁶⁴ «ԺԴ դարի հիշատակարաններ», էջ 271—272: («Գաւազան» քաղ գրված է «Գօզան» նկով:
⁶⁵ «ԺԴ դարի հիշատակարաններ», էջ 271—272:

Սարգիս հիշատակարանը տե՛ս Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., Բ հավելվածի № 88-ի տակ:

թվականների վերը մեջ բերած հիշատակարաններում վկայված «Սարգիս արեղա, սպասաւոր բանի» անձնավորության հետ⁶⁷: Մենք համաձայն ենք Գ. Հովսեփյանի այս տեսությանը, Սարգիս արեղայի և Սարգիս քահանա-րաբունի նույնացման մասին, և անհամոզիչ ենք համարում Լ. Խաչերյանի այն թյուր կարծիքը, ըստ որի դրանք տարբեր անձնավորություններ են: Միաժամանակ հարկ է նշել, որ 1335 թվականին, ինչպես հիշատակարանից ենք իմանում, ապրել և գործել է մեկ այլ Սարգիս՝ «եղբայրն իմ զմիս Սարգիս», որին խնդրում է հիշել Սարգիս քահանա-րաբունին:

Սարգիս րաբունու և «եղբայրն իմ զմիս Սարգիս» անունների հիշատակությունը Գլաձորում գրված ձեռագիր հիշատակարանում ավելի հավանական է դարձնում տարիներ առաջ մեր հայտնած այն կարծիքը, ըստ որի Գլաձորում իրենց գործունեությունը ծավալած երկու Սարգիսն էլ թաղված են Թանահատի սբ. Ստեփանոս եկեղեցու արևելյան պատի տակ⁶⁸:

Եվ իրոք, Դավիթ քահանա-րաբունապետի տապանաքարից դեպի հյուսիս, արձանագրված տապանաքարերից մեկի վրա փորագրված է.

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՍԱՐԳԻՍ ՔԱՀԱՆԱՅԻ, ՈՐ ՏԱՐԱԺԱՄ
Ի ՔՐԻՍՏՈՍ ՓՈԽԵՑԱԻ: ԱՂԱԶԵՄ ՅԱՂԱԻԹՍ ՅԻՇԵՑԷԷ:
ԹՎ : ՊԵ: (1356): (Աստ, արձ. № 83):

Իսկ սրանից մեկ քար այն կողմ կա մեկ այլ տապանագիր հետևյալ բովանդակությամբ.

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՍԱՐԳԻՍ ՔԱՀԱՆԱՅ: ԹՎ[ԻՆ] 2ՂԳ:
(= 1344): (Աստ, արձ. № 81):

Թե այս երկու Սարգիսներից որն է ստեղծագործել 1317—18 թվականներին ու հետագայում հասել րաբունու աստիճանի և որը մահացել «տարածամ հասակի», տապանագրերով դժվարանում ենք ստույգ առանձնացնել: Բայց որ նրանք երկուսն էլ Գլաձորի ձե-

ռագրերում հիշատակված անձնավորություններն են, վեր է ամեն կասկածից, մանավանդ որ տապանաքարերից մեկը իր վրա ունի նաև քանդակված գավազան: Իսկ դա վկայում է նրա տիրոջ հոգևոր բարձր կոչում ունենալու մասին՝ անկախ «քահանա» կոչվելուց⁶⁹: Եվ վերջապես, այդ եզրակացությանն ենք հանգում այն պարզ պատճառով, որ Եսայի Նչեցու մահից հետո, երբ Տիրատուրը և ուրիշները Գլաձորի դպրոցը տեղափոխում են Հերմոնի ու Տաթևի վանքերը, այդ ժամանակ արտագրված և մեզ հասած ձեռագրերում Գլաձորի համալսարանում ստեղծագործած Սարգիսները այլևս չեն հիշատակվում: Այդ իրողությունը ևս չպետք է աչքաթող արվի:

8. ԳՐԻԳՈՐ: Սարգիս քահանայի տապանաքարի կողքին և այդ շարքում վերջինը թաղված է ոմն Գրիգոր հետևյալ հիշատակագրությամբ.

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԳՐԻԳՈՐ
ՔԱՀԱՆԱՅԻ, ՈՐ ՓՈԽԵՑԱԻ ԱՐԻ ՔՐԻՍՏՈՍ ՏԱՐԱԺԱՄ
ՀԱՍԱԿԻ: ԹՎ : 2ՂԷ: (= 1348): (Աստ, արձ. № 82):

Գլաձորի համալսարանում մի քանի ձեռագիր է արտագրել Գրիգոր գրիչը, որի գործունեությունը սկսվում է 1330-ական թվականներից: Մեր կարծիքով «տարածամ» հասակում մահացած Գրիգորը նույն Գրիգոր գրիչն է: Եթե ճիշտ է մեր դիտողությունը, ապա կարելի է վստահ պնդել, որ երբ մահացավ Եսայի Նչեցին և որոշ չափով քայքայվեց Գլաձորի համալսարանը, բոլոր գրիչներն ու րաբունիները չէ, որ հեռացան Գլաձորից: Նրանց մի մասը՝ մեզ հայտնի երկու Սարգիսները, Գրիգորը և ուրիշները մնացին Գլաձորի վանքում և շարունակեցին իրենց գործունեությունը:

Գլաձորի համալսարանի մյուս րաբունի-րաբունապետերը, ինչպես վերը նշեցինք, հեռանում են Գլաձորից տարբեր ժամանակներում և հիմնում իրենց ինքնուրույն ուսումնագիտական կենտրոնները տարբեր վանքերին կից: Այսպես, օրինակ, Մխիթար Սասնեցին հիմնեց Մեծփա հոշակավոր դպրոցը, Կիրորոնը տեղափոխվեց Նորավանք, Մկրտիչը դարձավ Թեղենյաց դպրոցի րաբունի, Հովհաննես և Կիրակոս Երզնկացիները իրենց գործունեությունը ծավալեցին ուրիշ կենտրոններում և այլն: Բնական է, որ

⁶⁹ Երկու տապանաքարերն էլ հասարակ, ոչ այնքան լավ սշակման ենթարկված քազալտ քարեք են:

⁶⁷ Այդ առիթով Գ. Հովսեփյանը գրում է. «Ստացողն է» Սարգիս քահանա, որ հանդերձել է գօտազան առով րաբունին». հավանորեն նույնանուն անձը, որ 1317 թվին Նյուսացու գործերի ընդօրինակության հիշատակարանում իրեն «Սարգիս արեղայ սպասաւոր բանի» է կոչում» (տե՛ս Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 276):

⁶⁸ Տե՛ս Ի. Ղարիբյան, Գլաձորի համալսարանի պեղումները, Բանբեր Երեւանի համալսարանի, 1971, № 2, էջ 259—280:

հարկ չկա նրանց գերեզմանները փնտրել Գլաձորի համալսարանում կամ նրա շրջապատում:

Արդյոք վերը հիշատակված անձանց տապանաքարերի և խաչարձանների գոյությունը Թանահատի վանքի տարածքում լոկ պատահական զուգադիպություն՝ և է Գլաձորի համալսարանում ապրած և ստեղծագործած նույնանուն անձնավորությունների գործունեության ժամանակաշրջանի հետ, թե՞ այդ նույնացումը արդարացվում է պատմականորեն:

Մեր կարծիքով այդքան պատահականությունների հնարավոր չէ հանդիպել միևնույն հնավայրում: Քանի որ մեր կողմից արդեն հիշատակված անձնավորությունները հիմնականում թաղված են սբ. Ստեփանոս եկեղեցու արևելյան պատի տակ, իրար կողք-կողքի, իսկ մի մասի տապանաքարերի վրա քանդակված է գավազան՝ ի նշան նրանց հոգևոր բարձր կոչման, ուստի կարելի է հաստատապես պնդել, որ դրանք Գլաձորի համալսարանի հետ անմիջական առնչություն ունեցող գործիչների տապանաքարերն են:

Հետևապես, կարելի է ապացուցված համարել, որ հայտնաբերվել են Գլաձորի համալսարանի ավերակները, և որ համալսարանի շենքը 13—14-րդ դարերում մտել է Թանահատի վանական համալիրի մեջ ու կազմել նրա անբաժան մասը:

Այնուամենայնիվ, Գլաձոր—Թանահատ նույնացման մեր եզրակացության մեջ կան որոշ թեակալ թվացող հարցեր, որոնց կցանկանայինք նույնպես անդրադառնալ:

Ինչպես գիտենք, Գլաձորի համալսարանը ձեռագրերում հիշատակվում է Աղբերց վանք, Գլաձոր, Գայլենոր և այլ անուններով, բայց մեր պեղումների ընթացքում չի գտնվել որևէ արձանագրություն, որտեղ հիշատակվեն այդ անունները: Այս իրողությունն արդյո՞ք չի հակասում մեր նույնացմանը:

Գլաձոր կամ Աղբերց վանք անունների բացակայությունը մեր պեղումներից ի հայտ եկած նյութերում բացատրում ենք հետևյալ կերպ: Նախ, Գլաձորի համալսարանում ընդօրինակված ձեռագրերի հիշատակարաններին հետևելով նկատեցինք, որ Գլաձորը 1282-ից մինչև 1291 թվականը հիշատակվում է Աղբերց վանք անունով երկու անգամ, իսկ 1291-ից մինչև 1302 թվականը Աղբերց վանքը և Գլաձորը հիշվում են միաժամանակ: Այսպես, օրինակ, Հովհաննես գրիչը 1291 թվականի հիշատակարանում գրում է. «Ի թիս :2Խ: (1291 թ.) գրեցա մեկ[ն]ութիւն կաթողիկէիս. ձեռամբ քազմամեղ և սուտանուն կրանաւորի Յոհանիսի

60

աշկերտ ի բանի. Ի մեհաստանս որ կոչի Աղբերց վանս և մականուն Գլաձոր, ընդ հովանեաւ սրբոյն Ստեփանոսի. Ի վարժապետութեանս գիտնական և արդիւնական մեծ հոետորի Յեսաու»⁷⁰:

Սկսած 1302 թվականից Գլաձորի դպրոցը հիշվում է հիմնականում Գլաձոր, Գայլենոր, Գեղաձոր ձևերով: Այստեղից հետևում է, որ «Աղբերց վանք» անվանումը ժամանակավոր բնույթ է կրել և Գլաձորի վանքի համար բնորոշ անուն չի եղել: Նա ունեցել է մեկ այլ անուն, որով հայտնի էր հենց վանական կենտրոնը: Եթե Աղբերց վանքի անունը բնորոշ լիներ և նշանավոր, ապա Վայոց ձորին քաջատեղյակ պատմիչ Ստեփանոս Օրբելյանը նկարագրելով Վայոց ձորի վանքերը, այդ ցուցակում անպայման կհիշատակեր այդ անունը: Մանավանդ որ պատմիչը ցուցակում հիշում է նույնիսկ աննշան վանքերի անուններ: Նկատենք նաև, որ Ստեփանոս Օրբելյանը հենց Գլաձորի դպրոցում էր ուսում ստացել իր իսկ վկայությամբ⁷¹:

Մեր կարծիքով, Օրբելյանը հիշում է այդ վանքի իրական Թանահատ անունը, որը գալիս էր դեռևս 7—8-րդ դարերից: Իսկ այն հարցին, թե ինչու Օրբելյանը չի հիշատակում Գլաձոր անունը կամ համալսարանը, որոշակի կարելի է պատասխանել: Ստեփանոս Օրբելյանը իր Պատմությունը ավարտել է 1297 թվականին⁷², իսկ Գլաձոր անունը 1291—1302 թվականներին, ինչպես տեսանք, սուկ մականուն էր և որոշակի պաշտոնական բնույթ չուներ: Այդ պատճառով էլ պատմիչը ամենուրեք նշում է միայն Թանահատ անունը:

Պետք է ենթադրել, որ «Աղբերց վանք» անվանումը, որը նշանակում է աղբյուրների վանք (գրաբար աղբիր-հոգնակի՝ աղբերց) կրում է գուտ տեղագրական բնույթ և կասվում է վանքի շրջապատում գոյություն ունեցած ինչ որ աղբյուրների հետ: Թանահատի վանքը կառուցված է մի ամառի բարձունքի վրա, ուստի վանքը, ինչպես և որևէ բնակավայր այստեղ չէր կարող գոյություն ունենալ առանց ջրի և, քանի որ վանքի մերձակալքում գետ կամ գետակ չկա, ապա կենարար ջուրը կարող էր ստացվել միայն աղբյուրներից: Իրոք Թանահատի վանքից փոքր ինչ հյուսիս՝ ձորակի մեջ գտնվում են երկու հորդատառ աղբյուրներ, որոնք և ապահովել են վանական միաբանությունը ջրով: Այդ աղբյուրների

61

⁷⁰ Ղ. Ավիշան, Սիսական, էջ 131, տե՛ս հիշատակարանի լուսանկարը:

⁷¹ Ստ. Օրբելյան, ԱԶԿ. աշխ., էջ 478:

⁷² Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1970, № 3, էջ 104:

Աշահակությունն այնքան մեծ է եղել, որ վանքը ժողովրդական բնորոշ մտածողությամբ ստացել է «Աղբերց վանք» անվանումը, որը փաստորեն «Թանատ, Թանահատ—Գլածոր» անվանը կցվող լրացուցիչ անուն էր:

Գլածոր անունով մեզ ոչ մի արձանագրություն չի հասել, քանի որ նվիրատուները իրենց նվերը պետք է տալին ոչ թե Գլածորի դպրոցին, այլ գործող հոգևոր կենտրոնին (սբ. Ստեփանոս և սբ. Նշան): Եվ պատահական չէ, որ սբ. Ստեփանոս նորակառույց եկեղեցին 1280—1330-ական թվականներին, այսինքն՝ այն տարիներին, երբ բուն կերպով ուսումնագիտական գործունեություն էր ծավալվել համալսարանում, ստացել է բազմաթիվ նվերներ՝ հողամասեր, այգիներ, ջրաղացներ, դրամ և այլն, որոնց մասին խոսում են նրա պատերին փորագրված արձանագրությունները: Դրանցում ոչ մի ակնարկ չկա բարձրագույն դպրոցի և նրա ակադեմիայի գործիչների մասին: Իսկ ձեռագիր արտագրող գիշ-կազմողները իրենց աշխատանքը հիմնականում կատարում էին համալսարանական շենքում և այդ պատճառով իրենց կազմած հիշատակարաններում նշում են, մի քանի դեպքում՝ **Աղբերց վանք**, իսկ հիմնականում՝ **Գլածոր** անվանումները:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Թանահատի նման խոշոր օջախում Գլածորի համալսարանի գործունեության տարիներին ոչ մի ձեռագրում վանքի մասին որևէ հիշատակություն չկա: Այդ նկատի ունի Գ. Հովսեփյանը, երբ գրում է. «Հավանական չենք համարում, սակայն որ ԺԳ դարի կեսերից մինչև ԺԴ-ի կեսերը արձանագրություններով հարուստ մի վանքում, ուր եղել են և առաջնորդ «վարդապետ»-ներ, այդքան ամուլ լինել ձեռագրական արվեստի կողմից»⁷³: Մենք հաստատում ենք այս միտքը, միայն թե դա պետք է հասկանալ հետևյալ իմաստով. Թանահատում գրված ձեռագրերը մեզ հայտնի են Գլածորի անվան տակ, մինչդեռ իրականում այդ ձեռագրերը ընդօրինակվել կամ արտագրվել են նույն Թանահատի վանքում, ուր և տեղավորված էր Գլածորի համալսարանը:

Թանահատի վանական համալիրի մասին Գ. Հովսեփյանը եզրակացնում է. «Ինչպիսին էլ լինի, իրողություն է, որ վանքի դիրքը ԺԴ դարի կեսերից հետո՝ շատ երկրորդական էր»⁷⁴: Իրոք

որ, Գլածորի համալսարանի գործունեության ընդհատումից հետո շատ չնչին ու կցկտուր մի քանի տեղեկություններ ունենք Թանահատի վանքի մասին: Դրանք՝ ձեռագիր մեկ-երկու գրքեր են, տապանաքարեր և խաչարձաններ, որոնցից վերջինը թվագրվում է 1605 թվականով:

* * *

Ամփոփելով Թանահատի վանքի տարածքում Երևանի պետական համալսարանի հնագիտության և ազգագրության ամբիոնի կատարած հնագիտական պեղումների արդյունքները, մատենագրական աղբյուրների և փմագիր արձանագրությունների տրվյալները, կարելի է անել մի շարք եզրահանգումներ:

Պեղումների ընթացքում հայտնաբերված տապանաքարերը, որոնց վրա փորագրված են Գլածորի համալսարանի գործունեությունից մեզ հայտնի մի շարք ուսուցչապետերի անուններ, ուսումնական նպատակներով օգտագործելու համար լիովին բավարար ճարտարապետական կառույցը, ինչպես նաև պեղումներով ի հայտ եկած մի շարք կողմնակի տվյալներ, լրացվելով գրավոր աղբյուրներից մեզ հայտնի վկայություններով, հնարավոր դարձրին վերջնականապես հիմնավորել, որ Գլածորի համալսարանը գործել է Թանահատի վանական համալիրում:

Պեղումներից պարզվեց նաև, որ Թանահատի հնագույն եկեղեցին բազիլիկ ոճի ճարտարապետական կառույց է և կերտվել է 5—7-րդ դարերում: 735 թվականին Մոզ ավանում սպանված Սյունյաց Ստեփանոս եպիսկոպոսի աճյունը սբ. Խաչի վանքից տեղափոխում են և հողին հանձնում Թանահատի վանքում: Հավանական է, որ Թանահատի եկեղեցին մինչև 735 թվականը կրում էր Ստեփանոս Նախավկայի անունը, որը և նախապատվություն տրվեց թանահատցիներին՝ Ստեփանոս Սյունեցուն թաղելու իրենց վանքում: Պատահական չպետք է համարել, որ Թանահատ—Գլածորում արտագրված կամ գրված ձեռագրերի հիշատակարաններում եկեղեցին վերագրում են և Ստեփանոս Սյունեցուն, և Ստեփանոս Նախավկային: Սյունեցու գերեզմանի վրա 8-րդ դարում թանահատցիները կառուցում են մի փոքրիկ մատուռ, որի մնացորդները հայտնաբերվեցին բազիլիկ եկեղեցու հարավ-արևելյան արտաքին անկյան մոտ:

11—12-րդ դարերում բազիլիկ եկեղեցին ավերվում է օտար նվաճողների կողմից:

⁷³ Գ. Հովսեփյան, ճշվ. աշխ., էջ 243:

⁷⁴ Նույն տեղում:

Վասակ Խաղբակյանը, որի տիրույթների մեջ էր մտնում Թա-
նահատի վանական համալիրը, Հայր Սարկավագի առաջնորդու-
թյամբ այն վերակառուցում է 1215 թվականին: Վերակառուցված
եկեղեցին կրում էր սբ. Ստեփանոս անունը, այդ երևում է 1250-
ական թվականներին Օրբելյան տոհմի Լիպարիտ իշխանի չորս
որդիների նորահայտ նվիրատվական արձանագրությունից, որտեղ
նրանք **Թանահատի վանքի սբ. Ստեփանոս** եկեղեցուն զանազան
արժեքներ են նվիրում:

Թանահատի վանքը բարգավաճում է հատկապես Վասակի
որդի Պոռշ իշխանի օրոք (1223—1284 թթ.): 1273—79 թվական-
ներին Պոռշ իշխանի հրամանով բազիլիկ եկեղեցուց քիչ հյուսիս
կառուցվում է մի նոր գմբեթահարկ եկեղեցի սբ. Ստեփանոսի ա-
նունով, որի հիմքում դրվում են Սյունյաց Ստեփանոս եպիսկոպո-
սի մասունքները: Նույն ժամանակում բազիլիկ եկեղեցին թեթևա-
կի վերակառուցման է ենթարկվում Խելաշահ անունով մեկի կող-
մից: Ոչ միայն Խելաշահը, այլև նրա որդիները, դուստրերը, թոռ-
ները և հմրսները բազմաթիվ նվիրատվություններ են կատարում
Թանահատի վանական միաբանությանը, որոնց մասին հիշատակ-
վում է համալիրում պահպանված փիմագիր արձանագրություն-
ներում: Հավանաբար, այս ժամանակներում էլ ավելացվում են
բազիլիկին կից չորս նոր աշխատասենյակ-խցերը, ինչպես նաև
եկեղեցու գավիթը: Բազիլիկին կցակառուցում են մի քանի բա-
ժանմունքներով տնտեսական նշանակություն ունեցող շենքեր, ո-
րոնց մեջ պեղումների ժամանակ բացվեցին թոնիրներ, սանդեր,
խմորի քարե տաշտեր, խոհանոցային և սեղանատան խեցեղեն
առարկաներ, դանակներ և այլն:

1282 թվականից Պոռշ իշխանի հրավերով, Ներսես Մշեցի
ուսուցչապետն իր աշակերտներ Եսայի Նչեցու, Դավիթ Սասնե-
ցու, Ստեփանոսի և ուրիշների հետ Մշո Առաքելոց վանքից տե-
ղափոխվում է Թանահատի վանք և պնտեղ հիմնում Գլաձորի հա-
մալսարանը: Որպես համալսարանական շենք օգտագործվում է
վերակառուցված բազիլիկ եկեղեցին իր վեց աշխատասենյակ-խը-
ցերով, նորակառուց գավթով և տնտեսական բաժանմունքներով:

1284 թվականին Ներսես Մշեցին վախճանվում և թաղվում է
Թանահատ—Գլաձորում: Սբ. Նշան կոչվող մատուռ-դամբարանը,
հավանորեն, կառուցվել է հենց նրա գերեզմանի վրա:

Թանահատ—Գլաձորում են մահանում համալսարանի ուսուց-
չապետերից Դավիթ Սասնեցին, Գրիգորը, Ստեփանոսը, Սարգի-

սը և ուրիշներ, որոնք բոլորն էլ թաղված են հիմնականում սբ.
Ստեփանոս գմբեթահարկ եկեղեցու արևելյան պատի տակ, միև-
նույն շարքում: Նրանց տապանաքարերը համապատասխան ար-
ձանագրություններով բացվել են պեղումների ընթացքում:

1338 թվականին վախճանվում է Եսայի Նչեցին՝ համալսա-
րանի ռաբունապետը և խոշոր գիտնականը, որը դեռևս իր կեն-
դանության օրոք բարձր էր գնահատվել ժամանակակիցների կող-
մից ու դասվել սրբերի կարգը: Ուստի նրան թաղում են համալ-
սարանական շենքի (բազիլիկ եկեղեցու) հյուսիս-արևելյան խո-
րանի մեջ, խախտելով եկեղեցական այն կանոնը, որով վանքե-
րում թաղումն արգելվում էր:

Եսայի Նչեցու մահից հետո, երբ խիստ նվազել էր Թանահատ—
Գլաձորի հովանավոր Պոռշյանների իշխանական տան քաղաքա-
կան ազդեցությունը և թուլացել էր նրա տնտեսական հզորությու-
նը, համալսարանի ուսուցչապետերի մի զգալի մասը հեռանում
է Թանահատ—Գլաձորից և տարբեր տեղերում հիմնադրում նոր
դպրոցներ: Դրանցից հիշատակության արժանի են Տիրատուր Կի-
լիկեցու հիմնադրած դպրոցը Հերմոնի վանքում, Հովհան Ռոտունե-
ցու դպրոցը Տաթևում, Մխիթար Սասնեցունը՝ Մեծօփա վանքում,
Մկրտիչ րաբունու դպրոցը Թեղեկյաց վանքում և ուրիշներ:

Գլաձորի համալսարանի գործունեությունը Թանահատի վան-
քի համալիրում այդ տարիներին խիստ մեծացնում է վերջինիս հե-
ղինակությունը շրջակա բնակչության մեջ: Դրանով պետք է բա-
ցատրել 1280-ից մինչև 1350-ական թվականները Թանահատի
վանքին տրված բազմաթիվ նվիրատվությունները՝ հողամասերի,
ջրաղացների, այգիների, դրամի ձևով, որոնց մասին սբ. Ստեփա-
նոս եկեղեցու պատերին փորագրվել են բազմաթիվ նվիրատվա-
կան արձանագրություններ: Նվիրատուների թվում են 13—14-րդ
դարերի աչքի ընկող գործիչներ, իշխանական տների ներկայա-
ցուցիչներ ու նրանց ընտանիքի անդամներ:

Գլաձորի համալսարանի գործունեության դադարումից հետո
Թանահատի վանական կենտրոնը աստիճանաբար կորցնում է իր
հեղինակությունը և 15—16-րդ դարերում դառնում շատ սովորա-
կան մի վանական միաբանություն: 14-րդ դարի երկրորդ կեսից
մինչև 16-րդ դարը Թանահատում արտագրված մատյաններից
մեզ է հասել ընդամենը երեք ձեռագիր:

15—16-րդ դարերում գոյություն ունեցող քաղաքական անկա-
յուն փիճակը, Հայաստանին տիրելու համար թուրք-պարսկական
5—Գլաձոր

չդադարող պատերազմները, Շահ Աբասի՝ 1604—1605 թթ. կազմակերպած մասսայական գերեվարությունը Թանահատի վանքի ամայացման պատճառը դարձան: Միաբանությունը ցրվեց կամ գերեվարվեց, շենքերի մեծ մասը վերածվեց փլատակների: Դրա հետևանքով էլ հետագա դարերում բնակչության կողմից մոռացվեց Գլաձորի համալսարանի և անունը, և տեղադրությունը:

Թանահատի վանական համալիրը մնաց լքյալ փինակում մինչև 17—18-րդ դարերը, երբ այնտեղ վանքի տարածքում բնակություն հաստատեց թուրքալեզու մահմեդական եկվոր բնակչությունը: Նորաբնակները նախկին միաբանության և վանքի շրջակա բնակելի տները հարմարեցրին իրենց կարիքների համար: Նրանք որպես շինաքար հիմնականում օգտագործում էին հնավայրի մըշակված քարերը: Նրանք նույնիսկ հասցրեցին փոխել վանքի անունը՝ ելնելով շինաքարի սև գույնից, եկեղեցին վերանվանվեց «Ղարավանք» (Սև վանք): Այդ անունով էլ Թանահատի վանքը հայտնի դարձավ 1828 թվականի Թուրքմենչայի պայմանագրի հետևանքով Վայոց ձոր գաղթած պարսկահայ բնակչությանը:

Վանքի իրական անունը՝ Թանահատ, վերականգնվեց տեղագրագետ ուսումնասիրողների ջանքերով, իսկ մեր պեղումները ավելի հիմնավոր դարձրին այն տեսակետը, որ այստեղ է գործել Գլաձորի հուշակավոր համալսարանը:

Գ Լ Ո Ւ Մ Ն Ե Ր Ո Վ

Պ Ե Ղ Ո Ւ Մ Ն Ե Ր Ո Վ Հ Ա Յ Տ Ն Ա Բ Ե Ր Վ Ա Մ Հ Ն Ա Գ Ի Տ Ս Ա Կ Ա Ն Ա Ռ Ա Ր Կ Ա Ն Ե Ր Ը

Պեղումների ընթացքում գտնված առարկաների ուսումնասիրությամբ կարելի է պատկերացում կազմել տվյալ պատմական ժամանակաշրջանի տնտեսության, արհեստի, արվեստի ու առևտրի զարգացման մակարդակի, այդ հնավայրում բնակված մարդկանց զբաղմունքի, ճաշակի, առևտրական կապերի մասին, մանավանդ, եթե հնարավոր լինի որոշ լրացումներ կատարել գրավոր աղբյուրների ընձեռած տեղեկություններով:

Նախապես անհրաժեշտ է նշել, որ բոլոր առարկաները հողի տակ չունեն միևնույն դիմացկունությունը, և նրանց մի մասը ժամանակի ընթացքում իսպառ ոչնչանում է (կաշվե, փայտե, նուրբ մետաքսաթել և այլ առարկաները անհետ կորչում են): Հետևաբար, պեղումների ժամանակ նրանց բացակայությունը չի նշանակում, թե տվյալ բնակավայրի բնակչության կենցաղում դրանք չեն եղել: Ընդհանրապես, արհեստի առարկաների մասին խոսելիս, ինչպես պրոֆ. Կ. Ղաֆադարյանն է նշում, անհրաժեշտ է նկատի ունենալ երկու տարբեր ձևերը. մեկը՝ բուն արհեստն է իր մասնագետ արհեստավորով, որն ապրում է քաղաքում և առարկաներ է պատրաստում շուկայի համար, մյուսը՝ տնայնագործն է, որը բնակվելով գյուղերում և փոքր ագարակներում, հաճախ նաև՝ վանական համալիրներին մոտ, մեծ հմտություն չունի և տվյալ արհեստով զբաղվում է, որպեսզի մասամբ բավարարի իր շրջապատի առօրյա կարիքները¹:

Ահա այս առումով մենք պետք է դիտենք Գլաձորի վանական համալիրում պեղումներով հայտնաբերված նյութերն ու արհեստի առարկաները, զանազանելով մասնագետ արհեստավորի և տեղական տնայնագործի արտադրանքը միմյանցից:

Ինչպես և պետք էր սպասել, Գլաձորի հուշարձանախմբի պե-


¹ Կ. Ղաֆադարյան, Գլին քաղաքը և նրա պեղումները, հ. 1, Երևան, 1952, էջ 154:

դումների ընթացքում շատ քիչ նյութեր են գտնվել, համեմատած միջնադարյան Հայաստանի մյուս բնակավայրերի հետ: Մի կողմից դա կարելի է բացատրել տեղի միաբանության համեստ կյանքով ու առտնին իրերի նկատմամբ նրանց ոչ մեծ պահանջարկով², մյուս կողմից՝ այն հանգամանքով, որ Թանահատ—Գլաձորի բնակչությունը (նկատի ունենք վանական միաբանությունը) հանկարծակի չի թողել և հեռացել այնտեղից, որպեսզի նրա օգտագործած առարկաները տեղում անխաթար մնային: Կյանքը այնտեղ մահացել է դանդաղորեն: Ուստի նրանց օգտագործած պիտանի իրերն էլ կամ տեղափոխվել են այնտեղից հեռացածների կողմից, կամ շարքից դուրս գալով, դեն են նետվել ու անհայտ կորել մեզ համար:

Այսուհանդերձ, պեղումների ընթացքում ի հայտ բերված հնագիտական առարկաների ուսումնասիրությունը որոշակի նպաստ կարող է բերել Գլաձոր—Թանահատի վանական կենտրոնի և բարձրագույն դպրոցի պատմական կյանքի տարեգրության դրվագները վերականգնելու համար: Ուստի համառոտակի, ընդհանուր գծերով տալիս ենք հնագիտական գտածոների բնութագիրը:

ՄԵՏԱՂԵ ԱՌԱՐԿԱՆԵՐ: Թանահատ—Գլաձորում գտնված մետաղե իրերը շատ սակավաթիվ են: Դրանք հիմնականում երկաթից են ու պղնձից:

Երկաթե իրերից առաջին հերթին աչքի է ընկնում կեսից կոտրված մի դաշույն: Պահպանվել է վերին մասը դաստակի հետ միասին. երկարությունը 23 սմ է, իսկ դաստակինը՝ 13: Դաստակի վրա պահպանվել է երկու անցք՝ կոթը ամրացնելու համար:



Նկ. 27. Երկաթե դաշույն, բեխ:

Դաստակի գրովը կորնթարդ է, իսկ միջնամասի հետ միանում է թեք անցումով: Դաստակի բռնակի միջնամասի լայնությունը 2,5 սմ է: Հաստության մասին դատել չենք կարող, որովհետև չեն

² Ստ. Օրբելյան, Աշվ. աշխ., էջ 143:

պահպանվել փայտե կամ ոսկրե այն հատվածները, որոնք զամերով ամրացվել են դաշույնի երկաթե բռնակի վրա: Դաշույնի գործող մասը երկսայրի է ու խիստ տափակ: Նրա լայնությունը 5 սմ է: Գործող մասի կենտրոնից, երկու կողմից անցնում են երեք ակոսավոր փոսիկներ, որոնք բնորոշ են մեր միջնադարյան հնավայրերից գտնված համանման դաշույններին:

Նման տիպի դաշույններ գտնվել են Անբերդ քերդ-դղյակի պեղումների ժամանակ³: Դրանցից մեր օրինակը տարբերվում է նրանով, որ եթե Անբերդի դաշույնները բռնակի կողմից դեպի գործող մասը գնալով լայնանում են, ապա սրա գործող մասը պարզ երևում է, որ գնալով պետք է նեղանա և ծայրը բնականաբար վերջանում է սուր մասով: Այս օրինակը առավել նմանվում է Անիի պեղումներից գտնված դաշույնին:

Ուսումնասիրվող դաշույնի թվագրման հարցը խիստ դժվար է որոշել, քանի որ այն գտնվել է սր. Ստեփանոս եկեղեցուց քիչ հեռու, բնակելի մի շենքի արտաքին պատի տակ, հիմքին մոտ: Հետևաբար միայն շերտագրությամբ առաջնորդվելը այստեղ մեզ կհանգեցնի որոշակի սխալ եզրակացության: Ուստի համեմատելով Անիում և Անբերդում գտնված դաշույնների հետ, մենք այն թվագրում ենք 13—15-րդ դարերով:

Թանահատ—Գլաձորում գտնվել է նաև մի բաձ, որը համեմատաբար լավ է պահպանվել և ոչնչով չի տարբերվում ներկա-



Նկ. 28. Երկաթե բաձ:

յումս ալգեփորձական շրջաններում օգտագործվող թուփչակավոր բաձերից: Նրա կոթառի մի մասը ժամանակին ջարդվել է ու ենթարկվել նորոգման. պարզ երևում են նորոգման հետքերը: Նրա

³ Ս. Հարությունյան, Անբերդ, Երևան, 1978, էջ 84—85:

ման տիպի բաճ գտնվել է Դվինի միջնաբերդի պեղումների ժամանակ: Կ. Ղաֆադարյանը այն համեմատում է Ադթամարի տաճարի պատերի վրա 10-րդ դարում քանդակված նմանատիպ բաճի հետ⁴: Գլածորում գտնված բաճը ոչնչով չի տարբերվում Դվինում գտնված բաճից, բայց հաշվի առնելով այն հանգամանքը, որ բաճերը իրենց ձևի տեսակետից խիստ պահպանողական են եղել, մեր օրինակը թվագրում ենք 13—15-րդ դարերով:

Պեղումների ընթացքում գտնված հաշորդ առարկան երկաթե մի մկրատ է, որի գործող մասի ծայրը կտրտված է: Պահպանվել են գործող մասը 6 սմ երկարությամբ և նրա շարունակությունը



Նկ. 29. Երկաթե մկրատ:

կազմող երկու թևերը, որոնք իրար հետ նույնպես ամրացված են երկաթե գամի օգնությամբ: Մկրատի թևերի գլուխները կտրացված են և միացված իրար, որով ստացվել են 2 սմ տրամագծով օղակներ: Երկաթե մկրատի հայտնաբերումը միջին դարերի հայկական հուշարձաններում նոր երևույթ չէ: Նման տիպի երկու մրկրատ գտնվել է Դվինի պեղումների ժամանակ⁵: Պեղումների ղեկավար Կ. Ղաֆադարյանը այդ առթիվ գրում է. «1948 և 1949 թըվականներին միջնաբերդում գտնվեցին երկու մկրատ՝ մեկը մեծ և մյուսը՝ փոքր, որոնք իրենց ձևերով և երկարությամբ գրեթե չեն տարբերվում այժմյան գործարանային մկրատներից»⁶: Եվ իրոք, մեր գտած օրինակը նույնպես պատրաստված է կոման եղանակով, բայց շատ նրբին է ու քիչ է տարբերվում մեր օրերում օգտագործ-


⁴ Կ. Ղաֆադարյան, Ազվ. աշխ., էջ 156—157, ԱԿ. 137 և 138:

⁵ Կ. Ղաֆադարյան, Ազվ. աշխ., էջ 159, ԱԿ. 141:

⁶ Կ. Ղաֆադարյան, Ազվ. աշխ., էջ 160:

վողներից: Դատելով մկրատի մըշակման բարձր տեխնիկայից, պետք է կարծել, որ այն բերված է հարևան որևէ խոշոր երկաթագործական կենտրոնից և մասնագետ դարբին արհեստավորի արտադրանք է:

Երկաթից պատրաստված իրերի թվին է պատկանում մի քանաթև խաչ: Խաչի թևերը ոչ թե կոնված են միակտոր երկաթից, այլ իրար են միացված գամերի օգնությամբ: Նրա չափերն են. երկարությունը՝ 8 սմ, բռնակի հետ միասին՝ 11 սմ: Խաչաթևերի հարաբերությունը հետևյալն է. հորիզոնականինը՝ երկուական սանտիմետր, վերինը՝ 2,3 սմ, ներքևինը՝ 5 սմ: Խաչաթևերի միացման տեղերում դրանց լայնությունը 0,8 սմ է, իսկ դեպի



Նկ. 30. Երկաթե քանաթև խաչ:

ծայրերը լայնանալով հասնում են 1,3 սմ-ի: Խաչի բռնակը ամբողջությամբ չի պահպանվել, հետևաբար մենք չենք կարող գահափար կազմել նրա օգտագործման նպատակի մասին: Հնարազույն առարկա է եղել կամ գուցե և ամրացվել է որևէ առարկայի վրա: Նման տիպի խաչեր գտնվել են Հայաստանի միջնադարյան տարբեր ժամանակներին պատկանող հնավայրերի պեղումների ընթացքում⁷, բայց դրանք կամ վզից կախելու համար են նախատեսված եղել, ինչպիսիք են Դվինում գտնվածները, կամ կոթառավոր են ու մեծ (Անբերդ) և ինչպես հնագետներն են պնդում, վորքերի առջևից տարվող խաչեր են եղել:

Մեր կողմից հայտնաբերված խաչը պետք է համեմատել Անբերդում՝ եկեղեցուց հարավ գտնվածի հետ, որը չափերով հա-

⁷ Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, էջ 171, ԱԿ. 139, Բ. Առաքելյան, Գ. Կարախանյան, Գառնի 3, Երևան, 1962, էջ 60, ԱԿ. 141, Ս. Հարությունյան, Անբերդ, էջ 91—93, գծագիր № 19, և այլն:

մարյա համընկնում է, ուստի ինչպես Ս. Հարությունյանն է պընդում՝ «... օգտագործվել է եկեղեցական արարողությունների ժամանակ, բանի որ չափերով փոքր է և գտնվել է եկեղեցու մոտերքից»⁸: Իրոք որ, Գլաձորում հայտնաբերված երկաթե խաչը նույնպես գտնվեց 13-րդ դարում վերակառուցված եկեղեցու շրջապատի համապատասխան շերտի պեղումների ժամանակ, ուստի մենք այն թվագրում ենք Գլաձորի գործունեության բուն ժամանակներով, այն է՝ 13—14-րդ դարերով: Թանահատ—Գլաձորում գտնված միակ պղնձե առարկան մի փոքրիկ զանգ է, որի մասին հիշատակել ենք հուշարձանի մաքրման-պեղման աշխատանքները նկարագրելիս: Չանգի չափերն են. բարձրությունը՝ 8 սմ, ներքևի բերանի բացվածքը՝ 5 սմ: Այն վերին մասում ունի բունակատիպ հարմարանք: Չանգը գտնվեց բազիլիկ եկեղեցու և սբ. Ստեփանոսի միջև ընկած տնտեսական շինության մեջ՝ հողի տակ, 1,10 սմ խորությունում: Նրա հետ գտնվեցին նաև երկաթե դանակի ոսկրե կոթառ և այլ մանր առարկաներ:

Չանգեր Հայաստանում շատ են գտնվել, որոնցից աչքի է ընկնում 19-րդ դարի վերջին Հաղարծնում գտնվածը: 1970 թվին Տաթևի վանքի գավթի պեղման-մաքրման ընթացքում գտնվեցին պատմիչ Ստեփանոս Օրբելյանի պատվերով ձուլված հսկա զանգերը: Բայց դրանք ծառայել են ուրիշ նպատակի համար: Համեմատաբար փոքր զանգեր գտնվել են նաև Գառնիի պեղումների ժամանակ⁹: Ըստ Բ. Առաքելյանի, դատելով զանգերի չափերից, դրանք գործածվել են ուղտերի, ձիերի ու ավանակների վզից կախելու համար: Բարավանների ուղտերը, ձիերն ու ջորիները զանգակներով զարդարելը շատ հին սովորություն էր, որը պահպանվելով հասել է մինչև մեր օրերը:

Թանահատ—Գլաձորի պեղման-մաքրման աշխատանքների ընթացքում հայտնաբերված մետաղե առարկաների մեջ իր առանձնակի տեղն ունի բրոնզե մի կանթեղ-խնկաման, որը գտնվեց վանքից դեպի արևմուտք իջնող թեք լանջի վրա: Կանթեղը կարելի է դասել միջնադարյան Հայաստանի պղնձագործ վարպետների լավագույն ստեղծագործությունների թվին: Այն ձուլել են մոմե կաղապարի մեջ, իսկ այնուհետև ենթարկել լրացուցիչ մշակման: Կանթեղի վրա պատկերված են Քրիստոսի կյանքը պատ-



Նկ. 31. Քրիստոսի վաբբ պատկերով բրոնզե կանթեղ-խնկանոց XI—XII դդ.:



Նկ. 32. Բրոնզե ծխաման:

կերող դրվագներ՝ Ծնունդ, Մկրտություն, Դատավարություն, Խաչելություն և Թաղման ու Համբարձման տեսարանները: Կանթեղի հատակին դրսի կողմից նույնպես պատկերված է Քրիստոսը գահին նստած, գավազանը ձեռքին: Միայն այս պատկերն է, որ ձուլումից հետո չի ենթարկվել լրացուցիչ հարդարման:

⁸ Ս. Հարությունյան, Եզվ. աշխ., էջ 91:
⁹ Բ. Առաքելյան, Գ. Կարախանյան, Գառնի 3, էջ 56—57:

Կանթեղ-խնկամանը լավ է պահպանված, պատկերները արտահայտիչ են թեթև ու սահուն անցումներով, մեղմ զարդագծերով: Հաճախ միևնույն պատկերի վրա ներկայացված են մի քանի դեմքեր, հարստացնելու համար պատումի բովանդակությունը: Նըրա չափերն են. բարձրությունը՝ 11 սմ, բերանի տրամագիծը՝ 12 սմ, նստուկինը՝ 7,5 սմ, իրանի լայնացող մասի տրամագիծը՝ 14,5 սմ:

Համանման կանթեղ-խնկանոցներ Հայաստանում գտնվել են մի քանի հատ, որոնք հրատարակվել են տարբեր ուսումնասիրողների կողմից⁹: Դրանք հավանաբար ծագում են Անիից: Ընդհանրապես նման տիպի կանթեղ-բուրվառները սկսվել են արտադրվել առաջին անգամ 5—6-րդ դարերում Սիրիա—Պաղեստինում, այնուհետև տարածվել քրիստոնյա մյուս երկրներում: Հավանաբար դրանց օրինակով մեզ մոտ՝ Հայաստանում սկսել են կանթեղ-խնկանոցներ պատրաստել համեմատաբար ավելի ուշ՝ 11—12-րդ դարերում: Հայաստանում հայտնաբերված կանթեղները աչքի են ընկնում իրենց վրա եղած պատկերագրությունների, պատրաստման տեխնիկայի ու զարդանների առանձնահատկությամբ, որով և տարբերվում են 5—6-րդ դարերում արտադրվածներից:


Հաջորդ առարկան նույնպես բրոնզից է: Այն իրենից ներկայացնում է ուշ միջնադարում այնքան տարածված կավե ծխամորճի կրկնօրինակ: Բրոնզե ծխամորճերը հիմնականում տարածված են եղել հայկանյալ թերակղզու երկրներում և Հայաստանում համարյա թե չեն հանդիպել, այս առումով մեր գտածը որոշակի հետաքրքրություն է ներկայացնում:

Ծխամորճի վրա բացակայում է որևէ զարդանախշ, որև այնքան բնորոշ է կավե ծխամորճերին, բայց ունի լավ տեսք և հաճելի դիտվում է: Այն ձուլածո է ու ինչպես կարելի է դատել առարկայից, կոթունն ու բաժակը միասին են ձուլել: Կոթունը քիչ երկար է բաժակի համեմատությամբ: Իսկ բաժակը հիմքում լինելով ուռուցիկ, լայնանում է բերանի մասում և կազմում ոչ կանոնավոր շրջանագիծ: Ծխամորճը գտնվել է տնտեսական նշանակություն ունեցող կառույցի ներսում՝ 80—100 սմ խորության վրա, պղնձե զանգակի հետ միասին, ուստի այն թվագրում ենք 14—16-րդ դարերով, շնչյաձ չունենք համապատասխան համեմատու-

⁹ Վ. Ն. Հակոբյան, Միջնադարյան Հայաստանի գեղարվեստական մետաղը 9—13-րդ դդ. տե՛ս, Հայաստանի հնագիտական հուշարձաններ, № 10, Երևան, 1951, էջ 38—42:



Նկ. 33. Մետաղե սարքեր և սարկաներ:




Նկ. 34. Ոսկրե սրիճգճներ, ապակե անոթից առարկաներ և երկաթե բռնակ:

թյուն: Սա պետք է որ ժամանակակից լինի միջնադարյան Լոռի քաղաքի, Բջնիի, Երևանի, Կումայրիի, Գառնիի և Դվինի հնավայրերից հայտնի կավե ծխամորճերին:

Թանախատ—Գլաձորի պեղումներից հայտնաբերված մյուս առարկան երկաթե քառանկյունի մի օղ է, որը հավանաբար ծառայել է երկաթե չծալվող դանակների կոթառի և պոչուկի միացման համար: Հաջորդը պղնձե մի թիթեղ է, որը կենտրոնում ունի փոքրիկ անցք: Թիթեղի վրա նշմարվում են կտորի դաջվածքի հետքեր: Կարելի է ենթադրել, որ այդ թիթեղը, հավանաբար, կարված է եղել ինչ-որ մի գործվածքի վրա: Իսկ թե ինչ նպատակի է ծառայել, դժվարանում ենք որոշակի եզրակացության հանգել:

Պեղումների ընթացքում հաճախակի էին հանդիպում երկաթե պայտեր, որոնցով պայտում էին եզները, ավանակները ու ձիերը: Դրանց մեջ կան կիսալուսնաձև պայտեր, որոնց երկու ծայրերը թեքված են դեպի ներսի կողմը: Պրոֆ. Բ. Առաքելյանը գտնում է, որ նման տիպի երկաթե առարկաները կարող էին ամրացվել փայտե կահույքի ոտքերին: Չծխտելով նման հնարավորությունը, այնուամենայնիվ, մենք հակված ենք այն կարծիքին, որ **Թանախատ**—Գլաձորում գտնվածները հիմնականում ծառայել են որպես ավանակների պայտեր:

Հանդիպում են նաև ինչ-որ անհայտ առարկայի երկաթե պոչ-բռնակներ: Դրանցից մեկի երկարությունն է 15 սմ, միացման տեղում տափակ է, որը խոսում է պղնձաեռի օգնությամբ հիմնական առարկային միացնելու մասին, իսկ ողջ իրանը կռելու և ապա



Նկ. 35. Երկաթե մկրատի թև, մետաղե ձող և գամ:

պտտեցնելու օգնությամբ գեղեցիկ տեսք է ստացել: Պոչ-բռնակի վերջին ծայրը կռելով տափակացրել են և ապա՝ երկտակ ծալել դեպի ներս: Այն միանգամայն հարմար է ձեռքով բռնելու համար:

Թանախատ—Գլաձորի պեղումների ժամանակ համարյա ամեն օր դուրս էին գալիս երկաթե մեծագույն գամեր, որոնք սովորաբար կլոր են, թեև կան նաև տափակ, մեծ գլուխ ունեցողներ: Այդ գամերը ծառայել են տարբեր նպատակների համար: Մասնավորապես, դրանցից շատերը, որ հաճախ գտնվում էին կղմինդրածածկ եկեղեցու պեղումների ընթացքում, կղմինդրը միացրել են շաղախին: Կան նաև այնպիսիները, որոնք ծառայել են իբրև զարդաքենոներ, իսկ սովորական գամերը հիմնականում օգտագործվել են կենդանիների ոտքերը պայտելու համար: Դրանք շատ տարածված էին միջնադարյան Հայաստանում և նրա սահմաններից դուրս:

ՔԱՐԵ ՍԱՐՔԵՐ ԵՎ ԻՐԵՐ: Ինչպես Հայաստանի բոլոր գավառներում, նույնպես և Վայոց ձորում թե շինարարության և թե զանազան սարքերի ու գործիքների համար պիտանի քարեր շատ կան: Այդ է պատճառը, որ հայ ժողովուրդն իր տնտեսության մեջ ու կենցաղում հնուց ի վեր հպճախ է օգտագործել քարե սարքեր ու հարմարանքներ:

Թանախատ—Գլաձորի պեղումների ժամանակ չեն հանդիպել ոչ ձիթհանի քարեր և ոչ էլ ջրաղացի, բայց դա դեռևս ապացույց չէ, որ Գլաձորի շրջապատում չեն օգտագործվել նման տիպի արտադրական սարքեր: Այդ միտքը լրացվում է **Թանախատ**—Գլաձորի վանական համալիրի պատերին փորագրված բազմաթիվ նրվիրատվական արձանագրություններով:

5—7-րդ դարերի բազիլիկ եկեղեցու գավթի ու տնտեսական նրշանակություն ունեցող շինության պեղումների ժամանակ հայտնաբերվեցին իրենց չափերով բավականին խոշոր քարե երկու տաշտեր: Դրանք ամբողջական չեն, բայց պահպանված մասից կարելի է դատել դրանց հսկա չափերի մասին: Չարմանք է պատճառում այն հսկայական աշխատանքը, որ գործադրել է քարագործ վարպետը միակտոր քարից այն տաշելու, հղկելու և համապատասխան տեսքի բերելու համար:

Հայաստանում մեզ հայտնի են քարե տաշտեր տարբեր տեղերից, մասնավորապես Լոռի բերդից: Բայց դրանք իրենց ձևերով նման չեն այս տաշտերին և օգտագործվել են հիմնականում Լոռու բաղնիքների լողարաններում՝ տաք և սառը ջրերի համար:



Նկ. 36. Քարե տաշտի մի մաս:



Նկ. 37. Քարե սանդ:



Նկ. 38. Քարե սանդ վարսանդի հետ միասին:

Իսկ Թանահատ—Գլաձորում գտնվածները, պարզ երևում է, օգտագործվել են խմոր հունցելու համար և պատահական չէ, որ դրանք գտնվել են տնտեսական շինության մեջ՝ մեծ թոնրի կողքին: Այդ տաշտերը շատ զանգվածեղ են ու ծանր: Եթե նկատի ունենանք Թանահատ—Գլաձորի նման վանական մի համալիր, որ պետք է ապահովեր միաբանության անդամների, սովորողների, գործավորների և այլոց պահանջարկը, որոնց քանակը հարյուրների էր հասնում, ապա պարզ կլինի, թե դրանց չափերի մեծությունը և թե նշանակությունը:

Այս քարե տաշտերի գոյությունը չէր սահմանափակում կապել համապատասխան տաշտերի կիրառությունը, բայց, հավանա-

կան է, որ այն համեմատաբար սահմանափակ էր: Պատահական չէ, որ պեղումների ժամանակ շատ քիչ էին գտնվում կավե տաշտեր կամ դրանց բեկորներ:

Թանահատ—Գլաձորի պեղումների ժամանակ գտնվեցին նաև տարբեր մեծության քարե սանդեր: Դրանց մեջ հատկապես աչքի է ընկնում վանքի տնտեսական շինության մեջ հայտնաբերված կապույտ բազալտե մեծ սանդը: Այն օգտագործվող մասում լավ մշակված է: Փոսորակի շուրջը, 3 սմ լայնությամբ անցնում է շրջաճանձն քիչ ցածր մի հարթություն, որը հավանաբար նախատեսված էր նրա մեջ ծեծվող հացահատիկը ապահով մշակելու համար: Հակառակ դեպքում հացահատիկը կթափվեր սանդի կողքերից:

Վերը նշվածից մի քիչ փոքր է մյուս սանդը, որը իր վարսանդի հետ պատրաստված է տեղական սև, չեչոտ բազալտից: Մեր կարծիքով նման սանդերը Գլաձորում հիմնականում կարող էին ապահովել տեղի բազմամարդ բնակչության պահանջարկը:

Հայաստանի միջնադարյան հնավայրերում շատ են գտնվել նման տիպի սանդեր¹⁰, բայց դրանք իրենց չափերով զիջում են մեր գտածոներին: Մի հանգամանք ևս. եթե Գառնիում գտնված մեծ սանդերը ըստ Բ. Առաքելյանի ծառայել են արտադրական նպատակների, այն է՝ արհեստանոցների համար գայլախազ և կվարցիտային ավազ մանրացնելու նպատակով, ապա Գլաձոր—Թանահատում գտնվածները հիմնականում ծառայել են հացահատիկային կուլտուրաների մշակմանը:

Քարե առարկաների մեջ, որոնք գտնվել են Թանահատ—Գլաձորի պեղումների ժամանակ, հանդիպեցինք նաև գրանիտից պատրաստված կոկիչի: Նրա մի կողքը փոքր ինչ ջարդված է: Կոկիչը շատ օգտագործելուց ողորկացել է: Նման կոկիչները միջին դարերում օգտագործում էին կավե անոթները կոկեյու-հարթեցնելու, արտաքին երեսները փայլեցնելու համար¹¹: Նման բնույթի առարկայի առկայությունը Գլաձորում վկայությունն է այն բանի, որ վանական այդ համալիրում եղել են գործավոր-արհեստավորներ, որոնք ոչ միայն պատրաստում էին կավե հյսարակ անոթներ ու տաշտեր, այլ նաև ավելի բարձրորակ, լավ հղկված քարե առարկաներ:

¹⁰ Բ. Առաքելյան, Գ. Կարախանյան, Ազվ. աշխ., էջ 61—64, ԱԿ. 18—19. Կ. Ղաֆադարյան, Ազվ. աշխ., էջ 179, ԱԿ. 154:

¹¹ Բ. Առաքելյան, Գ. Կարախանյան, Ազվ. աշխ., էջ 63:



Նկ. 39. Քարե կոկիչ:

Նկ. 40. Քարե անոռոշ գործիք:



Հուշարձանի տարածքում, ինչպես նաև պեղումների ժամանակ ի հայտ են եկել բազմաթիվ երկանքաքարեր: Դրանցով է այժմ սալահատակված սբ. Ստեփանոս եկեղեցու ողջ հատակը: Երկանքաքարերի մեծ մասը պատրաստված է նույն սև ծակոտկեն բազալտից, որով շարված են եկեղեցին ու մատուռ-դամբարանը: Նրկատի ունենալով այդ հանգամանքը, կարելի է պնդել, որ դրանք պատրաստվել են տեղում, հուշարձանախմբից ոչ հեռու գտնվող քարհանքի բազալտից:

Պեղումների ժամանակ հայտնաբերվեց քարե խուփի մի մեծ կտոր, որի վրա փորագրված է արձանագրություն՝ շատ գեղագիր տառերով: Բացի արձանագրությունից, նրա վրա քանդակված են բուսական և երկրաչափական զարդեր: Նման քարե խուփեր շատ են հանդիպում միջնադարյան հայկական հուշարձաններում, որոնցով ծածկում էին տնտեսական հորերի բերանները կամ հսկա կարասները: Ելնելով այդ խուփի գտնվելու տեղադրությունից և շերտագրությունից, այն նույնպես կարելի է թվագրել 13—14-րդ դարերով:

Թանախատ—Գլաձորի պեղումների ժամանակ հաճախ էին գտնվում սրաքարեր, որոնք շատ օգտագործվելուց խիստ մաշվել են:

Այսպիսով, **Թանախատ—Գլաձորի վանական համալիրի պեղումների ընթացքում** գտնվել են քարից պատրաստված զանազան սարքեր և գործիքներ, որոնց առկայությունը ապացույց է, որ միջնադարյան Հայաստանում, մասնավորապես Վայոց ձորում, խիստ զարգացած էր քարի մշակությունը, և հատկապես՝ քարից առօրյա տնտեսական ստարկաների ու սարքերի պատրաստումը և նրանց լայն կիրառությունը բնակչության կենցաղում ու տնտեսության մեջ:

ԽԵՑԵՂԵՆ: Թանախատ—Գլաձորի վանական համալիրի պեղումներից հայտնաբերված իրերի սովոր մասը խեցեղեն անոթներ են, որոնք մյուս բնակավայրերում ևս մեծ մասամբ հանդիպում են բեկորների ձևով: Այդ խեցեղենը բաժանվում է հիմնականում երկու մեծ խմբի՝ հասարակ և ջնարակած: Հասարակ խեցեղենը ըստ կիրառության և պատրաստման տեխնիկայի ստորաբաժանվում է տարբեր ենթախմբերի: Ջնարակածը իր հերթին, նույնպես բաժանվում է երկու մեծ խմբի. ա) ջնարակած կարմրախեցի անոթներ և բ) հախճապակի (սպիտակախեցի):

ՀԱՍԱՐԱԿ ԽԵՑԵՂԵՆ: Գլաձորում գտնված հասարակ խե-

Քարե մյուս ստարկան, որ գրավեց մեր ուշադրությունը, երկարուկ, ներսի կողմում գոգավոր, դրսից կորնթարդ գործիք է: Նրա մի գլուխը հարմարեցվել է բռնակի համար, իսկ մյուսը կլորացված է: Գործիքի երկարությունն է 30 սմ, իսկ լայնությունը՝ 8 սմ: Հարց է առաջանում. ինչի՞ համար է օգտագործվել այն: Մենք դրան որոշակի պատասխան տալուց խուսափում ենք, բայց միաժամանակ պետք է նշել, որ այն իր ձևով հեռավոր նմանություն ունի սևտիկ ժամանակներում բրնակչության կենցաղում օգտագործված քարե աղորիքների հետ, որոնցից շատ է գտնվել Գառնի ամրոցի պեղումների ժամանակ:



Նկ. 41. Կալի հասարակ անոթների կանթեր:

ցեղեկը կազմում է հալոսնաբերված ամբողջ նյութի գերակշռող մասը: Այն ըստ կիրառության կարելի է բաժանել հինգ խմբի. 1. Մրապատ կճուճներ (ճաշ եփելու), 2. Կարասներ (գինի պահելու և այլ նպատակների համար), 3. Խոհանոցային խեցեղեն (քրեղաններ, փոքրադիր կճուճներ, սափորներ, կժեր, պուլիկներ և այլն), 4. Չիթանրագներ, 5. Կալե ծխամորճեր:

ԿՃՈՒՃՆԵՐ: Կալե կճուճը հավանաբար հանդիսացել է ճաշ եփելու ամանների ամենատարածված ձևը: Դրանով պետք է բացատրել այն հանգամանքը, որ միջնադարյան ցանկացած հնավայր պեղելիս (Դվին, Անի, Գառնի, Լոռի, Դմանխի, Օրեն-Կալե և այլն) քննարկվող տեսակի խեցեղեն համեմատաբար ավելի հաճախ է գտնվում:

Նկ. 42. Կալի կճուճների կանթեր:



Կճուճներն ունենում են լայն բերան և կարճ պարանոց: Իրանը ուռուցիկ է, հատակն ուղիղ կտրված, պատերը հաստ: Կալանոթների այս խումբը կրակի վրա շատ դրվելուց՝ մրապատ է: Սովորաբար, նման կճուճներն ունենում են երկու կանթ:

Ընդհանրապես կճուճների կանթերը բաժանվում են երկու խմբի: Մի խումբը սովորական, տափակ լայն կանթերն են, որոնք միանում են կճուճի իրանին ու շուրթին: Վերջիններին առանձին նմուշներ ունենում են էլուստավոր կամ փոսիկավոր զարդեր: Մյուս խումբը՝ կիսակլոր և համեմատաբար փոքր կանթերն են, որոնք ունենում են ինչպես էլուստավոր, այնպես և ներձկված զարդանախշեր: Բոլոր կանթերը պատրաստվում են առանձին և կճուճի դեռևս թաց փճակում ամրացվում նրա իրանին: Դա շատ պարզ հետամտվում է գտնված օրինակների ուսումնասիրությունից:

Հայաստանում կճուճներին հաճախ տրվում է նաև պուտուկ անունը, որը հանդիպում է միջնադարյան հայկական առակներում ևս¹²: Գլաձորի վանական համալիրի պեղումների ժամանակ գտնվել են նման տիպի կճուճների մի քանի նմուշներ, որոնք բոլորն էլ բեկորային են: Դրանցից արժե նշել հետևյալները:

1970 թ. գտնված կճուճի բեկորը պատրաստված է կարմիր աղյուսագույն կալից, մրապատ է: Պահպանվել է միայն շուրթը՝ կանթի հետ միասին: Կճուճի շուրթը դուրս է փուլած, որին միանում է կանթը՝ փոքր-ինչ ներքևից: Նրա վզի վրա կա շուրջանակի անցնող ուռուցիկ զարդագոտի: Իրանը կանթի միացման տեղի սկսում է թեքվել դեպի ներս, հատակը, հավանաբար, սկավառակաձև է եղել ու լայն:

Նման մրապատ կճուճի մի բեկոր գտնվեց տևոնեսական շինության հորի միջից, թոնրից ոչ այնքան հեռու: Այն նախորդից տարբերվում է նրանով, որ կանթը անմիջապես միանում է կճուճի շրթին: Կճուճի ներսի կողմում երևում է դուրգի վրա պատրաստվելու հետքեր: Նման տիպի կճուճի օրինակ է մեկ այլ կրճուճի բեկոր, իր կանթի հետ միասին: Այս նմուշը արդեն նկարագրված օրինակների համեմատ նկատելի ուռուցիկ իրան ունի, խեցին նոսր է, ներսի կողմից՝ բաց մոխրագույն, արտաքուստ սև, մրապատ: Որոշ տեղերում վատ թրծման հետևանքով այն դարձել է բաց վարդագույն: Կանթի վրա կա ձևավոր զարդ, իսկ իրանի

¹² Բ. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում 9—13-րդ դարերում, հ. 1, Երևան, էջ 218:

վրա սուր գործիքի օգնությամբ արված են ուղղահայաց մանր գրծեր: Կճուճը նրբախեցի է, հաստությունը չի անցնում 3 մմ-ից:

Մեկ ուրիշ կճուճից պահպանվել է միայն կանթը՝ իրանի մի քեկորի հետ միասին: Կանթը տափակ է, վրան ելունդավոր վերադիր զարդ ունի: Դեռևս խոնավ ժամանակ քառանկյունի բութ գործիքի օգնությամբ արված է փոսիկազարդ, որը հաճելի տեսք է տալիս կճուճի կանթին:

Մեկ այլ կճուճի կանթերը նույնպես տափակ են, բայց չունեն վերադիր զարդեր: Դրանք միացած են անոթի պարանոցին, շրթից քիչ ներքև: Կանթի և կճուճի պարանոցի վրա, սուր գործիքի օգնությամբ արված են կետազարդեր: Ներսից չեն նկատվում դուրգի համապատասխան հավասարակենտրոն շրջանագծերի հետքերը: Կարելի է եզրակացնել, որ քննարկվող կճուճը պատրաստվել է տեղում, ձեռքի օգնությամբ: Թրծումը վատորակ է, որը երեւում է կոտրված մասի գորշ-կապտավուն գույնից:


Վերը նկարագրված կճուճների քեկորները գտնվել են տարբեր իրերի հետ միասին սր. Ստեփանոս եկեղեցու շրջապատի պեղումների ժամանակ և տնտեսական նշանակություն ունեցող կառույցի մեջ, տարբեր խորություններում: Հետաքրքիրն այն է, որ Թանահատ—Գլաձորում գտնված հասարակ խեցեղենի մեջ հայտնաբերվեց կավե կճուճի մի բունակ, որի վրա նկատելի էր վարպետի նշանը լատինական A տառի նմանությամբ: Այս երևույթը բավականին հետաքրքիր է: Կնշանակի վանական համալիրում աշխատող գործավոր-վարպետները նույնպես, ինչպես քաղաքի բուն արհեստավորները, ունեին վարպետի ստորագրություն կամ որոշակի նշան, որով մեկի արտադրանքը տարբերվում էր մյուսներից: Չնայած չի բացատրվում, որ այս առարկան բերված լինի մոտակա, շատ թե քիչ աչքի ընկնող արհեստավորական կենտրոններից (Եղեգիս, Նախճավան, Կապան և այլն):

Նման կճուճների թվագրումը առանձին դժվարություն չի ներկայացնում, որովհետև մյուս հուշարձաններում՝ Անքերդ, Գառնի, Լոռի, Բջնի և այլն, դրանք գտնվում են այնպիսի շերտերի պեղումների ժամանակ, որոնք ունեն որոշակի թվագրում՝ 13—15-րդ դարեր¹³: Նույն դարերով են թվագրվում նաև Թանահատ—Գլա-

¹³ Բ. Առաքելյան, Գ. Կարախանյան, Գառնի 3, էջ 74—75: Ս. Հարությունյան, ԱԶՎ. աշխ., էջ 100: Նույնն են ցույց տալիս նաև մեր պեղումների արդյունքները Լոռի և Բջնի ամրոցներում, ուր կյանքը հարատևել է մինչև 15—16-րդ դարերը:



Նկ. 43. Կավե կճուճների սնավորված կանթեր:



Նկ. 44. Կճուճի կանթ վարպետի նշանով:

ձորում հայտնաբերված կճուճները, որովհետև դրանք բոլորն էլ գտնվել են 1215 թվականին վերակառուցված եկեղեցու և 1273 թվականին կառուցվածի մերձակայքի պեղումների ժամանակ:

ԿԱՐԱՆՆԵՐ: Թանահատ—Գլաձոր վանական համալիրի պեղումների ընթացքում գտնվել են նաև մի քանի լայնավոր, գոտեզարդ կարասների քեկորներ, որոնք իրենց ուրույն տեղն են գրավում միջնադարյան Հայաստանի հասարակ խեցեղենի ար-



Նկ. 45. Գտնված կարասի ձևավորված շարքեր:


տադրության մեջ: Դրանք հիմնականում լայնաբերան են եղել, ցածրադիր և ունեցել են խիստ ուռուցիկ իրան: Գոտեզարդ կարասներն ունենում են սովորաբար 50—75 սմ բարձրություն, 25—35 սմ թերանի բացվածք, իսկ հատակի տրամագիծը տատանվում է 18—22 սմ միջև: Դրանք ունենում են 40—80 լիտր տարողունակություն, շուրթերը փոքր-ինչ դուրս լայնացող են ու հարթ: Սովորաբար նման կարասներն ունենում են երկուսից-չորս կանթ, չնայած հանդիպում են և առանց կանթերի կարասներ:

Ինչպես ուսումնասիրողները պարզել են¹⁴, այդպիսի կարասներն ամբողջությամբ դուրգի վրա պատրաստելն անհնար էր, ուստի նրա վրա պատրաստում էին մինչև կարասի ուռուցիկ փորամասը, ապա ամբողջացնում էին պատրույզների օգնությամբ: Անոթների միայն ստորին մասը դուրգի օգնությամբ պատրաստելը պայմանավորված էր վերջիններիս մեծությամբ: Ինչ վերաբերում է կանթերին, ապա դրանք պատրաստվում էին առանձին և հետո ամրացվում կարասի շուրթից անմիջապես ներքև իջնող մասում: Սովորաբար, նման տիպի կարասների կանթերը ձևավոր են, այսինքն ունեն կեղծ, կիսաշրջան վերադիր զարդեր: Ստորին մասում, սեղմման միջոցով ստացվում էին բլթակներ:

Կարասների պսակի ստորին մասում, դեռևս խեցու թաց վիճակում դրոշմում էին սեպաձև կամ ալիքաձև խորաքանդակ զարդեր, իսկ երբեմն պատեցված շուրջանակի անցնող զարդանախշ: Երբեմն էլ պսակի շուրջը բոլորող գոտու վրա արվում էր ատամնաշար կամ փոսիկաշար:

Կարմրաներկ փայլեցված կարասների հիմնական զարդը ի-

Նկ. 46. Ալիքաձև զարդով կարասների գոտիներ:



Նկ. 47. Կենդանիների պատկերներով գոտեզարդ կարասի բեկորներ:

րանի լայնացող մասի վրա 3—5 սմ լայնությամբ անցնող զարդագոտին է, որի վրա վերարտադրված են տարբեր տեսարաններ, կենդանիների պատկերներ, երկրաչափական զարդեր և այլն: Քննարկվող կարասները զարդարելուց հետո փայլեցնում էին, ներկում և ապա թրծում: Հին Գանձակում գտնված դաջազարդ կարասները ուսումնասիրող Լևիատովը գտնում է, որ կարասները ներկել են թրծելուց առաջ¹⁵: Մենք համակարծիք ենք Լևիատովի հետ, որ հիմնականում կարասների ներկումը կատարվել է թրծե-

¹⁵ В. Левинатов, Украшения на карасах из старой Ганджи, см. Изв. АИ Азерб. ССР, 1945, № 8, с. 51:

յուց առաջ, հակառակ դեպքում ներկն այդքան լավ չէր պահպանվի նրանց վրա: Թեև չի կարելի բացատել հակառակ էրևույթը՝ թրծելուց հետո ներկապատելը:

Գլաձորում գտնված նման գոտեզարդ կարասներից հատկապես ուշադրության արժանի է մի բեկոր, որի վրա պատկերված է վազող քարայծ. բերանը բաց է, եղջյուրները հավասարապես թեքված են դեպի իրանը, որը ձգված է ու շարժման մեջ: Դատելով պատկերից, պետք է ենթադրել, որ քարայծը հետապնդվում է գիշատիչ գազանի կողմից: Քարայծի դիմաց պատկերված է կենաց ծառի խորհրդանիշը, որից միայն բունը և մի ճյուղի պատկերն են պահպանվել բեկորի վրա: Մեկ այլ բեկորի վրա երևում են գիշատիչ կենդանու՝ հավանաբար սույուծի ետին թաթերը միայն: Պատկերները դրոշմված են գլանաձև կնիքով¹⁶, կարասը թրծելուց առաջ, դեռևս խեցու խոնավ վիճակում: Չափավոր ճնշումով, նախօրոք պատրաստված կնիքը բուր մատի և ցուցամատի միջև բռնած, պտտեցրել են կարասի գոտու վրայով և ստացել քանդակադրոշմ, պարբերաբար կրկնվող պատկերներ: Դրանք կարասի իրանի հարթության համեմատությամբ ուղուցիկ են: Յուրաքանչյուր հատված մյուսից բաժանված է ճյուղավոր, բայց տերևագուրկ ծառի պատկերով, որը խիստ ոճավորված կենաց ծառի վերարտադրությունն է:

Կարասը դրոշմազարդելուց հետո մի քիչ չորացրել են, ապա փայլեցրել կոկիչներով: Այնուհետև ներկել են օքրայի համապատասխան գույնի նախօրոք պատրաստված շփոթով: Այն հաճելի տեսք է տալիս կարասին:

Հայաստանի դաջազարդ կարասներն ուսումնասիրող Գ. Կարախանյանը նկատել է, որ Դվինում ու Գառնիում արտադրված կարասների դրոշմազարդ գոտիները չեն ներկվել, իսկ Անիում և նրան հարակից քաղաքներում ներկել են ամբողջ կարասը: Մեր դիտարկումները ցույց են տվել, որ Թանահատ—Գլաձորում գտնված դաջազարդ գոտիներով կարասները Դվինի օրինակով ամբողջությամբ չեն ներկվել:

Հետաքրքիրն այն է, որ հենց նման տիպի գոտեզարդ կարասներ էին դրված սբ. Ստեփանոս եկեղեցու ծածկի թմբուկի շա-

¹⁶ Նման տիպի գլանաձև կնիքներ մինչև հիմա մեզ հայտնի են երկու հնավայրերից. մեկը գտնվել է Անիում (տե՛ս **И. Орбели**, *Развалины Ани*, СПб, 1911, с. 52—53), մյուսը՝ գանձակում (տե՛ս **В. Левинанов**, *Озв. աշխ.* էջ 51):

դախի մեջ: Գմբեթի թմբուկը քանդված էր, և կարասները պարզ երևում էին: Նախքան ծածկի վերանորոգման աշխատանքները սկսելը մեզ հաջողվեց այդ կարասները լուսանկարել:

Ուսումնասիրողների կողմից Հայաստանի հնավայրերում գտնված դաջազարդ կարասները, որոնք այնքաա շատ են Դվինում, Անիում, Անքերդում, Գառնիում, Լոռիում, Բջնիում և այլուր, թվագրվում են տարբեր ժամանակաշրջաններով: Գ. Չուրիևովը դեռևս 1916 թվականին հանգել է այն հետևության, որ հայկական դրոշմազարդ կարասները արդյունք են փոխառության և հանդես են գալիս 13-րդ դարից հետո միայն¹⁷: Դվինի և Անիի խեցեղենն ուսումնասիրող Բ. Շելկովնիկովն առարկելով այդ տեսակետի դեմ, իրավամբ գտնում է, որ դաջազարդ կարասները ոչ թե 13-րդ դարից հետո են հանդես գալիս, այլ պատկանում են 12—13-րդ դարերին¹⁸:

Այս տեսակետներին հակառակ Կ. Ղաֆադարյանը, ուսումնասիրելով գոտեզարդ կարասները, նրանց գտնվելու հանգամանքները, հարակից զուգահեռ նյութերը և շերտի թվագրումը, հանգում է այն եզրակացության, որ հայկական դաջազարդ կարասները պատկանում են 9—12-րդ դարերին¹⁹: Հնագետ Գ. Կարախանյանը այդ կարասները թվագրում է 11—13-րդ դարերով²⁰: Բ. Առաքելյանը ավելի է ընդարձակում դրոշմազարդ կարասների գոյատևման ժամանակաշրջանը, դրանք թվագրելով 10—13-րդ դարերով²¹: Անքերդը ուսումնասիրող Ս. Հարությունյանը, մասնավորապես իր պեղած ամրոցի կարասները թվագրում է 12—13-րդ դարերով²²: Լոռի քաղաք-ամրոցում հայտնաբերված նմա-

¹⁷ **Г. Чубинов**. Декоративное убранство анийских карасов, см. «Христианский Восток», т. V, выпуск I, Петроград, 1916, с. 22—41.

¹⁸ **Б. Шелковников**, Художественная керамика двинских раскопок, տե՛ս «Տեղեկագիր, ՍՍՀՄ ԳԱ հսկայական ֆիլիալի», №№ 4—5, 1940, էջ 181—182, նույնի *Керамика и стекло из раскопок города Двина*, տե՛ս «Պատմության թանգարանի գիտ. աշխատությունների ժողովածու», № 4, 1952, էջ 26:

¹⁹ **Կ. Ղաֆադարյան**, *Ոզվ. աշխ.*, էջ 197:

²⁰ **Գ. Կարախանյան**, Գառնիի հասարակ խեցեղենը, տե՛ս Գառնի 3, էջ 77—86:

²¹ **Բ. Առաքելյան**, *Քաղաքները և արձեստները Հայաստանում*, Բ. 1, էջ 277:

²² **Ս. Հարությունյան**, *Ոզվ. աշխ.*, էջ 96:

նատիպ կարասները մենք ժամանակին թվագրել ենք 11—13-րդ դարերով²³:


Թանահատ—Գլածորում հայտնաբերված գոտեզարդ կարասները, էլնելով դրանց գտնվելու վայրից, հարակից նյութերից և համեմատության մեջ դնելով Հայաստանի մյուս հնավայրերի համանման նյութերի հետ, մենք թվագրում ենք 12—13-րդ դարերով:

Սույն հնավայրի պեղումների ժամանակ գտնվել են հասարակ, առանց դաշագարդի կարասների բեկորներ, որոնք ոչնչով չեն տարբերվում Հայաստանում այնքան տարածված միջնադարյան համանման կարասներից: Դրանց մեջ կան այնպիսիները, որոնք ունեն սուր հատակ, հողի մեջ թաղվելու համար, իսկ մյուսների հատակը հարթ, կոնաձև է եղել պատերի տակ դրվելու կամ որևէ առարկայի հենելու համար: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գլածորը գտնվում էր աշխարհագրական ու բնակլիմայական այնպիսի գոտում, ուր պետք է տարածված զբաղմունք լինեին այգեգործությունն ու գինեգործությունը, ապա պարզ կդառնա տարբեր տարողության կարասների լայն կիրառությունը տրդատեսության մեջ ու կենցաղում:

ԽՈՂԱՆՈՑԱՅԻՆ ԽԵՑԵՂԵՆ: Թանահատ—Գլածոր վանական համալիրի պեղումների ժամանակ գտնվել են տարբեր տիպի և չափերի խոհանոցային ու սեղանատան անոթներ, որոնք չնայած քանակով քիչ են ու բեկորային, բայց բազմազան են իրենց կիրառական ձևերով ու նշանակությամբ:

Գտնված ողջ հասարակ խեցեղենի մեջ համեմատաբար սովոր խումբ են կազմում քրեղանները: Դրանց մանրագնին քննությունը ցույց է տալիս, որ չնայած Հայաստանի խոհանոցային խեցեղենի արտադրության վրա իրենց յուրահատուկ կնիքն են դրել առանձին խոշոր կավագործական կենտրոններ, այնուամենայնիվ, դրանք իրարից քիչ են տարբերվում: Օրինակ, Գլածորում գտնված քրեղանների բեկորները գրեթե չեն տարբերվում Դվինի, Գառնիի, Անիի, Լոռու, Անբերդի և միջնադարյան այլ ժամանակամերձ հնավայրերում հազարավոր օրինակներով գտնված նման տիպի քրեղաններից: Թերևս նկատվող տարբերությունները պայմանավորված են կավի որակով, գույնով կամ թրծման աստիճանով:

Քրեղանները համեմատաբար լավ մշակված են և ունեն կարճ





Նկ. 48. Կավե կենցաղային խեցեղենի բեկորներ:

նատուկներ: Կավը հիմնականում կարմրախեցի է, որոշ դեպքերում՝ մակերեսը փայլեցված: Նրանց պատերը վերին մասում ուղիղ են և շեշտակի թեքվում են դեպի հատակը: Պսակները տափակ են ու փոքր են ներսի ու դրսի կողմերում: Երբեմն հանդիպում են դեպի ներս կորնթարդ շուրթեր ունեցող քրեղաններ: Քրեղանների շուրթերը դրսից, իսկ երբեմն նաև ներսից ներկված են կարմիր ներկով և փայլեցված: Համարյա բոլոր քրեղաններն ունեն հաստ ու հարթ նատուկներ, որոշ դեպքերում դրանք չեն առանձնանում քրեղանի պատերից՝ նրանց հետ կազմելով մի ամբողջություն: Թրծումը կատարվում է տարբեր որակներով: Սովորաբար շարքված բեկորի մեջ որոշակի երևում է կապտա-սևագույն երիզ, որն առաջանում է հնոցում ջերմության համապատասխան աստիճանի անբավարար լինելուց: Հենց դրանով էլ սրանք տարբերվում են խոշոր խեցեգործական կենտրոնների (Դվին, Անի) արտադրանքից:

Գտնված քրեղանները, ինչպես ասացինք, իրենց բազմաթիվ զուգահեռներն ունեն Դվինի, Գառնիի, Լոռիի, Անբերդի միջնադարյան շերտերում գտնված խեցեղենի հետ և թվագրվում են համեմատաբար լայն ժամանակահատվածով՝ 11—14-րդ դարերով:

Քննարկվող խմբի մեջ իրենց նուրբ մշակումով և զարդանախշով աչքի են ընկնում ջրաման-սափորները: Սրանք կարմրախեցի են, պատրաստված մանրահատիկ կավից, բարակ պատերով ու նուրբ սանրածն զարդանախշով, որոնց շափերը, դատելով պահ-

²³ Ի. Ղարիբյան, Լոռե ամրոցի մատուռ-դամբարանը և նրա խեցեղենը, «Պատմա-բանասիրական հանդես», 1989, № 1, էջ 196:



Նկ. 49. Կավե երեզաններ և ջրամանի ճատակներ:



Նկ. 50. Կավե ալիքաձև գարգերով սափորների բեկյալներ:



Նկ. 51. Կավե ձիթանոց:

պանված բեկորներից, այնքան էլ մեծ չեն եղել: Գնդաձև իրանը դեպի վեր նեղանում է, որին միացրել են նեղ և երկար վիզը: Շուրթերի բեկորներից դատելով, դրանք զարդարված են եղել վերին մասում վերադիր ժապավենազարդով, որն անոթին միացրել են պատրաստելու ժամանակ, դեռևս կավի խոնավ վիճակում: Սովորաբար սրանց թրծման որակը բարձր է, և խեցին աչքի է ընկնում իր կարծրությամբ: Այս սափորները շատ նման են Դվինում գտնված նմանատիպ փոքր սափոր-ջրամաններին, որոնք թվագրվում են 12—13-րդ դարերով, իսկ մեր օրինակները՝ 14—15-րդ դարերով, որը ցույց է տալիս խեցեղենի համանման ձևերի և նախշերի հարատևող լինելը:

Պեղումների ժամանակ գտնվել են կավե խուփերի բազմաթիվ բռնակներ, որոնք երկու ձևի են՝ կոնաձև և փոսիկավոր: Այս խուփերի երուստների տեսքը նկատի ունենալով, Կ. Ղաֆադարյանը դրանց տալիս է «մանչ» և «աղջիկ» անվանումները²⁴:

Թանափատ—Գլածոր համալիրի պեղումների ժամանակ գտնվել են նաև ձիթանոցների առանձին բեկորներ ու ամբողջական օրինակներ: Դրանք հիմնականում նավակաձև են: Ձիթանոցների պատրաստման համար օգտագործել են տեղական կավահողը, որի մեջ նկատելի է երկաթի օքսիդի գերակշռությունը: Մինչև հիմա գտնված ձիթանոցների բոլոր օրինակները առանց ջնարակի են: Մեր կարծիքով դա դեռևս ապացույց չէ, որ Գլածորում ջնարակած ձիթանոցներ չեն օգտագործել:

Ձիթանոցները հիմնականում պատրաստված են ձեռքով, միայն մի քանիսի վրա են նկատելի դուրգի հետքերը: Դրանք փոքր են իրենց չափերով, ունեն համեմատաբար կլոր ձև, հարթ հատակ և դեպի ներքև ձգված քիթ (կտուց), որը սովորաբար շատ օգտագործելուց ծխապատված է լինում: Գտնված ձիթանոցներն աչքի չեն ընկնում ոչ իրենց քանակով և ոչ էլ իրենց ձևերի բազմազանությամբ:

Գլածորում գտնված ձիթանոցների թվաքանակը, մեր կարծիքով, առանձին դժվարություն չի ներկայացնում: Դրանք գտնվել են 14—15-րդ դարերին պատկանող շերտից և իրենց զուգահեռներն ունեն ժամանակամերձ համարյա բոլոր հուշարձաններում, որոնք ուսումնասիրվում են ոչ միայն Հայաստանում, այլև ողջ Անդրկովկասի մասշտաբով:

²⁴ Կ. Ղաֆադարյան, Աշխ., էջ 198:


Թանահատ—Գլածորում գտնվել են նաև կավե ծխամորճեր և առանձին բեկորներ: Սրանք պատրաստված են բարձր որակի կավից, շատ նուրբ են և իրենց վրա ունեն առատ դրոշմվածք: Դատելով մեր օրինակներից, կարելի է նշել երեք ձևի ծխամորճեր.

ա) համեմատաբար փոքր գլխիկ, ուռուցիկ կոթուն և բարձր ու հաստ շուրթեր ունեցող ծխամորճեր, որոնց շուրթերի և գլխիկի միացման ներսի մասը ծխելիքի (ծխախոտի կամ այլ ծխելիքի) վառելու հետևանքով առաջացած ածխանման սև նստվածք ունի: Ծխամորճի բաժակի երկու կողմերում միևնույն կնքադրոշմով պատկերված է սկահակ, որի մեջ ոլորուն ձևով պատկերված են ծաղիկներ և ծաղկաթերթեր: Առջևի մասից երկու պատկերների միջև տեղավորված է լոտոսի բացված ծաղիկ իր բողբոջներով: Ծխամորճի այս օրինակը պատրաստված է ձեռքով, բաց գույնի կավից, բայց վրան կան կարմիր ներկի հետքեր:


բ) Մյուս օրինակը պատրաստված է կարմիր գույնի կավից, ունի մեծ գլխիկ, քիչ դեպի վեր բարձրացող շուրթեր: Ծխամորճի ողջ մակերեսը պատված է միևնույն դաջվածքի բազմաթիվ կրկնություններով, որոնց միջև սուր գործիքի օգնությամբ արված են գծազարդեր: Փաստորեն ստացվել է բուսական և երկրաչափական պատկերների մի ամբողջություն, որը շատ հաճելի տեսք է տալիս ծխամորճին:

գ) Հաջորդ օրինակը իրենից ներկայացնում է տափակ գլխիկով, դեպի վեր բարձրացող շուրթերով ծխամորճ: Սա նույնպես պատրաստված է աղյուսակարմիր գույնի կավից, բայց նրա որակը բարձր չէ: Ծխամորճի վրա կան թե կետազարդ, թե փոսիկազարդ և թե երկրաչափական պատկերներ:

Հայաստանի միջնադարյան հնավայրերից ծխամորճեր վերջին տարիներս շատ են գտնվել: Ամենատար խումբը գտնվել է Լոռի քաղաքի պեղումների ժամանակ: Դրանք պահպանվում են Հայաստանի պատմության պետական թանգարանում: Ծխամորճեր գտնվել են նաև Դվինի, Գառնիի, Կամո քաղաքի և Հատինի բնակավայրերի պեղումներից, Բջնիից, Երևանից, Կումայրիից և ուրիշ վայրերից²⁵: Ծխամորճերի թվագրման հարցը բավականին



Նկ. 52. Կավե ծխամորճ:



Նկ. 53. Կավե դաջազարդ ծխամորճերի բեկորներ:

դժվարություն է ներկայացնում: Եթե դրանցով ծխել են միայն ծխախոտ, ապա պետք է թվագրել 16—18-րդ դարերով, կապված Կոլումբոսի հայտնագործության հետ: Բայց Լոռիում և այլուր կատարված պեղումները ցույց են տալիս, որ կավե ծխամորճերը գտնվում են 12—13-րդ դարերից սկսած մինչև ուշ միջնադարի շերտերում: Մենք հակված ենք Գլածորում գտնված ծխամորճերը թվագրել 14—16-րդ դարերով, քանի որ դրանց գտնվելու վայրերից հայտնաբերված զուգահեռ նյութերը այդ դարերին են պատկանում:

ԶՆԱՐԱԿԱԾ ԽԵՅԵՂԵՆ: Թանահատ—Գլածորում կատարված պեղումների ընթացքում հայտնաբերված խեցեղենի մեջ իր ուրույն տեղն ունի ջնարակապատ խեցեղենը: Չնայած վերջինիս հավաքածուն շատ փոքր է, այնուամենայնիվ, նշանակալից հետաքրքրություն է ներկայացնում 12—15-րդ դարերի վանական համալիրի բնակչության կյանքն ու կենցաղն ուսումնասիրելու համար: Այդ հավաքածուում կան պնակների, քրեղանների, փոքր թասերի և այլ խեցանոթների բեկորներ, որոնք պատած են միագույն, իսկ հաճախ՝ բազմագույն ջնարակով:

Գլածորում գտնված ջնարակված խեցեղենը անգորպապատ է: Անգորը սպիտակ կրաշիթո է և արվում է հիմնականում խեցանոթի թրծման հետևանքով երևան եկող աղյուսակարմիր գույնը չեզոքացնելու համար, որպեսզի ջնարակի գույները ավելի վառ երևան²⁶:

²⁶ Բ. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում..., հ. 1, էջ 232:


²⁵ Բ. Առաքելյան, Գ. Կարախանյան, Գառնի 3, էջ 87, Երևան քաղաքի պատմության թանգարանի հնագիտական իրերի կատալոգ, կազմեց Ս. Եսայան, Երևան, 1964, էջ 34—35, 114—124 համարների տակ գրանցվածները, Կումայրիի գավառագիտական թանգարան և այլն: Այժմ Հայաստանում գտնված ծխամորճերի քանակը անցնում է 200-ից:

Անգորբապատ խեցանոթները զարդարվում էին անգորբը հե-
 ոացնելու, գծազարդելու, փորագրելու և այլ եղանակներով: Գծա-
 զարդման եղանակով զարդարված խեցեղենի լավագույն օրինակ
 է հանդիսանում տևտեսական նշանակության կառույցի մեջ գտնը-
 ված ջնարակած քրեղանի մի բեկորը՝ հատակի որոշ մասի հետ
 միասին: Այն ամբողջությամբ պատված է կապտավուն ջնարա-
 կով: Հատակից դեպի շուրթերը բարձրացող կրկնակի գծերի միջև
 ընկած տարածությունը պատել են իրար հետ խաչվող գծազար-
 դերով կամ բուսական պատկերներով: Ստացվել է այնպես, որ
 այն մասերում, ուր գծազարդի հետևանքով առաջացել են փոսիկ-
 ներ, ջնարակը հալվելով կոտակվել է ու առաջացրել առավել մուգ
 գույն, իր շրջապատի բաց կապտավունի համեմատությամբ:

Փորագրման եղանակով է պատրաստված ջնարակած ափսեի
 մի մեծ բեկոր, որը գտնվեց սբ. Ստեփանոս եկեղեցու շրջապատի
 պեղումների ժամանակ: Այս ափսեն պատված է բաց կաթնագույն
 ջնարակով: Կավը կարմրախեցի է, լավ մշակված ու թրծված: Հա-
 վանաբար թրծման ժամանակ չեն ապահովել համապատասխան
 ջերմություն, որովհետև այժմ ջնարակը որոշ տեղերում ճաքեր է
 տվել: Իսկ մենք գիտենք, որ դա կավի մեջ խոնավության որոշ
 տոկոսի պահպանման արդյունք է: Ափսեի ներսի կողմում վար-
